

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԵՐԸ

Հայերի ազգային ինքնագիտակցությունն առաջացել է և հստակվել մի շարք որոշիչ պատմական գործոնների բարդ փոխազդեցության արդյունքում:

Ամենամեծ դերակատարությունն այդ անսովոր վաղ կայացած գործընթացում վերապահված է եղել հայոց լեզվին, հին հայկական պետությանն ու, հատկապես, նրա բանակին:

Հայկական ինքնության հիմնաքարերը դրել ու կերտել են հենց այս երեք ազգային համակարգերը, որոնց քննությանն էլ նվիրված է սույն գրքույկը:



ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱՐԱՏ»
ՌԱԶՄԱՎԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

“АРАРАТ”
ЦЕНТР СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

“ARARAT”
CENTER FOR STRATEGIC RESEARCH



Armen Aivazian

**THE CORNERSTONES OF
ARMENIAN IDENTITY**

**THE ARMY
THE LANGUAGE
THE STATE**

**ОСНОВЫ АРМЯНСКОЙ
ИДЕНТИЧНОСТИ**

**АРМИЯ
ЯЗЫК
ГОСУДАРСТВО**

YEREVAN 2007 ЕРЕВАН

Արմեն Այվազյան

**ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱՔԱՐԵՐԸ**

ԲԱՆԱԿ

ԼԵԶՈՒ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2007

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2 Յ)
Ա 551

Այվազյան, Ա. Մ.

Ա 551 Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու պետություն. – Եր.: Լուսակն, 2007–124 էջ:

Գրքում ամփոփված են հեղինակի 2000, 2001 և 2005 թթ. լույս տեսած ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հայկական ինքնությունը ձևավորած որոշիչ գործոնների քննությանը:

Առաջինում բացահայտվում է հայ զինվորականության գաղափարական և բարոյահոգեբանական արժեքների համակարգը 4-5-րդ դարերում: Համեմատական քննության են ենթարկվում ասպետական, սամուրայական և հայ զինվորական պատվո վարքականոցները ու նրանց հիմնադրույթները: Եզտվում է հայկական զինուժի թվաքանակը հին և միջին դարերում: Վկայակոչվում ու մեկնաբանվում են օտարների տված գնահատականները հայոց մարտական հատկանիշներին ու ռազմարվեստին:

Երկրորդում համեմատական քննությամբ ներկայացվում են հայկական, անգլիական, ֆրանսիական և ռուսական աղբյուրների տվյալները՝ պարզելով այն հանգամանքներն ու ժամանակը, թե երբ և սոցիալ-պատմական ինչ պայմաններում է մայրենի լեզուն դառնում համազգային սիրո և հպարտության առարկա: Հստակեցվում են ազգայնականության, հայրենասիրության և ազգայնամոլության նշանակությունները և նրանց միջև եղած տարբերությունները:

Երրորդում բացահայտվում են հին հայոց ինքնության լրացուցիչ տարրերը, ցուցադրված է, որ Հին Հայաստանում առկա էին եվրոպական ազգայնականությանը բնորոշ կարևոր տարրերից շատերը: Եզրակացված է, որ հայկական ինքնությունը կայացած էր առնվազն Բ.ա. 1-ին հազարամյակում:

Ա 0503020913
----- 2007 ԳՄԴ 63.3 (2Յ)
0150(01)-2007

ISBN 978-99941-48-45-5

© «Լուսակն» հրատ.

Երկու խոսք

Հայերի ազգային ինքնագիտակցությունն առաջացել է և հստակվել մի շարք որոշիչ պատմական գործոնների բարդ փոխազդեցության արդյունքում: Այսուամենայնիվ՝ ամենամեծ դերակատարությունն այդ անսովոր վաղ կայացած գործընթացում վերապահված է եղել հայոց լեզվին, հին հայկական պետությունն ու, հատկապես, նրա բանակին: Հայկական ինքնության հիմնաքարերը դրել ու կերտել են հե՛նց այս երեք ազգային համակարգերը, որոնց քննությանն էլ նվիրված է սույն գրքույկը:

Առհասարակ, որևէ ժողովրդի ազգային ինքնագիտակցության ծագման և ինքնության ձևավորման ուսումնասիրությունը բարդագույն խնդիր է, որովհետև այն պետք է կատարվի ոչ թե նեղ մասնագիտական, այլ միջառարկայական մոտեցմամբ՝ պատմագիտության, բանասիրության, ազգագրության, էթնիկ հոգեբանության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության տվյալների ու նորագույն տեսությունների համադրումով:

Բայց հայոց ինքնագիտակցության և ինքնության գիտական հետազոտումն ունի նաև լրացուցիչ, յուրահատուկ բարդություններ, որովհետև խոսքը վերաբերում է վաղնջական ժամանակներում տեղի ունեցած հասարակական երևույթներին, հետևաբար՝ առկա է պատմական տվյալների խիստ սակավություն¹, որը հետազոտողից պահանջում է պահպանված բացառիկ փաստերի ծայրաստիճան մանրակրկիտ վերլուծություն՝ ընդհուպ մինչև յուրաքանչյուր բառն ու տառը:

Մեկ ուրիշ բարդ խնդիր էլ առաջադրում է հայոց պատմութեան բազմադարաշրջանութունը: Բանն այն է, որ դադափարաբանութունների և հասարակական մտայնութեան հետազոտութունը պարտադրաբար նախատեսում է հնարավորինս լայն ժամանակահատվածի ընդգրկում, իդեալական տարբերակում՝ սկզբից մինչև մեր օրերը:

Որքան էլ հետագա դարերի ընթացքում քաղաքական, սոցիալ-տնտեսական, բնական և այլ խոշոր իրադարձութունները զանազան ձևափոխումներ (ու ձևախեղումներ) են առաջացրել հայերի ազգային բնավորութեան, աշխարհընկալման ու մտայնութեան մեջ, այդուամենայնիվ՝ նրանց ինքնութեան առաջին, սկզբնապես կերտված շերտերը ոչ միայն պահպանվել են, այլև շարունակում են մնալ այդ ինքնութեան բուն և իրականում միակ հիմքը: Իսկ մյուս շերտերը, թեև հաճախ ավելի տեսանելի լինելով, ընդամենը պատմահոգեբանական վերնակառուցյուններ են, անկախ նրանից՝ ներհատուկ են հայերին դրանք, թե՞ ներմուծված-պարտադրված, հաջող՝ թե՞ անհաջող, ճիշտ՝ թե՞ սխալ: Վերնակառուցյունները կարելի է քանդել, ավերել, վերանորոգել կամ վրան նոր հարկեր ավելացնել, բայց հիմքից հրաժարվել, այն փոխել՝ այլևս հնարավոր չէ. այն կարելի է միայն ճանաչել՝ հատագծի բոլոր՝ ուժեղ և թույլ մանրուքներով, որպեսզի կառուցվածն ու կառուցվելիքը լինեն ամուր և անսասան²:

Արմեն Այվազյան,
քաղաքական գիտութունների դոկտոր
«Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

¹ Հատկապես, եթե համեմատենք եվրոպական ազգերի ինքնագիտակցության առաջացման ժամանակաշրջանի՝ 16-20-րդ դարերի մասին պահպանված համապատասխան առատ փաստազրական նյութի հետ:

² Գրքույկում գետեղված ուսումնասիրություններից յուրաքանչյուրը ներկայացնում է մի առանձին գլուխ՝ «Հայկական ինքնության կազմավորումը» տակավին անավարտ մեր մենագրությունից, որի վերջնական պատրաստումը, մեզանից անկախ պատճառներով, ուշանում է: Աստ գետեղված հետազոտությունները լույս են տեսել, հաջորդաբար, 2000, 2001 և 2005 թվականներին, հետագայում քանիցս վերահրատարակվելով (նաև թարգմանաբար):

Ա. *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)*: Երևան, «Արտագերս» հրատ., 2000, 48 էջ: *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)*: Երևան, «Արտագերս» հրատ., 2000, 48 էջ: Ուսումնասիրությունը (բացառությամբ ծանոթագրությունների) վերահրատարակվել է հետևյալ գրքում՝ *Հայրենիք և ծառայություն*: Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպաների և ենթասպաների հասարակական-պետական պատրաստվածության համար: Պատ. խմբագիր՝ Վահագն Մուղնեցյան: Երևան.: «Ոսկան Երևանցի», 2001, էջ 548-562. Ուսումնասիրության համառոտ տարբերակը հրատարակվել է ՀՀ Պաշտպանության նախարարության *Հայկական բանակ* ռազմագիտական հանդեսում, No. 3 (25), 2000, էջ 52-61 և «Արժանապատիվ մարդու» հայեցակարգը և ազգի ձևավորման գործընթացը» խորագիրը կրող «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագրի հատուկ թողարկումում, No. 2, 2006, էջ 22-44, իսկ ռուսերենով՝ «Кодекс чести армянского воинства (4-5 вв.), *Голос Армении*, 1 февраля 2001 г., Армянский Вестник (Москва, No. 1-2, 2002, с. 101-106) և *Louys* (biweekly magazine, Los Angeles, June 2002, No. 3/151) հանդեսներում:

Բ. *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը. Հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն* (Երևան, Մատենադարան, «Արտագերս» հրատ., 2001), 60 էջ: «Ազգային լեզվի պաշտամունքը և հայկական, անգլիական, ֆրանսիական ու ռուսական ազգայնականության սկզբնավորման ժամանակը (համեմատական քննություն)» - *Էջմիածին*, No. 4, 2000, էջ 98-115: “Mother Tongue and The Origins of Nationalism: A Comparative Study of the Armenian and European Primary Sources,” *Armenian Folia Anglistika* (International Journal of English Studies), No. 1 (2), 2006, pp. 123-131.

Գ. «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն», *Էջմիածին* (պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսության), No. 5 (մայիս 2005), էջ 123-138:

Առաջին երկու ուսումնասիրություններն, առանձին գրքույքներով հրատարակվելուց հետո, լույս են ընծայվել նաև միասին՝ *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)*: *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը*: Երևան, 2004, «Լուսակն» հրատ., 2004, 100 էջ:

*Ընկերոջս՝
Տիգրան Արծրունի Մուրադյանի
հիշատակին*

**ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ
ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ
(4-5-րդ դարեր)**

Հայաստանի ուղղմական պատմության չուսումնասիրվածությունը

Հայկական քաղաքակրթության ավելի քան չորսհարյուրամյա պատմության մեջ ազգային զինված ուժերն ունեցել են կենտրոնական և վճռորոշ դերակատարում, որը, ցավոք, դեռևս ըստ արժանվույն հետազոտված և գնահատված չէ: Տարբեր դարաշրջաններում հայոց զորքերի թիվը, կառուցվածքը, զենքն ու զինամթերքը, պաշտպանական ամրաշինությունների համակարգը, ռազմարվեստը կարող են խոր և բազմակողմանի ուսումնասիրության: Մասնավորապես, հին և միջնադարյան Հայաստանի զինված ուժերը չեն ուսումնասիրվել ռազմական հոգեբանության և սոցիոլոգիայի տեսանկյունից, այնինչ այդ ոլորտում հետազոտությունների անցկացումը թելադրվում է ոչ միայն զուտ ակադեմիական-կրթական նպատակներով, այլև կիրառական մեծ նշանակությամբ՝ վերածնված հայկական բանակի ընթացիկ շինարարությունը ազգային հաստատուն և ճիշտ հիմքի վրա դնելու առումով:

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու 4-5-րդ դարերի հայ զինվորականության գաղափարական և բարոյահոգեբանական արժեքների համակարգը*:

Հայ ուղղմակի գաղափարախոսության ելակետը

Հայաստանի անկախության ամենաեռանդուն շատագույն ու պաշտպանը միշտ եղել է հայ զինվորականությունը: Պատահական չէ, որ, օրինակ, 5-8-րդ դարերում օտար տիրապետության դեմ ազատագրական պատերազմներն առաջնորդել են հայոց զորքի գլխավոր հրամանատարները՝ Մամիկոնյան սպարապետները. 450-451, 481-484, 571-572թթ.՝ Պարսկաստանի, 548թ.՝ Բյուզանդիայի, 747-753, 772-775թթ.՝ Արաբական խալիֆայության դեմ: Հայ մատենագրությունը հարուստ նյութ է պահպանել հայ զինվորականության և հայոց բանակի գաղափարախոսությունը լուսաբանելու համար:

Քննությունն սկսենք այն պատգամ-հրահանգներից, որ սպարապետ Մանվել Մամիկոնյանը (ծն. թ. անհայտ-մահ. 384թ.) տվել է իր որդի Արտաշիրին՝ «զտէրութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարութեանն իւրոյ» նրան հանձնելու պահին.

եվ պատվիրեց նրան... «պատերազմի՛ր և անձը քո զոհի՛ր հանուն Հայոց աշխարհի, ինչպես քաջ նախնիներդ են այս աշխարհին սիրահոժար զոհաբերել իրենց կյանքը»¹:

Հայոց զորքերի գլխավոր հրամանատարի՝ հանուն հայրենիքի անձնագոհության դիմելու գաղափարական այս պատվիրանն իրականում հայ զինվորականության գաղափարական-քարոզչոգեբանական պրոֆեսիոնալ արժեհամակարգի և պատվո վարքականոնի (կոդեքսի) մաս է կազմել²:

Մանվել Մամիկոնյանն ինքը ողջ կյանքի ընթացքում առաջնորդվում էր նույն այդ ուղենիշ-պատվիրանով: Այսպես՝ երբ նա արդեն անբուժելի վիճակում պառկած էր անկողնում, և նրա շուրջն էին հավաքվել թագավորն ու թագուհին, նախարարները, տղամարդ ու կին, Մանվելը մերկանում է և ցույց տալիս Հայաստանի անկախությունը պաշտպանելու համար մղված պատերազմներում իր ստացած բազմաթիվ վերքերը.

Դրամի մեծության չափ ողջ տեղ չէր մնացել նրա մարմնի վրա, այլ խոցված էր պատերազմների մեջ և ավելի քան հիսուն սպի ուներ ստացված վերքերից, նույնիսկ՝ իր առնանդամի վրա. անգամ այն բանալով ցույց տվեց բոլորին³:

Անձը հանուն հայրենիքի զոհելու ճիշտ նույն գաղափարն իր Հայոց պատմության ողջ շարադրանքի ընթացքում քարոզում է նաև Մովսես Խորենացին, օրինակ՝ հայ ռազմիկ-թագավոր Արամի մասին հետևյալ հատվածում.

Սա, աշխարհասեր և հայրենասեր մարդ լինելով,... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարա-

ծինների որդիք ոտնակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտար մարդիկ տիրում են իր արյունակից հարազատների վրա⁴:

Հայ զինվորականության պատվո վարձականոնի հիմնադրույթները

Հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգը դասակարգելու նպատակով ստորև առաջարկվում է Փավստոս Բուզանդի Հայոց պատմության Ե դպրության 20-րդ գլխի պատմական-կառուցվածքային իմաստաբանական վերլուծությունը⁵: Փավստոսն ինքն ահա այսպես է ստորակարգել սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի (ծն. թ. անհայտ-մահ. 376թ.) անձնական առաքինությունները և հայրենիքին մատուցած ծառայությունները (տեքստի իմաստային բաղադրամասերը համարակալել ենք - Ա.Ա.).

Հայոց Մուշեղ սպարապետի մասին

Հայոց քաջ գորավարը և սպարապետը (Մուշեղը) իր ամբողջ կյանքում լի էր մեծ եռանդով և նախանձախնդրությամբ,

(1) նա հավատարմությամբ ու արդար վաստակով, ջանասիրությամբ ու մշտապես ծառայում էր Հայոց աշխարհի և թագավորության համար: Զօրուգիշեր նա գործի մեջ էր. ջանում ու ճգնում էր պատերազմի ճակատներում, և երբեք թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից գեթ մի կորու չափ հող օտարվի⁶: Նա կյանքն էր դրել իր երկրի համար.

(2) և կմեռներ քաջի անվան համար,

(3) իր բնիկ տերերի համար,

(4) իր երկրի բնակիչների համար,

(5) քրիստոնեական հավատի համար,

(4.1 և 5.1) Աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար,

(5.2) եկեղեցիների համար,

(5.3) և նրանց սրբազան սպասների համար,

(5.4) Քրիստոսի վկայարանների համար,

- (5.5) Աստծու ուխտի համար,
- (6) իր քույրերի և եղբայրների համար,
- (7) իր մերձավոր տոհմակիցների համար,
- (8) հանուն հավատարիմ և առաքինի այն բարեկամների, [որոնք] զորավար Մուշեղի [հետ] մշտապես եղել են հերոսական կռիվների մեջ և կյանքը զոհաբերել հայրենիքի համար⁷։
- (2.1) Եվ մահն արհամարհելով
- (3.1) իր կյանքի բոլոր օրերում ծառայում էր իր բնիկ Արշակունի տերերի համար⁸։

Վերը Բուզանդը փաստորեն մեկ առ մեկ թվարկում է հայ զինվորականի՝ Հայաստան պետության և հայ ազգի առջև ստանձնած գլխավոր հանձնառությունները (commitments): Հենվելով այս արժեքավոր տվյալների վրա, ըստ Փավատոսի նշած կարևորության և առաջնակարգության, ստորև ներկայացնում ենք 4-5-րդ դարերի հայ զինվորականության պատվո վարքականոնի գլխավոր դրույթները.

1. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն անկախ Հայաստան աշխարհին, երկրին ու թագավորությանը:
2. Ասպետական պատվի և համարումի («ֆաշի անվան») անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով:
3. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի պետական համակարգի ամենակարևոր նվիրագործված հաստատությանը՝ Հայաստանի թագավորին (Արշակունի «բնիկ տերերին»):
4. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի ժողովրդին, բոլոր բնակիչներին անխախտ՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:
5. Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցունկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:
6. Նվիրվածություն ընտանիքին:
7. Նվիրվածություն տոհմակիցներին:
8. Հավատարմություն զինակիցներին:

Այսպիսով Փավստոսի Հայոց պատմության Ե դպրուխդան 20-րդ գլուխը բավական ամփոփ և հստակ վկայաբերում է 4-5-րդ դարերի հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգը, որը բաղկացած էր Արշակունյաց Հայաստանում արտոնված, կենսագործվող և քարոզվող պետական գաղափարախոսությունների ամենակարևոր տարրերից: Այս գաղափարական-բարոյահոգեբանական արժեքները կոչված էին դաստիարակելու հատկապես սպայակույտի շարքերը համալրող պատանիներին հայկական բանակի ելակետային նպատակների և ավանդական վարքուբարքի համաձայն, ինչպես նաև ընդգծելու հայրենիքի և ժողովրդի առջև հայ ռազմիկի ունեցած պարտականությունները:

Այս դրույթներն այնքան էին արմատավորված հայ զինվորականության մտայնության և վարքագծի մեջ, որ դարեր անց էլ նույնությամբ պահպանվել և կյանքի են կոչվել բազմաթիվ այլ ազատագրական պատերազմների առիթով: Օրինակ, 775թ. ապրիլի 25-ին, Արձնի գյուղի մոտ, արաբական վեցապատիկ գերակշիռ ուժերի դեմ անհավասար ճակատամարտի մեջ մտնելով, հայ ռազմիկները դարձյալ ոգեկոչում էին հայ զինվորականության ավանդական պատվո վարքականոնի մեզ արդեն ծանոթ դրույթները. Ղևոնդ պատմիչի վկայությամբ՝ նրանք

քաջալերում էին միմյանց այսպիսի խոսքերով «քաջությամբ մեռնենք հանուն մեր աշխարհի և հանուն մեր ազգի, ու թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբարանների և մեր Աստծու փառավորման վայրերի ոտնակոխ լինելն ու պղծվելը, այլ նախ՝ թշնամյաց սուրբ թող մեր դեմ ուղղվի, ապա միայն թող լինի այն, ինչ կկամենան»⁹:

Զուգահեռներ սամուրայական, ասպետական ու հայ զինվորական վարժականոնների միջև

Սակայն վերադառնանք հայ զինվորականության պատվո վարքականոնի բաղադրամասերի քննությանը: Վերն առանձնացված 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դրույթները նկատելիորեն

նման են միջնադարյան եվրոպացի ասպետների և ճապոնական սամուրայների պատվո վարքականոններում եղած տարրերին:

Այսպես՝ 1716թ. ավարտած իր հռչակավոր Հագակուրե (բառացի՝ «Տերևներում թաքնվածը») երկում, ընդարձակորեն արտահայտելով և մանրագնին մշակման ենթարկելով ճապոնական սամուրայի պատվո վարքականոնը (Բուսիդոն, բառացի՝ ուղիղ ճանապարհ), Յամամոտո Յունետոմոն (ծն. 1659թ.- մահ. 1719թ.)¹⁰ նմանապես շեշտում էր ուղիղ համար մահն արհամարհելու անհրաժեշտությունը: Հագակուրե-ում ասվում է.

Բուսիդոն՝ ուղիղ ճանապարհը, նշանակում է մահ: Երբ ընտրություն կատարելու համար ունես ընդամենը երկու ճանապարհ, անմիջապես ընտրիր այն, որը տանում է դեպի մահ: Մի՛ խորհիր: Ուղիղ միտքդ այն ճանապարհի վրա, որին նախապատվություն տվեցիր, և գնա՛:

Ակամայից հարց է առաջանում. «Ինչո՞ւ ես պետք է մեռնեմ, եթե դա օգտավետ չէ, ինչո՞ւ պետք է կյանքով վճարեմ հանուն ոչնչի»: Սրանք եսասեր մարդկանց սովորական դատողություններ են: Երբ պետք է ընտրություն կատարես, թույլ մի՛ տուր օգուտի մասին մտքերին տատանել խելքդ: Քանի որ մենք բոլորս էլ ապրելը նախընտրում ենք մեռնելուն, այդ նախընտրությունն էլ հենց որոշում է մեր ընտրությունը: Մտածիր քեզ սպասող անպատվության մասին, երբ դու, ձգտելով օգուտի, հանկարծ կսխալվես: Մտածիր այն մարդու թշվառ ճակատագրի մասին, որն իր նպատակին չի հասել և դեռ շարունակում է ապրել...

Հիշի՛ր, մահդ չի գցում քո արժանապատվությունը: Մահը չի պատվազրկում:

...Պարտքի կատարումդ պետք է լինի անթերի, իսկ անունդ՝ անբիծ:

...Ռազմիկը յուրացնում է սամուրայի ուղին այն ժամանակ միայն, երբ նա արդեն մշտապես պատրաստ է լինում մահվան:

...Սամուրայը պարտավոր է տալ իր իշխանին իր հոգին և մարմինը: Բացի այդ, նա պետք է լինի իմաստուն, գթասիրտ և քաջ:

...Ուր էլ որ ես գտնվեմ՝ խուլ սարերում թե գետնի տակ, միշտ և ամենուր իմ պարտքը պարտավորեցնում է ինձ պաշտպանել տիրոջս շահը: Դա բոլոր նրանց պարտքն է, ովքեր նաբեսիմայի հպատակն են: Դա մեր կրոնի ողնաշարն է՝ անփոփոխ և հավերժ... Նույնիսկ մեռնելուց հետո ես յոթն անգամ հարուժյուն կառնեմ, որպեսզի դժբախտություններից պաշտպանեմ իմ տիրոջ տունը:

Ես երգվում եմ կատարել շորս պատվիրան.

1. Պարտքը կատարելիս՝ ոչնչի առջև չընկրկել:
2. Օգտակար լինել իմ տիրոջը:
3. Ծնողների հանդեպ լինել հարգալից:
4. Կինել գթասիրտ¹¹:

Ուշագրավ է, հատկապես, Արշակունյաց շրջանի հայ գինվորականի և ճապոնացի սամուրայի պատվո վարքականոններում եղած միևնույն այն պահանջը, որը կյանքից վեր է գնահատում պատիվն ու հավատարիմ ծառայությունը գերակային (սյուզերենին, «տիրոջը»): Այս առթիվ Փավստոսն ունի պերճախոս մի քանի այլ տեղեկություն ևս: Դրանցից մեկը վերաբերում է Պարսկաստանում պատահած մի դեպքի.

Ապա պատահեց այս օրերից մեկում, որ Հայոց Արշակ թագավորը մտավ Պարսից արքայի ախոռներից մեկը, իսկ Պարսից արքայի ախոռապետը նստած էր ներսը՝ ախոռում: Երբ նա թագավորին տեսավ, ոչ մի մեծարանք կամ ողջույն չտվեց և նրան անուշադրություն մատնեց ու դեռ ավելին՝ ծաղրեց և անարգանքի ենթարկեց նրան՝ ասելով. «Այժ հայերի թագավոր, եկ այս խոտի խուրձի վրա նստիր»:

Երբ այս խոսքերը լսեց Մեծ Հայքի զորավար և սպարապետ Վասակը, Մամիկոնյան տոհմից, սաստիկ բարկացավ ու զայրացավ և, քաշելով իր սուրբը, որ կախած էր մեջքից, հարվածեց, տեղնուտե-

ղը նույն ախոռի մեջ էլ գլխատեց պարսից արքայի ախոռապետին, որովհետև չկարողացավ լսել ու կուլ տալ իր թագավորի անարգումը. նա բազում անգամ ավելի լավ էր համարում իր անխուսափելի մահը, քան իր տիրոջ հասցեին որևէ վիրավորանք կամ անարգանք լսելը (ընդգծումն իմն է՝ Ա.Ա.)¹²:

Ճապոնական «Հագակուրե»-ի սամուրայ հեղինակի՝ մահվանից չերկնչելու և անբիծ քաջի անուն ունենալու մասին կոչերը գրեթե նույնությամբ արտաբերում է Մանվել սպարապետը՝ վերն արդեն մասամբ վկայակոչված իր պատգամում, որն այժմ հարկ է մեջբերել ավելի ընդարձակորեն.

Եվ պատվիրեց նրան հնազանդ և հպատակ լինել Արշակ թագավորին, լինել ազնիվ, տքնաջան և աշխատասեր. «Եվ պատերազմի՛ր և անձը քո գոհի՛ր հանուն Հայոց աշխարհի, ինչպես քաջ նախնիներդ են այս աշխարհին սիրահոժար գոհաբերել իրենց կյանքը: Որովհետև,- ասաց,- դա շատ արդար և Աստծուն ընդունելի գործ է, ու եթե այդպես վարվեք, Աստծված ձեզ անտես չի անի:

Երկրի վրա քաջի անուն թողեք և արդարությունը երկնքին ընծայեք: Եվ մահից ամենևին մի վախեցեք, այլ հույսը դրեք նրա վրա, ով ամեն ինչ ստեղծել և հաստատել է: Ձեզնից դուրս վանեք նեղությունը, պղծությունը և շարությունը և Տեր Աստծուն պաշտեցեք մաքուր սրտով ու հավատարմությամբ: Համարձակ մեռե՛ք հանուն աստվածապաշտ [Հայոց] աշխարհի, որովհետև հենց ա՛յդ մահն է Աստծու համար, նրա եկեղեցիների և նրա ուխտի, այս աշխարհի բնիկ տերերի՝ Արշակունիների համար»¹³:

Այս հատվածը շատ պարզ ցույց է տալիս, թե հայ հրամանատարներն ինչ հմտությամբ և հավատով են օգտագործել քրիստոնեական ուսմունքն իբրև մարտաշունչ գաղափարախոսություն՝ Հայաստանի ազատության համար մղվող գրեթե անընդմեջ պատերազմներում: «Հայաստանի համար զոհվելը հենց Աստծո՛ւ համար է», քարոզում էին Մանվել սպարապետը և, անշուշտ, 4-րդ դարի հայոց մյուս զորահրամանատարները («ի վերայ աստուածապաշտ [Հայոց] աշ-

խարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է»): Սրանով նրանք ներդաշնակութեան էին բերում հայ զինվորի շատ ավելի հին շրջանում ձևավորված և անթիվ մարտերի մեջ սրբագործված պատվո վարքականոնը (մասնավորապես, հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելու գաղափարական գլխավոր դրույթը)՝ հարաբերականորեն նոր ձեռք բերված քրիստոնեական հավատի և կրոնական զգացմունքների հետ: Հայրենիքի համար մեռնելը աստվածահաճո գործ լինելու նույն այս հավատով հայ քրիստոնյա ռազմիկը մարտնչեց հետագա բոլոր դարերում:

Մանվել սպարապետի ևս մի պատգամը՝ «լինել ազնիվ, տքնաջան և աշխատասեր», նույնպես համընկնում է սամուրայի վարքականոնի հետ: «Հագակուրե»-ն, օրինակ, պահանջում էր նույնը.

Մարգելով իրեն՝ զինվորը երբեք չպետք է մտածի հանգստի մասին:

...Մարդու մարգմանը վերջ չկա: Կինում է այնպես, որ սկսում ես զգալ բեզ կատարելության հասած և դադարում ես զբաղվել նրանով, ինչով զբաղվում էիր մինչ այդ: Մինչդեռ նա, ով ուզում է կատարյալ լինել, պետք է միշտ հիշի, որ ինքը դեռ շատ հեռու է դրանից:

...եղեք ճշմարտասեր զինվորական ծառայության մեջ: Կեղծ մարդիկ երբեք չեն կարող ազնվորեն ծառայել զենքին¹⁴:

Եվրոպայում ասպետները (անգլերեն՝ *knight*, գերմաներեն՝ *ritter*, որից էլ ռուսերեն՝ *рыцарь*), որպես առանձին ռազմավատաստիրական խավ, ձևավորվել են 8-րդ դարի վերջերից: Այս խավի գործունեությունն ու սոցիալական նշանակությունն առավել ցայտուն արտահայտվեցին խաչակրաց արշավանքների ժամանակ՝ 11-14-րդ դարերում: Ասպետները մեկ ընդհանուր օրինականացված գրավոր վարքականոն չեն ունեցել¹⁵, սակայն նրանց աղոթքների և պահպանված զանազան աշխատությունների ու տեքստերի հիման վրա մասնագետներն առանձնացնում են ասպետական վարքագծի հետևյալ պարտադիր պահանջները. հավատարմություն գերակային, անվեհեր քաջություն, վտանգների և դժվարու-

թյունների արհամարհում, քրիստոնեական եկեղեցու և նրա պաշտոնյաների պաշտպանություն, օժանդակություն ասպետական տոհմերի որբացած և տկար անդամներին, առատաձեռնություն, Աստուծու և մարդկանց առջև անբիծ կյանքի վարում¹⁶: Եվրոպացի ասպետը, քրիստոնյա հայ զինվորականի պես, հավատացած էր, որ հոգին կարելի է փրկել պատերազմելով ու նահատակվելով հանուն արդար նպատակի, օրինակ, անհավատների դեմ կռվում, կամ իր տիրոջ շահերը, թուլլին, իր սեփական պատիվն ու ժառանգությունը պաշտպանելիս: Ասպետական վարքականոնի այս նույն միտքը գեղեցիկ է արտահայտել ավելի ուշ շրջանում անգլիացիների դեմ կռված Ֆրանսիացի կապիտան և բարոյախրատական գրքի հեղինակ ժան դը Բյուլին. «Մենք՝ խոնարհ զինվորներս, նույն հաջողությունամբ կփրկենք մեր հոգիները զենքի միջոցով, քան եթե ապրեինք՝ մտորելով եղելության արմատների և կարգի մասին»¹⁷:

Դժվար չէ նկատել, որ այս բարոյահոգեբանական պահանջները, ինչպես և Բուսիդոն-ն, մասամբ համընկնում են 4-5-րդ դարերում հայ զինվորականության ունեցած վարքականոնի հետ:

Հայ ռազմիկի բարոյահոգեբանական արժեհամակարգի առանձնահատկություններն ու նյութավորումները

Սակայն ամենահետաքրքիրն այն է, որ 4-5-րդ դարերի հայ զինվորականության արժեհամակարգն արտացոլող վերոբերյալ սանդղակի 1-ին և 4-րդ դրույթները շեշտակիորեն տարբերվում են մեզ հայտնի եվրոպական և ճապոնական ավատատիրական-զինվորական արժեհամակարգերից՝ ներկայացնելով հին և միջնադարյան ժամանակների համար արդարև արտասովոր առաջնակարգություն: Այսպես՝

ա) ըստ 1-ին դրույթի՝ հայ հրամանատարի ստանձնած առաջնային ու գլխավոր հանձնառությունը Հայաստան աշխարհին և թագավորությանը ծառայելն էր,

բ) ըստ 4-րդ դրույթի՝ հայ ազնվական զինվորականը ամբողջ հայ ժողովրդին (հասարակական բոլոր խավերն ու դասերը ներա-

ոյալ) ծառայել-պաշտպանելը համարում էր, զարմանալիորեն, ավելի կարևոր ու առաջնային, քան իր պատվո վարքականոնի 5-ից 8-րդ դրույթներով ամրագրված հանձնառություններն ընտանիքի, տոհմի, զինակիցների և նույնիսկ քրիստոնյա հավատի և եկեղեցու հանդեպ: Ավելի ստույգ՝ ընտանիքը, տոհմը, զինակիցները, քրիստոնյա եկեղեցին, որպես առանձին մասնիկներ, բոլորն էլ մտնում էին հայ ազգ-ժողովուրդ հասկացության մեջ: Ավելին՝ Հայաստանի քրիստոնյաներն ու հայ ժողովուրդը նույնն էին և նույնացվում էին, իսկ եկեղեցին ընկալվում էր որպես հայկական ազգային կառույց: Ինչպես ասվեց, ո՛չ ճապոնացի սամուրայի, ո՛չ էլ եվրոպացի ասպետի արժեհամակարգերն այսպիսի առաջնակարգություն բնավ չեն ճանաչել:

Մեկ այլ պատմական զուգահեռ. Հայաստանի հարևան Բյուզանդիայում հայրենասիրական զգացմունքները և բուն «հայրենիք» բառն առաջ են եկել միայն 10-րդ դարում¹⁸, մինչդեռ 5-րդ դարի հայկական սկզբնաղբյուրները վկայում են, որ հայ իրականության մեջ արդեն այդ ժամանակ ու դրանից էլ շատ ավելի վաղ գոյություն է ունեցել Հայաստան-հայրենիքի հստակ և սուր գիտակցություն: Ավելի հաճախ հայրենիք հասկացությունն արտահայտված է «Հայոց աշխարհ՝ երկիր՝ Թագավորություն» եզրերով, բայց և, ինչպես Խորենացու վերը մեջբերված հատվածում նաև բուն «հայրենիք» եզրով՝ «Սա այր աշխարհաստե և **հայրենաստե** եղեալ... լաւ համարեալ զվեռանելն ի վերայ **հայրենեացն**, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով **զսահմանս հայրենեացն** և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց» (ընդգծումն իմն է):

Փավստոսի երկի մեջ կան հայ զինվորականության արժեհամակարգի դրույթները հաստատող և լրացնող զուգահեռ այլ դրվագներ ևս, սակայն դրանք, ի տարբերություն Մուշեղ Մամիկոնյանին նվիրված առանձին գլխի, ավելի համառոտ են, հպանցիկ և չդասդասված¹⁹: Ահա այդպիսի մի նմուշ.

Եվ այդ ժամանակ Վասակ զորավարի ձեռքի տակ գտնվեց գործի պատրաստ վաթսուն հազար ընտիր և կովաշունչ ռազմիկ, որոնք միակարծիք, միասիրտ ու միաբան էին պատերազմական գործում, տենչում էին մարտնչել իրենց որդիների և կանանց համար, նաև՝

կյանքը զոհել հանուն իրենց հայրենիքի ու նրա բնակեցված գավառների, տենչում էին մարտնչել հանուն իրենց եկեղեցիների, հանուն իրենց սուրբ եկեղեցիների պաշտոնյա դասի, հանուն իրենց հավատի և Աստծու, հանուն իրենց բնիկ Արշակունի տերերի²⁰ :

Հայ զինվորի արժեհամակարգի Թ-րդ կետը նվիրվածությունն ընտանիքին, միահյուսվելով հայրենիքի հետ նրա կապվածությունը, լավ է բացահայտված Փավստոսի Հայոց պատմության մեկ այլ դրվագում: Նկարագրելով Հայաստանից դուրս եկած և Մծբինի մոտ հոռմեական բանակի առջև ճամբար դրած հայկական բանակի հոգեվիճակը՝ Փավստոսը պատմում է, որ ուշացած դաշնակից պարսիկներին սպասելու միջոցին հայ զինվորները խիստ անհամբերություն են ցուցաբերել և հայոց Արշակ թագավորից պատերազմը միայնակ սկսելու թույլտվություն հայցել: Փավստոսը սա բացատրում է նրանով, որ հայ զինվորները «տանջվում էին օտար աշխարհում, նախընտրում էին մեռնել, քան օտար աշխարհում ժամանակ քարշտար» [յօտար աշխարհին առաւել մղձկէին, զի լաւ հաշուէին զմեռանելն առաւել քան զյամելն յօտար աշխարհին]²¹:

Քիչ անց, ավելի հստակեցնելով, Փավստոսը բացատրում է Արշակ թագավորի և, առհասարակ, ողջ հայկական բանակի այսպիսի վարքագիծը հայերի ազգային բնավորությունը.

Իսկ Արշակ թագավորը և ամբողջ իր զորքը տաղտկալի էին համարում այդքան հեռու ճանապարհ գնալը, որովհետև նրանցից յուրաքանչյուրը, Հայաստանի մարդու բնական սովորությունը, կարոտել և ցանկանում էր իր տունն ու տեղը²² :

Հայ զինվորականության պատվո վարքականոնն ունեցել է այլևայլ ճյուղավորումներ: Նշենք դրանցից երկուսը: Նախ՝ արժեհամակարգի դրույթների խախտումն արժանանում էր դաժան պատժի: Օրինակ՝ ձերբակալելով դավաճանած հրամանատար-նախարար Դատաբեն Բզնունուն՝

բերեցին Խոսրով Մեծ թագավորի առջև, քարկոծեցին, քարասպան արին իբրև մի մարդու, որ դավաճանել էր իր հայրենիքին, իր գնդին և իր տիրոջ զորքերին²³ :

Միջնադարյան եվրոպական ու ճապոնական ասպետական վարքականոնների հետ համընկնող մի այլ դրույթ. հայ զինվորականությունը մահվան իդեալական եղանակ էր համարում կռվի դաշտում զոհվելը: Այսպես՝ մահվան մահճում Մանվել սպարապետը դառնորեն արտասվում և ասում է (այս դրվագում Փավստոսը մեկ անգամ ևս տալիս է հայ զինվորականի հասարակական հանձնառությունների առաջնակարգության սանդղակը, որտեղ անձնվեր ծառայությունը հայրենիքին դարձյալ առաջին տեղում է):

Սկսեց լալ և ասել. «Մանկությունից ի վեր պատերազմների մեջ եմ մեծացել և մեծ քաջությամբ ամեն տեսակի վերք ստացել մարմնիս²⁴, և ինչո՞ւ մահն ինձ պատերազմում չպատահեց, քան թե այսպես անասունի նման մեռնեի: Որքա՞ն լավ կլինեք, եթե պատերազմի մեջ մեռնեի հայրենիքի համար, որպեսզի եկեղեցիներն ու Աստու ուխտի պաշտոնյաները ոտնակոխ չլինեին: Ո՛ւր է թե ինձ վիճակվեք մեռնել մեր երկրի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդիների համար, մեր աստվածապաշտ մարդկանց և եղբայր-ընկերների (այսինքն՝ զինակիցների- Ա.Ա.) և մտերիմ բարեկամների համար: Թեպետ և շատ հանդուգն էի ինձ պահում, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած²⁵ :

Նույն ցավն ու շիրականացած ցանկությունն է հայտնում նաև Մուշեղ Մամիկոնյանը. «Բայց երանի թե այս մահը ձիու վրա ինձ հասներ» [Բայց իբրև եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր]²⁶:

Վերն արդեն նշվեց, որ հայ ռազմիկի պատվո վարքականոնը գոյություն է ունեցել Փավստոսի պատմած ժամանակից՝ 4-րդ դարից շատ ավելի վաղ շրջանում: Բնական է, եղել են որոշ տարբերություններ, որոնք դեռևս առանձին քննության կարիք ունեն, սակայն այդ վարքականոնի գլխավոր դրույթները, մասնավորապես՝ հայրենիքի, ընտանիքի, գերակայի, սուրբ վայրերի, սրբությունների և հավատի անձնագոհ պաշտպանությունը, ըստ ամենայնի, նույնը պետք է լինեին:

Այսպիսով շնորհիվ հայ մատենագիրների և, հատկապես, Փավստոս Բուզանդի հաղորդած մանրամասն տեղեկությունների՝ հնարավոր է լինում բացահայտել, իր հիմնական տարրերով հանդերձ, 4-5-րդ դարերի հայ ռազմիկի բարոյահոգեբանական գաղափարական արժեհամակարգը, որը կանոնակարգված է եղել հատուկ պատվո վարքականոնի մեջ: Իմիջիայլոց, Փավստոսի կենտրոնացածությունը ռազմական պատմության հարցերի վրա²⁷ « նրա քաջատեղյակությունը հայ ռազմիկի պատվո վարքականոնի առանձին դրույթներին ու դրանց առաջնակարգությունը թույլ են տալիս ենթադրել, որ այս հեղինակը հրաշալի ռազմական կրթություն է ստացել և որոշ ժամանակ, իբրև սպա, ծառայել է հայոց բանակում:

Հայկական զորաբանակի թվաբանակը

Հարկ է դիտարկել, թեկուզ հպանցիկ, նաև հայկական զորաբանակի թվաբանակի հարցը: Միայն այդ թվաբանակի հիման վրա կարելի է ճիշտ պատկերացնել հայոց մարտական ավանդույթների տեականությունն ու շարունակականությունը, նաև, զուգահեռաբար, այն, թե ինչ ազդեցություն են ունեցել հայ զինվորականությունը և սերնդեսերունդ քարոզված նրա արժեհամակարգը հին և միջնադարյան հայ հասարակության ընդհանուր մտայնության, հոգեբանության և գաղափարախոսության վրա:

Նախ արժարժենք հնագույն շրջանի տվյալները: Հայաստյի թագավորության մ.թ.ա. 14-13-րդ դարերում խեթական պետության դեմ վարած պատերազմների մասին մի շարք տեղեկություններից կարելի է վստահորեն մակաբերել, որ հայ զինվորների թիվը մեկ տասնյակ հազարից պակաս չի եղել, իսկ գուցե շատ ավելին է եղել²⁸: Հայաստյում իր ժամանակի առումով արդիական ու կանոնակարգված զինուժի գոյությունը հաստատում է թեկուզ միայն այն փաստը, որ Հայաստյի զորքերն ունեցել են մարտական կառքեր²⁹, որոնք, նյութական զգալի արժեք ներկայացնելով, սահմանափակ թվով էին առկա նույնիսկ աշխարհակալ Ասորեստանի բանակում³⁰:

Ուրարտուի, այն է՝ հայոց Արարատյան թագավորության բանակը, թերևս, առաջին անգամ միավորում էր երկրում առկա ամբողջ զինուժը, որ բաղկացած էր առնվազն մի քանի տասնյակ հազար զինվորից³¹: Այսպես, պահպանված արձանագրություններից մեկը հաղորդում է, որ հյուսիսային ուղղությամբ արշավանքի դիմած Ուրարտուի զորքի կազմում կային 66 մարտակառք, 4430 ձիավոր և 15760 հետևակային³²: Պետք է ենթադրել, որ այս տեղեկությունը վերաբերում է հայոց բանակի մի մասին միայն, քանի որ խիստ անհավանական է, որ խոշոր ուժերով դեպի հյուսիս արշավելիս, սահմանապահ զորամասեր թողնված չլինեին հարավում կանխելու համար այդ ժամանակաշրջանում Հայաստանի գլխավոր թշնամուն՝ Ասորեստանի հնարավոր ոտնձգությունները: Ինչպես նկատում են արտասահմանցի հետազոտողները, Ուրարտուում ամբողջաշինությունը ձեռք էր բերել բացառիկ բարձր տեխնիկական մակարդակ, իսկ զինված ուժերը հմտացել-մասնագիտացել էին լեռնային պատերազմ վարելու գործում³³:

Արարատյան թագավորության բանակի բարձր աստիճանի հասած զարգացածությունն է փաստում նաև նրա հրամանատարական կազմի աստիճանակարգումը՝ գլխավոր հրամանատարի, նրա առաջին և երկրորդ տեղակալների, գնդապետի, հիսնապետի, սակրավորների հրամանատարների և պետերի պաշտոնների առաջացումը³⁴: Այս աստիճանակարգումը զարգացել է հետագա դարերում: Այսպես՝ մեզ առավել լավ հայտնի Արշակունյաց Հայաստանի բանակում առկա էին գլխավոր հրամանատարի՝ սպարապետի, զորավարի, մեծ զորավարի, զորամիավորման հրամանատարի՝ բյուրակալ կուսակալի, մեկ հազարանոց գնդի հրամանատարի՝ հազարապետի (պետք չէ շփոթել արքունիքում եղած հազարապետ պաշտոնի հետ) և այլ կոչումներ³⁵:

Հայոց Երվանդունիների օրոք հայկական զորքը պատկանելի թվաքանակ է ունեցել: Պատմելով մ.թ.ա. 6-րդ դարի իրադարձությունների մասին, Քսենոփոնի՝ մ.թ.ա. 365-358թթ. գրած «Կյուրոպեդիան» հայկական զորքի թիվը նշում է 8.000 հեծելազոր ու 40.000 հետևակ³⁶: Մ.թ. 1-ին դարի հռոմեացի հեղինակ Կվինտոս

Կուրցիոս Ռուփոսը հաղորդում է, որ մ.թ.ա. 331թ. տեղի ունեցած հանրահայտ Գավգամելայի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ դուրս եկած պարսից Դարեհ Քարթայի գլխավորած դաշնակից ուժերի աջ թևը կազմում էր 40.000 հետևակ և 7.000 հեծյալ ունեցող Մեծ Հայքի զորաբանակը (որն, ի դեպ, իրեն փայլուն է դրսևորում կռվում է մինչև ուշ երեկո և դիմում կազմակերպված նահանջի միայն այն ժամանակ, երբ պարզ է դառնում, որ կենտրոնում և ձախ թևում պարսիկները ջախջախիչ պարտություն են կրել)³⁷: Չախ թևում կռվող Փոքր Հայքի զորաբանակի թիվը Ռուփոսը չի հաղորդում: Ակնհայտ է, որ այս 47.000-անոց զորաբանակը չէր կարող ներկայացնել Մեծ Հայքի ամբողջ զինուժը, քանի որ Գավգամելան գտնվում էր Հայաստանի սահմաններից բավական հեռու և առնվազն նույն քանակության զինուժ էլ պետք է մնացած լիներ երկրի ներսում հատկապես հյուսիսային և հյուսիսարևելյան մշտապես վտանգավոր սահմանների անվտանգությունն ապահովելու համար: Այս եզրահանգման օգտին է խոսում նաև Քսենոփոնի հաղորդումն առ այն, որ հայոց զորքերի միայն կեսն է ուղարկվել համաարիական բանակ³⁸:

Հատկանշական է, որ մ.թ.ա. 9-րդ դարում Արամ (Արամե) թագավորի³⁹ բանակի արագաշարժ մասը (կամ այսօրվա եզրով ասած՝ «էքսպեդիցիոն կորպուսը») ևս բաղկացած էր, ինչպես հաղորդում է Խորենացին, «մոտավորապես հիսուն հազար» զինվորից⁴⁰. դարձյալ՝ սրանց մեջ չպետք է եղած լինեին բերդապահ և սահմանապահ կայազորները կամ գոնե դրանց մի մասը, որ տեղաշարժի չէր ենթարկվել: Հետաքրքիր է, որ այս կորպուսի թվաքանակը համընկնում է Տիգրան Մեծի հեծելազորի ընդհանուր թվի հետ, որ, ըստ Պլուտարքոսի, 55.000 էր (որից 17.000-ը՝ զրահապատ)⁴¹: Հետագայում, ամրապնդելով երկրի անվտանգությունը, Արամը գումարում է իր ունեցած զորքին (այսինքն՝ 50.000-ին) ևս 40.000 հետևակ և 2.000 հեծելազոր⁴² և այդ միացյալ 92.000-անոց բանակով արշավում դեպի արևմուտք՝ Կեսարիա:

Հայկական զինված ուժերի մարտական բացառիկ բարձր որակը և մշտական պատրաստվածության մեջ լինելու վիճակը հաս-

տատվում են արդեն միայն այն փաստով, որ հայկական բանակի շուրջ կեսը (չափազանց բարձր տոկոս նույնիսկ այսօրվա զարգացած երկրների բանակների համար) ընդունակ է եղել անհրաժեշտության դեպքում հեռավոր և սրընթաց արշավանքներ կատարել Հայաստանի սահմաններից դուրս, թեև, ինչպես վերն արդեն տեղեկացանք Փավստոսի հաղորդումից, դա բոլորովին էլ հայ զինվորականների սրտովը չէր:

Այսպիսով մ.թ.ա. 2-րդ և 1-ին հազարամյակներում, Հայասայի, Ուրարտուի և երվանդունիների թագավորությունների օրոք, հայ զինվորականության թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի, իսկ Արտաշեսյան, Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների օրոք, պատմական հստակ տեղեկությունների համաձայն, հայկական կանոնավոր բանակի թվակազմը տատանվում էր 100.000-ի և 120.000-ի միջև⁴³: Պատկերացնելու համար հայոց զինուժի տարածաշրջանային կշիռն ու նշանակությունը, կարելի է համեմատել այս թվերը, օրինակ, այն փաստի հետ, որ աշխարհակալ Հռոմեական կայսրության կանոնավոր բանակը, ըստ տարբեր տեղեկությունների, ուներ 400.000-ից մինչև 600.000 զինվոր⁴⁴: Ընդ որում Հռոմի հզորության գագաթնակետին Իտալիայից դուրս տեղակայված էին շուրջ 300.000 լեգեոններ⁴⁵: Այս ուժի միայն կեսն էր տեղակայված արևելյան ուղղությամբ, այսինքն՝ տարածաշրջանային առումով Հայոց կանոնավոր բանակը զիջում էր հռոմեականին առավելագույնը երեք անգամ: Սա նշանակում է, որ միաձակատ պաշտպանական պատերազմ մղելու դեպքում Հայաստանն ընդունակ էր դիմագրավել հռոմեական ներխուժումը: Աշխարհակալ արքայանների միջև Հայաստանի անկախության և ինքնավարության երկարատև պահպանումն ինքնին արդեն վկայում է հայոց զինուժի հզորության մասին:

12-14-րդ դարերում Կիլիկյան հայկական թագավորության բանակի թիվը պատերազմի ժամանակ անցնում էր 60.000 զինվորից⁴⁶, միևնույն ժամանակ բուն Հայաստանում ընդհուպ մինչև 14-րդ դար, հատկապես Զաքարյանների իշխանության օրոք, նախա-

րարների հրամանատարության տակ դեռևս պահպանվել և գործում էին հայկական խոշոր գորագնդեր:

Պետք է հատուկ ընդգծել, որ վերը բերված թվերը վերաբերում են ոչ թե Հայաստանի տղամարդկանց ընդհանուր թվին կամ աշխարհագորին, այլ հայոց կանոնավոր կամ մշտական զինուժին: Սրանում համոզվելու համար բավական է մոտավոր պատկերացում ունենալ Հայաստանի պատմական ժողովրդագրության մասին: Հետազոտողների հաշվարկների համաձայն, Հայաստանի բնակչության թիվը մ.թ.ա. 1-ին դարում եղել է 2,5-3 միլիոն, 10-րդ դարում 4-5 միլիոն մարդ, իսկ Կիլիկյան Հայաստանում 13-րդ դարում ապրել է շուրջ 1 միլիոն մարդ (նշված բոլոր դեպքերում էլ հայերը բացարձակ մեծամասնություն էին)⁴⁷: Այսպիսով 1-ին դարում հայկական 100.000-120.000-անոց զինուժը կազմել է Հայաստանի ընդհանուր բնակչության ընդամենը մոտավորապես 4%-ը, 10-րդ դարում մոտ 2-2,5%-ը, իսկ 13-րդ դարի գերմիլիտարիզացված Կիլիկյան Հայաստանում շուրջ 6%-ը: Հին և միջնադարյան Հայաստանի զարգացած տնտեսությունն ու ժողովրդագրական այս բարվոք վիճակը միանգամայն թույլ էին տալիս զինելու, մարզելու և կերակրելու այդպիսի պատկառելի մշտական զինված ուժեր ⁴⁸:

Հայ զինվորականության ամուր փոխկապվածությունը հայ հասարակության ու նրա տարբեր խավերի հետ պայմանավորված էր նաև նրանով, որ բանակը կազմված էր ոչ միայն նախարարական և ազնվական ծագում ունեցող ազատանիից, այլ՝ ազատ շինականներից ⁴⁹:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հնագույն, հին և միջնադարյան ժամանակներում հայ զինվորականության տեղը, դերը, կշիռն ու նշանակությունը հայկական հասարակության մեջ եղել են ամենամեծն ու կենտրոնականը: Հետևաբար, հայ զինվորի պատվո վարձականոնը, իր գաղափարական-բարոյահոգեբանական արժեքներով հանդերձ, դարեր շարունակ սերնդեսերունդ փոխանցվելով և ուսուցանվելով իր անանց կնիքն է դրել հայ ժողովրդի ազգային բնավորության, հոգեբանության և աշխարհընկալման վրա ⁵⁰:

Հայերի ուզմական հատկանիշները՝ օտարների գնահատմամբ

Հայերի բացառիկ մարտունակությունը նկատել և արձանագրել են նաև օտարները: Բերենք ընդամենը մի քանի օրինակ (հետագայում հարկավոր է օտար աղբյուրների գրանցած նմանատիպ բազմաթիվ հաղորդումները հավաքել, խմբավորել և հրատարակել առանձին ուսումնասիրություններ): Ըստ 6-րդ դարի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու հաղորդման՝ մինչև 474թ. հռոմեական կայսրերն իրենց թիկնազորի «ընտրության ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»⁵¹: Արաբ պատմագիր Քամալ-ադ-դինի վկայությամբ, հայկական ծագում ունեցող Ռոման Գ Արգիրոս կայսրի (1028-1034) թիկնազորը դարձյալ բաղկացած էր հայերից, որոնց էլ նա պարտական էր իր փրկությունը 1030թ. Հալեպի մոտ կրած պարտությունից ու բյուզանդական զորքի ցաքուցրիվ լինելուց հետո. «և ճողոպրեց կայսրը՝ շրջապատված իր մոտ եղած հայերով, որոնք իրենց նետերով պաշտպանում էին նրան»⁵²: Ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ Շարլ Դիլն այսպես է բնութագրել 10-րդ դարի իրավիճակը. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ 10-րդ դարում հայկական ջոկատները բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»⁵³:

Բյուզանդացի մեկ այլ պատմագիր, խոսելով 9-րդ դարի առաջին կեսին բյուզանդական բանակում ծառայած Մանուիլ անունով մի հայ զորահրամանատարի մասին, գրում է.

Մանուիլը շատ խիզախ մարդ էր, բոլոր հակառակորդներին քաջ հայտնի, քանզի նա ծնունդով հայ էր⁵⁴:

Այսպիսով, պարզվում է, որ այդ ժամանակաշրջանում հայ տղամարդու կերպարը նույնացվում էր արիասիրտ ուզմիկի բնութագրի հետ, կամ, ինչպես դիպուկ նկատել է այս հետաքրքիր տեղեկությունը հայերեն թարգմանած անվանի բյուզանդագետ

Հ.Բարթիկյանը, «Բյուզանդիայում հայ և քաջ հասկացությունները հոմանիշ էին»⁵⁵ :

Նույնպիսի հարգանքի և գնահատանքի էր արժանանում հայկական զորքը նաև Իրանում:

Այսպես՝ Փավստոսը հաղորդում է, որ պարսից Շապուհ Բ թագավորը, Հայաստանում իր կրած մի խոշոր պարտությունից հետո՝ վերադառնալով Իրան, հիացական գնահատական է տվել հայ ռազմիկների անձնվիրությունը, պատերազմավարժույթյանն ու մարտական բարձր ոգուն.

Ջարմացել եմ ես, ասում էր նա, իմ տեսածի վրա: Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվն այս էր, որին այս անգամ պատահեցի: Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ, իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հողմների լեզեռների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում, ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ: Եվ այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ Արյաց զորքերին ամբողջովին ոչնչացրին:

Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած - Հայաստան գնդի⁵⁶ միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսքան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին քաջալերվում պատերազմի ժամանակ: Երբ իրենց ախոյաններին գլորում էին, միշտ ասում էին. «Արշակի համար», իսկ նա նրանց մեջ չէր, բայց նրանք իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ՝ ամեն մի ախոյանի, որին սպանում էին, նրան էին նվիրում: Կամ [Հայոց սպարապետ Մամիկոնյան] Մուշեղի այն մոլեգնած գունդը. ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և դրոշակներն այնպես էին գնդի մեջ, կարծես հրդեհի բոց է անցնում եղեգների միջով: Այսքան ժամանակ է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, գտնվում է Անդամըն բերդում, Խուժաստան երկրում, բայց նրանք իրենց սիրուց

այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատերազմին գլուխ կանգնած և իրենք նրա առաջ նրան են ծառայում: Այո,- ասում էր նա,- երանի՜ նրան, որ Հայոց գնդի տերն է, այնպիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի⁵⁷ :

Մարտական որոշակի խնդիրներ լուծելու գործում, հատկապես՝ իր հեծելազորի մանևրային կարողություններով ու հարվածային հզորությամբ, հայկական բանակն անգերազանցելի էր: Հայկական այրուձին մեծ հռչակ էր վայելում հին աշխարհում, այդ իսկ պատճառով էլ Հռոմի, Բյուզանդիայի և Իրանի տիրակալները սիրաշահում էին և աշխատում տարբեր հնարքներով իրենց զինված ուժերի կազմի մեջ ընդգրկել հայկական ընտիր զորամիավորումները: Իրանում հայկական զորքի ունեցած վարկի մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել թեկուզ Եղիշեի հետևյալ հաղորդումից.

...կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորավարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում [Պարսից թագավորի] Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հարցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և երկու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենքին, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի քաջությունը⁵⁸ :

Կարելի է հիշել նաև Ավարայրի ճակատամարտի նախաշեմին պարսիկ զորահրամանատար Մուշկան Նյուսալավուրտի բառերը՝ ուղղված իր զորքին.

Դուք ինքներդ գիտեք Հայոց աշխարհի քաջությունը, և ամեն մեկի անվեհերությունը. գուցե պարտություն կրելով՝ կենդանի-կենդանի զրկվեք այն մեծ կյանքից, որ ունենալու եք: Հիշեցեք ձեր կանանց և որդիներին, հիշեցեք ձեր սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինիք...⁵⁹ :

Վերջաբանի փոխարեն. զինվորական պատվո վարձականոնները արդի ժամանակաշրջանում

Զինվորական պատվո վարձականոններն ամենևին խոր ան-
ցյալի երևույթ չեն միայն: Ժամանակակից զարգացած պետու-
թյունների կադետական և սպայական ուսումնարաններն իրենց
սաներին և առանձին ստորաբաժանումների և զորամիավորումնե-
րի հրամանատարությունը՝ իրենց մարտիկներին գաղափարապես
և բարոյահոգեբանորեն պատրաստելիս, դարձյալ օգտագործում
են հատուկ մշակված պատվո վարձականոններ:

Անհրաժեշտ ենք համարում, որ մենք էլ, հայկական ազգային
ուսումնական դաստիարակության հարուստ և ուրույն ավանդույթնե-
րը հաշվի առնելով, սկզբում Պաշտպանության նախարարության
ուսումնական ինստիտուտում, ապա և ամբողջ հայկական բանակի
բարոյահոգեբանական դաստիարակության համակարգում մշա-
կենք և ներդնենք այսօրվա հայ ուսումնական պատվո վարձականոնը:

Հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակությունը
հասարակական առողջ համախմբվածությունը հասնելու, ասել է
թե՛ Հայաստանի ազգային անվտանգությունն ամրապնդելու գլ-
խավոր միջոցներից է: Հայկական բանակը, ինչպես դարեր առաջ,
կոչված է լինելու Հայաստանին անմնացորդ նվիրված սերունդնե-
րի պատրաստման դարբնոց:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- * Սույն ուսումնասիրության շրջանակներից դուրս է մնում այդ արժեհամակարգին ծնունդ տված հին Հայաստանի ներքին սոցիալական միջավայրի և արտաքին պայմանների քննությունը, որ ներկայացնելու ենք՝ *Հայկական ինքնության և ազգայնականության կազմավորումը* մենագրությամբ:
- ¹ «Եւ պատուիրէր նմա... տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց գանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիր մեռանել».- **Փաւստոս Բուզանդացի**, Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս (չորրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1933, Դպրութիւն Ե, Գլուխ ԽԴ: Այստեղ Մալխասյանցը զգալիորեն հեռացել է բնագրից և կորցրել Փավստոսի ասածի նկատմամբ իր հարազատությունը, ահա՝ «Նրան պատվիրեց... Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահ աշխարհի համար, ինչպէս և քո քաջ նախնիքը».- տե՛ս **Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն**: Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի: Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 391: Մեկ բացառությամբ (ծանոթ. 57), սույն ուսումնասիրության մեջ Փավստոս Բուզանդից կատարված մեջբերումները տրված են ժամանակակից հայերենով՝ իմ թարգմանությամբ:
- ² Եվրոպայի ժողովուրդները, իբրև ազգեր, ձևավորվել են հիմնականում 16-19-րդ դարերում, այդ պատճառով էլ՝ հայրենիքի համար զոհաբերվելու գաղափարական դրույթը - այն բովանդակությամբ, որով այն արձանագրված է 5-րդ դարի Հայաստանում, հայերեն գրավոր առաջին իսկ աղբյուրներում - Եվրոպայում կյանքի է կոչվել դարձյալ նույն 16-19-րդ դարերում, թեև դրա նախադրյալները կային ավելի վաղ շրջանում (օրինակ, 14-15-րդ դարերում ֆրանսիական հայրենասիրության նմանատիպ տարրերի մասին տե՛ս **Liah Greenfeld**, *Nationalism: Five Roads to Modernity*. Cambridge, Mass.: Harvard University Press, 1992, pp. 96-97): Անգլիացի անվանի հեղինակ Լորդ Աքտոնը բնորոշում է այս դրույթը իբրև «իսկական հայրենասիրության մեծ նշան» և «քաղաքական կյանքի արդյունք».- **Lord Acton**, "Nationality", in **Omar Dabhour and Micheline R. Ishay**, eds., *The Nationalism Reader* (New Jersey: Humanities Press, 1995), p. 115: Հայ և եվրոպական ազգերի ծագման ժամանակը համեմատական քննության է առնված հետևյալ ուսումնասիրության մեջ՝ **Արմեն Այվազյան**, *Ազգային լեզվի պա-*

շտամունքը և հայկական, անգլիական, ֆրանսիական ու ռուսական ազգայնականության սկզբնավորման ժամանակը (համեմատական քննություն)։ - Էջմիածին, Դ, 2000, էջ 98-115:

- ³ «...զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի, զի աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց, և յառնի յանդամսն, զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր»։ - **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. ԽԴ (վենետիկյան հրատ.)։ Այս հատվածում Ք. Պատկանյանի հրատարակության հիմք ձեռագիրը ակնհայտորեն աղավաղված է, ահա. «զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի, զի յառնի յանդամսն աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց, և զայն անդամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր» (տե՛ս *Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց*. Թիֆլիս, 1912, էջ 385)։ Մալխասյանը հիմք է ընդունել հենց այս աղավաղված ընթերցանակումը, թարգմանելով՝ «հենց նրա առնի անդամի վրա հիսուն սպի կար վերքերից», և ծանոթագրելով, թե՛ «Վենետիկյան հրատարակության մի ձեռագիր «յիսուն»-ի փոխարեն ունի «տասն», որ ավելի հավանական է» (**Փաւստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*. Թարգմ., ներած. և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի (Երևան, «Հայաստան», 1968, էջ 293, 340)։ Փաւստոսը խոսում է Մանվելի ողջ մարմնի վրա եղած հիսուն սպիի մասին, որ, ինչպես վերը տեսանք, արտահայտված է վենետիկյան հրատարակության մեջ։ Այս դրվագը ճիշտ է ընթերցված Գևորգյանի ռուսերեն և (հավանաբար՝ վերջինիս ազդեցությամբ) Գարսոյանի անգլերեն թարգմանությունների մեջ. տե՛ս **Фавстос Бузанд**, *История Армении*, Перевод с древнеармянского и комментарии М. А. Геворгияна. Ереван, 1953, с. 197. *The Epic Histories Attributed to Pawstos Buzand (Buzandaran Patmutiwnk)*. Transl. and commentary by Nina Garsoian (Cambridge, Mass.: Harvard University Press, 1989), p. 229. Մինևույն ժամանակ հարկ է նկատի ունենալ Նինա Գարսոյանի միտումնավորությունն ու սխալները, որոնց մասին տե՛ս **Արմեն Այվազյան**, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. *քննական տեսություն* (Երևան, «Արտագերս», 1998), էջ 169-204:
- ⁴ «Մա այր աշխարհասէր և հայրենասէր եղեալ... լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան

նորա տիրել արանց օտարաց» - **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԳ: Քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ.Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991 (Տիֆլիսի 1913թ. նմանահանություն): Աբեղեանը և Հարությունյանը նախընտրել են «աշխատասէր» բառը և, որպէս տարբերակ, տողատակ են իջեցրել որոշ ձեռագրերում դրա փոխարեն եղած «աշխարհասէր»-ը, որը, մեր համոզմամբ, շատ ավելի է ներդաշնվում այս նախադասության իմաստի և ամբողջ ետնախորքի հետ (նույն տեղում, էջ 43): Որ այս բառի առաջին բաղադրիչը *աշխարհ*-ն է, եւ ո՛չ *աշխատ*-ը, հաստատվում է նաև մի կողմնակի տեղեկությամբ. Գրիգոր Մագիստրոսը, 11-րդ դարի կեսերին, ձեռքի տակ ունենալով Խորենացու Հայոց պատմության մեզ չհասած մի ձեռագիր, խնդրո առարկա հատվածը վերաշարադրել է ահա այսպէս՝ «հայրենասէր եւ աշխարհաշէն ըստ մերոյն Արամայ» (տե՛ս *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*: Աշխ. Կ. Կոստանեանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 38): «Աշխարհասէր» բառը օգտագործված է նաև ավանդաբար Խորենացուն վերագրվող հետևյալ երկում՝ *Գիրք պիտոյից*: Աշխատասիրությամբ Գոհար Սուրայանի, Երևան, ԳԱԱ հրատ., 1993, էջ 158, 179, 327:

- 5 Ժամանակակից հետկառուցվածքաբանության (պոստ-ստրուկտուրալիզմի) ֆրանսիացի հիմնադիրներից մեկը՝ Ռոլան Բարտը, իր *S/Z* գրքում (Paris, 1970), գրական տեքստի վերլուծության համար առաջարկում է մեր քննությանն արտաքնապէս որոշ նմանություն ունեցող տեխնիկա, որը հայտնի է որպէս *կառուցվածքային-իմաստաբանական* վերլուծություն (структурно-смысловой анализ): Մակայն մեր կիրառած հետազոտական եղանակը Բարտի առաջարկածից ամբողջովին տարբեր է, նախ պատմասոցիոլոգիական իր ուղղվածությամբ, ապա՝ զուգահեռ (պատմական) աղբյուրների օգտագործմամբ: Այդ իսկ պատճառով այն ճիշտ կլինի անվանել *պատմական-կառուցվածքային իմաստաբանական* վերլուծություն:
- 6 Կորին զուգահեռ ակոսներով կտրված ջրովի փոքրիկ ցանքատարածք է: Ա. Մարտիրոսյանը նկատում է, որ մեր օրերում Փավստոսի «ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել»-ը կարտահայտվեր «թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից *գէթ մի թիզ հող օտարվի*».- տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, «Ազգ» և ազգային որոշիչ.- *Աշտանակ* (հայագիտական պարբերագիրք), Բ, Երևան-«Նաիրի», 1998, էջ 11: Թերևս Ա. Մար-

տիրոսյանի հետ կարելի է համաձայնել, սակայն մի լուրջ վերապահությամբ, այն է՝ Փավստոսն ունի նաև թիզ բառը՝ «[Աստուած] չափեաց գերկինս թգաւ եւ գերկիրս ամենայն քլաւ իւրով» (**Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. Դ):

- 7 Այս կետը պարզ բացահայտվում է Փավստոսի շարադրած մեկ այլ դրվագում. Մանվել սպարապետը, թվարկելով հայ ռազմիկի հանձնառությունները, հատուկ վերհիշում է իր զինակիցներին որպես «եղբայրութիւն ընկերութեան»՝ «Զի լաւ էր ինձ, եթէ ի պատերազմի մեռեալ էի... ի վերայ եղբայրութեան ընկերութեան... (**Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. ԽԴ. այս հատվածը, քիչ ավելի ուշ, շարադրանքում մեջբերված է ամբողջովին):
- 8 «Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին: Զտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, և ոչ թողոյր բնաւ ամենեւին և ոչ քան զկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել. ի վերայ աշխարհին կեալ, և ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց, և ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխայեր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տերանցն Արշակունւոց վաստակէր».- **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. Ի: Այս գլխի մեր ընթերցումը զգալիորեն տարբերվում է Մալխասյանցի առաջարկած ընթերցումից. հմմտ. **Փավստոս Բուզանդ**, *Պատմութիւն հայոց*. Թարգմ., ներած. և թարգմանությունները՝ Ստ. Մալխասյանցի. Երևան, «Հայաստան», 1968, էջ 254:
- 9 «...մարգէին զմիմեանս բանիւք ասելով՝ «քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր և զտեղի փառատրութեան Աստուծոյ մերոյ. այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի

սուր թշնամեացն. և ապա լիցի զոր կամիցին...».- *Ղեռնդեայ վարդապետի պատմութիւն*, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 149: Հայոց բարձրագույն զինվորականության՝ սպարապետի և նախարարների՝ հայրենիքի համար զոհաբերվելու նույն հանձնառությունը Ղեռնդը հիշում է երկու այլ տեղերում ևս, ահա.

ա. [Հայոց նախարարները] նախընտրելով քաջությամբ մեռնել, քան դժնդակ կյանք վարել՝ ձեռնամուխ եղան ապստամբության և դուրս եկան իսլամական իշխանության ենթակայությունից:

[լու համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան եւ ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի]:

բ. Եվ թեպէտ կարող էին անցնել Հունաց երկիր եւ փրկել իրենց կյանքը հարստահարիչների չարասէր ապիրատությունից, սակայն նախընտրեցին մեռնել, քան տեսնել մեր աշխարհի կորուստը եւ Քրիստոսի եկեղեցիների անպատվությունը:

[Եւ թեպէտ կարող էին մեկնել ի կողմն Յունաց եւ ապրեցուցանել զանձինս ի չարասէր ապիրատութենէ զրպարտողացն՝ սակայն լու համարեցան (մեկ այլ ձեռագրում՝ «համարեցան ընտրել»)- *Ս. Ս.*] զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցեաց Քրիստոսի].-

Տե՛ս *Ղեռնդեայ վարդապետի պատմութիւն*, էջ 138, 148. հմմտ. Ղեռնդ, Պատմություն: Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, «Սովետական գրող», 1982, էջ 111, 118-119:

¹⁰ Մինչև «Հագակուրե»-ի լույս աշխարհ գալը Ճապոնիայում արդեն շրջանառության մեջ էին դրված նմանատիպ երեք այլ ստեղծագործություն՝ «Սամուրայական ցեղերի մասին կանոնադրությունը» (1540-ական թթ.), իշխան Թակեդա Մինգենի վարքը և Յուձան Դայդոձիի (ծն. 1639թ.- մահ. 1730թ.) գրած «Ռագմական արվեստի հիմունքները»: Սակայն, «Հագակուրե»-ին էր վիճակված դառնալ սամուրայների «սուրբ գիրքը».- տե՛ս **А. А. Долин, Г. В. Попов.** *Кемпо – традиция воинских искусств* (Москва: Наука, 1990), с. 186.

¹¹ **В. А. Пронников, И. Д. Ладанов.** *Японцы (этнографические очерки)*. Москва: Наука, 1983, с. 239-242; cf. **Yamamoto Tsunetomo**,

Hagakure: The Book of the Samurai, trans. William S. Wilson (NY: Kodansha International, Ltd., 1979), pp. 17-18, 20-21, 33-34, 66-67.

- ¹² «Ապա եղև օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ զասպաստանաւ միով զարքային Պարսից, իսկ ախոռապետն արքային Պարսից նստեր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց գնա, եւ ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ եւ անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, թէ՛ «Այծից Հայոց արքա, եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ»: Ջոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ եւ բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զտուներն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղուցն զախոռապետն արքային Պարսից զվաստեր ի ներքս յասպաստանի անդ: Ջի ոչ կարաց լսել եւ ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ լաւ հաշուէր բազում անգամ, քան զտեառն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս».- **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Դ, Գլ. ԺԶ:
- ¹³ «Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ, եւ լինել միամիտ, ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել: Ջի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է եւ ընդունելի, եւ ոչ Աստուած թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանէք. եւ ամենեւին ի մահուանէ մի՛ երկնչիք, այլ յուսասջիք յայն, որ զամենայն արար եւ հաստատեաց: Եւ զնենգութիւն եւ զպղծութիւն եւ զչարութիւն յանձանց ձերոց ի բաց արարէք, եւ զՏէր Աստուած սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցէք. եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա եւ ուխտի նորա, եւ ի վերայ բնակ տէրանց աշխարհիս Արշակունոյ».- **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. ԽԴ:
- ¹⁴ **В. А. Пронников, И. Д. Ладанов.** *Японцы*, укр. соч. с. 243-244. Ջինվորի՝ ծովությունից խուսափելու մասին բավական մանրամասն խոսում է նաև Յուձան Դայդոձին (տե՛ս *Книга самурая; Юдзан Дайдодзи, Будосесинсю; Ямамото Цунемото, Хакагуре; Юкио Мисима, Хакагуре Нюмон*, Санкт-Петербург: Евразия, 2000, с. 64-65): Ջինվորի՝ ճշմարտասեր լինելու անհրաժեշտության մասին

դրույթը, դեռևս մ.թ.ա. 5-րդ դարում, նշում է չինացի մեծ տեսաբան-նազմագետ Սուն-Յզին (տե՛ս **Н. И. Конрад**, *Сунь-Цзы. Трактат о военном искусстве*. М.-Л.: Изд. АН СССР, 1950, с. 33, 66-67): Ներսես Շնորհալին 1166թ. գրած իր «Թուղթ ընդհանրական»-ի մեջ՝ Զինվորական դասին (Առ զինվորաց դասս) գլխում նույնպես ընդգծում է զինվորի ճշմարտասիրության կարևորությունը. «իսկ [այն զինվորը], ով խաբեբայություն կանի խոսքով կամ գործով... այդ խաբեբայությունն Աստծուն է [ուղղված] և ոչ մարդուն, և Աստուծոյ էլ ընդունելու է իր պատիժը որպէս իր չարիքների հատուցում» (Իսկ որ նենգաւոր գտանիցի բանիւ կամ գործով... Աստուծոյ է այն նենգութիւն եւ ոչ մարդոյ. եւ յԱստուծոյ ընդունելոյ է զվրէժ հատուցման չարեաց իւրոց).- **Ներսես Շնորհալի**, *Թուղթ ընդհանրական*: Աշխատասիրությամբ՝ Է. Մ. Բաղդասարյանի, Երևան, ԳԱ հրատ., 1995, էջ 153:

- ¹⁵ **Richard Barber**, *The Knight and Chivalry*. Revised edition (Woodbridge: The Boydell Press, 1995), p. 6.
- ¹⁶ Տե՛ս *Советская историческая энциклопедия*. Главный редактор Е. М. Жуков, Том 12 (Москва: “Советская энциклопедия”, 1969), с. 426; *Энциклопедический словарь*. Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, Том XXVII (С.-Петербург, 1899), с. 458-461.
- ¹⁷ **Maurice Keen**, *Chivalry* (New Haven and London: Yale University Press, 1984), pp. 14, 178.
- ¹⁸ Տե՛ս **Шарль Диль**, *Основные проблемы византийской истории* (Москва: Госизд. Иностранной Литературы, 1947). Перевод с французского и предисловие Б. Т. Горвянова, с. 85.
- ¹⁹ Տե՛ս **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Դ, Գլ. ԻԴ. Ե, Գլ. ԽԴ:
- ²⁰ «Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրեւ վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք, որ միամիտք և միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդոց և կանանց իւրեանց, և ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ի մահ և ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոց ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց».- **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Դ, Գլ. ԻԴ:

- 21 Նույն տեղում, Դ, Գլ. Ի:
- 22 «Զի Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին երթալ զհեռի ճանապարհն, զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին».- նույն տեղում:
- 23 «Ածէին զնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, և քարկոծ առնէին զնա քարամբք իբրև զայր, որ աշխարհի և զնդի եւ զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ».- նույն տեղում, Գ, Գլ. Ը:
- 24 «Մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի».- որ *յանձն* իմ արտահայտությունը նկատի ունի մարմնի վրա ստացած վերքերը, երևում է նաև մեկ այլ դրվագում Փավստոսի կիրառած ձևից «քանզի էր Վասակ *անձամբ* փոքրիկ» (Դ, Գլ. ԾԴ): Մալխայանցը թարգմանել է բավական անորոշ՝ «ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ» (1968 հրատ.), էջ 293:
- 25 «Սկսաւ լալ եւ ասել թէ ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, եւ մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի. եւ ընդէ՛ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զօրէն անասնոյ մեռելոյ եղէ: Զի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի՛ զեկեղեցիս եւ մի՛ զուխտ Աստուծոյ առ ոտն կոխիցեն: Մակայն եւ ի վերայ Արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս, եւ ի վերայ կանանց եւ ի վերայ որդուց մերոց, եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս եւ ի վերայ եղբայրութեան ընկերութեան եւ մտերիմ բարեկամութեանն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահճացս եհաս ինձ մեռանել».- **Փաստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. ԽԴ:
- 26 Նույն տեղում, Ե, Գլ. ԼԵ:
- 27 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **Արմեն Այվազյան**, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 169-185, 193-198, 202-204:
- 28 *Հայ ժողովրդի պատմություն*, Ն. Ա (Երևան, ԳԱ հրատ., 1971), էջ 200-201:
- 29 *Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա*: Ն. 1 (Երևանի համալսարանի հրատ., 1981), էջ 7-13:
- 30 **Б. Б. Пиотровский**. *История и культура Урарту*. Ереван, Изд. Академии Наук Арм. ССР, 1944, с. 114.
- 31 *Հայ ժողովրդի պատմություն*, Ն. Ա, էջ 351:

- ³² **Р. Эрнест Дюпюи и Тревор Н. Дюпюи.** *Всемирная история войн.* Книга первая; 3500 год до Р. Х.– 1400 год до Р. Х., Санкт-Петербург, 1997, с. 51-52.
- ³³ Նույն տեղում, էջ 50-53:
- ³⁴ *Հայ ժողովրդի պատմություն*, շ. Ա, էջ 348-351:
- ³⁵ *Հայ ժողովրդի պատմություն*, շ. Գ, էջ 276:
- ³⁶ *Հայ ժողովրդի պատմություն. քրեստոմատիա:* շ. 1, էջ 139:
- ³⁷ Տե՛ս **Quintus Curtius Rufus**, *Historiae Alexandri Magni*, Book III, Chapter 2, par. 6; հմմտ. **L. P. Shahinian**, "On the Vahe Mentioned in Movses Khorenatsi's History," *Armenian Review*, Summer 1983, pp. 54-57. հմմտ. *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 1, էջ 494:
- ³⁸ Տե՛ս **Մ. Ս. Օհանյան**, Հայաստանը հին աշխարհի գահակարգում.- *Հայկական բանակ*, 1999, No. 4 (22). հղված է **Ксенофонт.** *Киропедия*, III, 1 (34, 35).
- ³⁹ Հնարավոր է, որ Խորենացու այս հաղորդման մեջ Արամ թագավորին իրականում մարմնավորել է 7-րդ դարի հայոց արքա Էրիմենա-Արամանին: Այս մասին մանրամասն տե՛ս **Բարկեն Հարությունյան**, *Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.)*: Երևան, «Հայագիտակ», 1998, էջ 59-90:
- ⁴⁰ **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԳ:
- ⁴¹ **Плутарх.** *Сравнительные жизнеописания.* В трех томах. Т. 2, Москва, Изд. АН СССР, 1963, с. 194.
- ⁴² **Մովսես Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԴ:
- ⁴³ Տե՛ս *Հայ ժողովրդի պատմություն*, շ. Ա, էջ 686-688. Հտ. Բ (Երևան, ԳԱ հրատ., 1976), էջ 146. Հտ. Գ (Երևան, ԳԱ հրատ., 1984), էջ 686-689:
- ⁴⁴ Հռոմեական բանակի թվաքանակի մասին ավելի մանրամասն տե՛ս **Philippe Contamine**, *War in the Middle Ages.* Translated by Michael Jones (Oxford UK և Cambridge USA: Blackwell, 1998), pp. 7-10; cf. **Peter Connolly**, *Greece and Rome at War* (London-Hong Kong: Macdonald, 1981), p. 255.
- ⁴⁵ Տե՛ս **Zbigniew Brzezinski**, *The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives* (New York: BasicBooks, 1997), p. 10.
- ⁴⁶ Տե՛ս «*Մնբասայ սպարապետի տարեգիրք*», Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 231. *Recueil des historiens des Croisades. Documents Arméniens.* T. II, Paris, 1906, p. 170-171. **Ս. Բուռնազյան**, Հայ ասպետությունը Կի-

լիկյան հայկական պետությունում 12-14-րդ դարերում.- *Տեղեկագիր
հասարակական գիտությունների*, 1963, N. 5, էջ 93:

⁴⁷ **Խաչիկ Նազարյան, Լեմվել Վալեսյան**, *Հայաստանի աշխարհագրություն*: Գիրք առաջին (Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք): Երևան, «Լույս», 1999, էջ 88-89: **Գ. Գ. Микаелян**, *История киликийского армянского государства*, Е., Изд. АН СССР, 1952, сс. 17-18; *Հայ ժողովրդի պատմություն*, շ. Գ, էջ 672-673:

⁴⁸ Կարելի է համեմատություն անցկացնել նաև մեր օրերի հետ: Պաշտոնական տվյալների համաձայն, 1998թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության բանակի կազմում ծառայում էին 53.400 զինվորական, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, արտասահմանյան ոչ պաշտոնական հավաստի աղբյուրների գնահատմամբ՝ կա ևս 20.000-25.000-անոց հայկական զինուժ-տե՛ս *The Military Balance*, 1998/99 (London: Oxford University Press, 1998), pp. 74, 76: Այսպիսով, այսօրվա Հայաստանն (այսինքն՝ ՀՀ և ԼՂՀ միասին վերցրած) ունի շուրջ 70.000-75.000-անոց բանակ, որը կազմում է նրա 2,5-3 միլիոնանոց ազգաբնակչության մոտ 2,5 տոկոսը: Զինվորական տարրի տոկոսային այսպիսի հարաբերակցությունը բնակչության ընդհանուր թվի հետ ավելի բարձր է, քան Ռուսաստանում, Թուրքիայում կամ Եվրոպայի որևէ երկրում, ինչը Հայաստանի ներկա աշխարհառազմավարական միջավայրում լիովին արդարացվում է:

⁴⁹ Ա. Ա. Մտեփանյանը, ուշագրավ մի ուսումնասիրության մեջ, քննելով հայ հին իրավունքի և աշխարհաժողովների որոշ հարցեր, պարզում է նույնիսկ, որ հե՛նց Հայաստանի ցածր խավերի հետ համաձայնությունը խախտելու և արդյունքում վերջիններիս տրամադրած զգալի զինուժից զրկվելու պատճառով է տեղի ունեցել Արտավազդ Բ թագավորի կործանումը (մ.թ.ա. 55թ.)- **А. А. Степанян**, *О государственной политике Артавазда II, Պատմա-բանասիրական հանդես*, 1989, N. 2 (125), էջ 40-54:

⁵⁰ Հայ մատենագրության պարունակած մեծաթիվ և բազմազան հավաստի նյութերը, որ վերաբերում են այս հոդվածի մեջ արծարծված հարցերին, դեռևս սպասում են իրենց հետազոտողներին: Այսպես՝ հայ ռազմիկի արժեհամակարգը, թերևս, ամենացայտուն կերպով արտացոլվել է *Մասնա ծռեր* ժողովրդական էպոսում, որը կարոտ է այս տեսանկյունից կատարվելիք մանրագնին վերլուծության:

⁵¹ Ահա այդ հատվածն ամբողջությամբ.

«Նախկինում պալատի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս ստրատիոտներ (զինվորներ), որոնց սխուլարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ռոճիկ, քան մնացած բոլոր [ստրատիոտներին]: Անցյալում կայսրերը սրանց ընտրության ժամանակ նկատի էին առնում մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը: Բայց սկսած Ջենոն կայսրից (474-491), [ստրատիոտ] անունը սկսեց տրվել վախկոտ և պատերազմի մասին բոլորովին գաղափար չունեցող մարդկանց...»:

Տե՛ս **Բյուզանդական աղբյուրներ**, Հտ. Ա, *Պրոկոպիոս Կեսարացի*: Թարգմանությունն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 296. հմմտ. **Պրոկոպիոս Կեսարացի**, *Գաղտնի պատմություն*: Թարգմանությունն հին հունարեն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Աթենքի ակադեմիայի թղթակից անդամ Հրաչ Բարթիկյանի, Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 114:

⁵² Տե՛ս **В. И. Розен**, *Император Василий Болгаробойца*. Санкт-Петербург: 1883, с. 319; ср. **А. П. Каждан**, *Армяне в составе господствующего класса Византийской империи в 11-12 вв.* (Երևան: Изд. АН Арм. ССР, 1975), с. 139 (նույն էջում Կաժդանը նշում է, որ մարտական բարձր հատկանիշներով առանձնանում էր նաև Ռոման Դ Դիոգենես կայսրի (1068-1071) բանակում ընդգրկված հայկական հետևակը):

⁵³ **Шарль Дяль**, *Основные проблемы византийской истории*, с. 141.

⁵⁴ **Բյուզանդական աղբյուրներ**, Հտ. Ե, *Թեոփանեսի շարունակող*: Թարգմանությունն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի: Երևան, ԳԱ հրատ., 1990, էջ 65: Նորերս լույս տեսած՝ բյուզանդական բանակի և հասարակության փոխհարաբերությունները քննող մի մենագրություն, անտեսելով հունական աղբյուրներում հայկական զորամիավորումների բարձր մարտունակության մասին եղած բազմաթիվ ուղղակի վկայությունները, անում է ահա այսպիսի միտումնավոր ընդհանրացնող եզրակացություն. «հայ զինվորները տխրահամբավ էին (համենայն դեպս՝ հունական աղբյուրների համաձայն), իրենց քմահաճ վարքագծով և անկարգապահությամբ» [Armenian soldiers, notorious (according to the Greek sources at least) for their wayward conduct and indiscipline].- տե՛ս **John Haldon**, *Warfare, State and Society in the*

Byzantine World, 565-1204 (London: UCL Press, 1999), p. 236: Հեղինակի՝ բրիտանացի պրոֆեսոր Ջոն Հալդոնի միտումնավորությունն ավելի պարզ կլինի, եթե նկատենք, որ իր գրքում նա չի նշում բյուզանդական բանակի բազմաթիվ զորահրամանատարների, ներառյալ գլխավոր զորահրամանատարների, հայ լինելը, դեռ ավելին՝ պարզապես շրջանցում է Բյուզանդիայի հարևան Հայաստան պետության և երկրի գոյությունն անգամ (բացառությամբ մեկ-երկու հպանցիկ և կողմնակի հիշատակության. էջ 29-ում հիշված է «Հայոց Աշոտ թագավորը», էջ 227-ում՝ «կիլիկեցի հայերի» 1166թ. տարած ռազմական մի հաղթանակը): Ի տարբերություն Ջ. Հալդոնի, Բյուզանդիայի ռազմական պատմության անվանի մասնագետ՝ Չիկագոյի համալսարանի պրոֆեսոր Վալթեր Քեզին, իր վերջին ուսումնասիրություններից մեկում, հանգամանորեն քննելով Հայաստանի աշխարհառազմավարական դիրքի կարևորությունն ու առանձնահատկությունները, բավական օբյեկտիվորեն է խոսում հայկական զինված ուժերի նշանակության և հայ զորահրամանատարների ունեցած դերի մասին (թեև նրա որոշ դիտողություններ ականա կրում են ամերիկյան կեղծ-հայագիտական դպրոցի ազդեցությունը): Քեզին նկատում է նաև «հայերի անհողորդությունը և ուժեղ բնավորությունը» [intractability and formidable character of the Armenians], որի հետ ստիպված էին հաշվի նստել թե՛ բյուզանդացիները և թե՛ արաբները.- տե՛ս **Walter E. Kaegi, Byzantium and the Early Islamic Conquests** (Cambridge University Press, 1992), pp. 12, 181-204, etc.: Բյուզանդական բանակում ծառայած հայկական զորամասերի և հայ զորահրամանատարների մասին տե՛ս նաև **Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության**. Գիրք Ա, Երևան, ԳԱ հրատ., 1957, էջ 39-40:

⁵⁵ **Բյուզանդական աղբյուրներ**, Հտ. Ե, *Թեոփանեսի շարունակող*, էջ 313, ծնթ. 56: Այս դարձվածքը վերցված է պատմական մի երկի միջից, որ գրվել է Կոստանդին Ծիրանածին կայսեր (913- 959) կարգադրությամբ (նույն տեղում, էջ VII):

⁵⁶ Մալխասյանը թարգմանել է *Հայկական զնդի*, որ սխալ է. այդ մասին տե՛ս **Արմեն Այվազյան, Հայաստանի պատմության լուսարանումը ամերիկյան պատմագրության մեջ**, էջ 202-203:

⁵⁷ **Փավստոս Բուզանդ, Պատմություն հայոց**, Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 244-245: Այս գնահատականն ականա հիշեցնում է Կովկասում թուրքական ուժերի գլխավոր հրամանատար Վե-

հիբիաշայի՝ 1918թ. մայիսին Ղարաքիլիսայի համար մղված ճակատամարտի կապակցությամբ ասածը. «Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ: Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել» (տե՛ս **Ե. Ղ. Սարգսյան**, *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918)*: Երևան, «Հայաստան», 1964, էջ 455. հմմտ. *Турция в годы первой мировой войны*. Москва, 1966, с. 188. **И. Х. Баграмян**, *Мои воспоминания*. Изд. «Айастан», Ереван, 1979, с. 88.):

- ⁵⁸ **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, Թարգմ. և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևանի համալսարանի հրատ., 1989, էջ 89: Այս հաղորդումը նկատելի և ըստ արժանվույն գնահատելի են նաև դանիացի ճանաչված արևելագետ Քրիսթենսենն ու պարսիկ պատմաբան Շահբազին (տե՛ս **A. Christensen**, *L'Iran sous les Sassanides*, 2nd ed. Copenhagen, 1944, p. 210; **A. Sh. Shahbazi**, "Army: Pre-Islamic Iran," *Encyclopaedia Iranica*, Vol. II, Edited by Ehsan Yarshater. London and New York: Routledge Kegan Paul, 1987, p. 497):
- ⁵⁹ **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, Գլուխ հինգերորդ, էջ 232-233:

THE CODE OF HONOR OF THE ARMENIAN MILITARY (4-5th CENTURIES)

Armen Aivazian

Summary

Armenian historiography contains a considerable amount of information about ancient and medieval Armenian military ideology. In the works of the 5th century historians Pavstos Buzand and Movses Khorenatzi, the commands and legacy of the Armenian sparapets (commanders-in-chief) to their successors lay out in detail the obligations and responsibilities of Armenian warriors. This code of honor, in hierarchical order, requires selfless loyalty to: (1) their fatherland, the Armenian "world," country and independent kingdom; (2) chivalric honor; (3) the king as the most important state institution of Armenia; (4) the people of Armenia, all of its inhabitants, irrespective of their social status; (5) the Christian faith, church and clergymen; (6) family; (7) their kinsmen; (8) their comrades-in-arms.

These norms of conduct share similarities with later medieval West European chivalry of the 8th-14th centuries, as well as the system of values of the Japanese samurais codified during the 16-18th centuries. However, as this study shows, there are significant differences in the priority of obligations of the Armenian honor code, on the one hand, and the West European and Japanese codes on the other. The concept of fatherland developed in the Armenian people long before the adoption of Christianity in the 4th century and was expressed by various terms, such as "Hayotz ashkharh, Yerkir, Tagavorutiun" (the Armenian "world," country, kingdom). In addition to these terms, Movses Khorenatzi directly uses the terms "hayrenik" (fatherland) and "hayrenaser" (patriot); whereas, for example, a similar concept of fatherland as well as the term "fatherland" itself did not emerge in neighboring Byzantium until the 10th century.

The large number of Armenian troops (90-120 thousand men from at least the 4th c. BC to the 11th c. AD) and the dominant role of warriors in Armenian society of that period was conditioned by the pressing need for defense of the country from continual foreign invasions. The study demonstrates that in this historical context the Armenian military's honor code had a solid and lasting impact upon the national character and the worldview of the Armenian people.

КОДЕКС ЧЕСТИ АРМЯНСКОГО ВОИНСТВА (IV–V века)

А. М. Айвазян

Резюме

Армянская историография зафиксировала достаточно богатый материал об идеологии древнего и средневекового армянского воинства.

В сообщениях историков V века Фавстоса Бузанда и Мовсеса Хоренаци приводятся наказы-заветы армянских спарпетов (главнокомандующих войсками страны) своим преемникам, в них в иерархизированном порядке даны обязательства воинов перед: 1. родиной, 2. воинской честью, 3. царем Армении, 4. ее народом, 5. господствующей христианской церковью, 6. семьей, 7. родом, 8. братьями по оружию. Эти заветы перекликаются (с некоторыми отличиями в приоритетности тех или иных обязательств) с изустными моральными кодексами западноевропейского рыцарства (VIII–XIV вв.) и зафиксированными в XVI–XVIII вв. законами чести, принятыми в среде японских самураев.

Понятие родины сложилось у армян задолго до принятия христианства и выражалось посредством различных терминов: «Айоц ашхар, еркир, тагаворутюн» (армянский край, страна, царство) и т. д., но у Хоренаци встречаются и термины «айреник» (родина), «айренасер» («любитель родины» – патриот). В то же время подобное понятие сформировалось в соседней с Арменией Византии лишь в X в.

Учитывая численность армянских войск в IV в. до н. э.–XI в. н. э. (от 90 до 120 тыс. человек) и доминирующую социальную роль воинского сословия в Армении этого периода, связанную с постоянной необходимостью защиты страны от нашествий иноземцев, можно утверждать, что кодекс чести, принятый у армянских воинов, оказал существенное влияние на формирование национального характера, психологии и менталитета армянской нации.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ

ԵՎ

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Եզրերի ճշտում՝ Խայրեհասիրություն,
ազգայնականություն և ազգայնամոլություն

Ազգայնականությունը (նացիոնալիզմ, nationalism) 20-րդ դարում առավել չարչրկված եզրերից է: Պատճառն այն է, որ այս եզրը (տերմինը) ներմուծվել և պարտադրվել է քաղաքագիտության մեջ քաղաքական դաշտից, ստանալով իրարից տարվքեր իմաստներ և ենթահիմաստներ:

Եղել են ժամանակներ, երբ ազգայնականությունը, իր այս կամ այն դրսևորումով, համարվել է դրական երևույթ, օրինակ, 2-րդ համաշխարհային պատերազմից հետո մինչև ապագադոլթագման ավարտը՝ 1960-ական թթ., ազգային-ազատագրական շարժումները ողջունել են ինչպես կոմունիստական ճամբարը, այնպես էլ արևմտյան երկրների ձախ (այդ թվում՝ ոչ-կոմունիստական) ազդեցիկ ուժերը: Սակայն վերջին տասնամյակներում տիրապետող է դարձել հակառակ տեսակետը, որով ազգայնականությունը, դրան նույնացվող ազգային-ազատագրական շարժումներն ու նրանց հիմքում ընկած գաղափարախոսությունները բնութագրվում և հռչակվում են որպես ապակայունացնող, անջատողականություն սերմանող և խրախուսող, հետևաբար՝ պատերազմներ ծնող երևույթ՝ «կախա, որից հաճախ պատերազմներ են դուրս ժայթքում»¹: Այս տեսակետի ջատագովությունը են հանդես գալիս թե՛ մեծ տերությունները, որոնք շահագրգռ-

ված են միջազգային սթաթուս-քվոյի պահպանման մեջ, և թե՛ բազմազգ պետությունների մեծամասնությունը: Վերջիններիս մտավախությունը իրենց ազգային փոքրամասնություններն են ու նրանց հնարավոր ընդվզումները:

Օրինակ, դարաբաղցի Հայերի՝ Հայաստանին վերամիանալու հասկանալի և բոլոր տեսակետներից (պատմական, իրավական, ժողովրդագրական) արդար պայքարը, հայկական կողմի գնահատմամբ՝ ազգային-ազատագրական պատերազմ է, որն արդյունք է հայկական բնիկ տարածքների բռնագավթման և դադուխացման, մինչդեռ ազդեցիկ անկախ-թուրքական քարոզչություն ու նրանց ձայնակցող արևմտյան ակադեմիական ազդեցիկ կենտրոնների ներկայացմամբ՝ դարաբաղցիների շարժումն ընդամենը անջատողականների և ծայրահեղականների ինչ-որ մուլթ «ազգայնական» հորըրըզվող ձգտումների արգասիք է: Վերհիշենք նաև, որ Խորհրդային Միության գոյություն շրջանում ոչ միայն դարաբաղյան ազատագրական պայքարը և նման շարժումներն էին ազգայնականության ծնունդ հռչակվում և մեղադրվում, այլև նույնիսկ՝ ազգային մշակույթի և պատմության անաչառ ուսումնասիրությունը:

Նկատենք նաև այն, որ որոշ պետություններ խրախուսել և խրախուսում են ազգայնականությունը իրենց ձեռնտու գեպքում, հատկապես՝ հակառակորդ պետության փոքրամասնությունն իր շահերի համապատասխան օգտագործելու նպատակով (ինչպես Իրանը, Իրաքը և Թուրքիան օգտագործում են յուրաքանչյուրի տարածքում ապրող քրդերին): Մեծ տերությունները խրախուսում են ազգայնականությունը և նույնիսկ ազգայնամոլությունը (չովիհիզմը՝ մի ազդի կողմից իրականացվող բռնությունն ու ճնշումները մյուս ազդի կամ ազգերի նկատմամբ) նաև այն դեպքում, երբ ցանկանում են այդպիսով ամրապնդել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող դաշնակից պետության ներքին կայունությունը, ինչպես, օրինակ, ԱՄՆ խրախուսում է Իսրայ-

¹ "...the cauldron from which wars often spring." Այս տեսակետն օգտագրվում է համառոտ ներկայացված է, օրինակ, Հետևյալ գրքում՝ Charles W. Kegley, Jr. "Eugene R. Wittkopf, *World Politics. Trend and Transformation*. Fifth ed. (New York: St. Martin's Press, 1995), pp. 445-446, 457-459.

յելի պետութեան ազգայնականութիւնը և Թուրքիայի քաղաքացիականացումը: Եվ ընդհակառակը՝ նույն պետութիւնը կարող է պահպանել ազգայնականութեան որևէ դրսևորում, երբ այն հակասում է իր շահերին:

Այսպիսով՝ ազգայնականութիւնը, հայրենասիրութիւնը և ազգայնամուտութիւնը հաճախ են նույնացվել՝ երբեմն միևնույն դեպքում դնահատվելով և՛ դրականորեն, և՛ իրսաբացասականորեն:

Այս քաղաքական ազդեցութիւնները արդուներում արդի արևմտյան սոցիալական գիտութիւններին մեջ ազգայնականութիւնը եզրը, ըստ ենթաշարադրանքի, կարող է վերաբերել տարբեր երևույթների, այդ թվում՝ ազգային ինքնութեան և դիտակցութեան մակարդակին, այն գաղափարաբանութիւններին ու կոյնկտիվ մտայնութիւններին, որոնց վրա հիմնված են ազգային հանրութիւնները, հայրենասիրական տրամադրութիւններին և մտածելակերպին, հաճախ էլ՝ այլազգիների շահագործմանը, ճնշումներին ու բռնութիւններին և այս տգեղ երևույթները հիմնավորող ու արդարացնող ռասիստական, ֆաշիստական կամ ազգային սնապարծ դերաստավութեան վրա կառուցված գաղափարաբանութիւններին²:

Առաջ է եկել տերմինաբանական մի այնպիսի խառնուշիտ, որն առանց եզրերի կանխամ ու հստակ ճշտորոշման գրեթե անկարելի է դարձնում ազգայնականութիւնը երևույթին վերաբերող պատմական նյութի գիտական անաչառ քննութիւնը: Մա սկսել են նկատել նաև արևմտյան տեսաբանները: Այսպես՝ ամերիկյան ռազմական սոցիոլոգիայի հիմնադիրներից մեկը՝ քաղաքացիական գիտակցութեան խոչոր վիրլուծարան, պրոֆ. Մորիս Ջանովիցը, Արևմուտքում ազգայնականութեան և հայրենասիրութեան դեմ տասնամ-

Քրանսերեն, գերմաներեն, իտալերեն, հին հունարեն, լատիներեն): Այսպիսով՝ 5-րդ դարում Հայաստանում ապրած հայ գիտնականի միջազգային մշակութային շփումների աշխարհն ընդգրկում էր Հնդկաստանից մինչև Հոմ ու Եգիպտոսից մինչև Միջին Ասիա և Հյուսիսային Կովկաս ընկած ահռելի տարածութիւնը, այսինքն՝ այդ ժամանակի գրեթե ամբողջ քաղաքակիրթ աշխարհը (բացառութեամբ՝ ավստրալիայի հարաբերական ինքնամեկուսացածութեան մեջ գտնվող Չինաստանի): Ապշեցուցիչ է, որ Եգիպտոսից 1000 և 1200 տարի հետո՝ աշխարհագրական մեծ հայտնագործութիւնների դարաշրջանում, Անգլիայում ու Ռուսաստանում ապրած հեղինակների հետաքրքրութիւնն այլ լեզուների և մշակույթների հանդեպ զգալիորեն ավելի նեղ էր և՛ աշխարհագրական, և՛ մշակութաբանական տեսանկյուններից: Այս երևույթի պարզաբանումը, սակայն, կարող է առանձին քննութեան: Նկատենք սակայն մի կարևոր հանդամանք. Քարլուն և Լոմոնոսովն ապրել են արդեն գաղութատիրական հատկանիշներ ձեռք բերած աշխարհում՝ միջազգային քաղաքական համակարգում Եվրոպայի գերիշխանութեան օրոք, այդ պատճառով էլ նրանք առավելապես հետաքրքրված էին եվրոպական ազգերի մշակութիւններով:

Դ. Հայ քաղաքական մտքի գաղափարականացումը 5-րդ դարում

Ինչպես տեսանք, 5-րդ դարում հայ մտավոր ընտրանին լրջորեն մասնակցել է հայոց լեզվի մշակութային և քաղաքական-ռազմավարական նշանակութիւնը: Ընդ որում՝ Հայաստանում ազգային լեզվի դնահատումները նկատարկումներն անկասկած ծայր էին առել դեռևս մինչև գրիչի գոռալը: 5-րդ դարում Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Եղիշեի վերը քննված դատողութիւնները փաստում են ոչ միայն հայերի ազգային ինքնագիտակցու-

² Հմտ. Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1992), p. 3.

Հետեաբար, կարելի է վստահ եզրակացնել. Հայկական ինքնօրինակ քաղաքակրթության ծանրակշիռ վկայություններինց մեկը՝ Հայ մտքի անառարկելի ժառանգորդությունն է: Որքանով որ հայ միտքը միշտ եղել է նախորդ հայ մտքի անընդհատական շարունակությունը, ճիշտ այնքանով էլ հայ ազգը եզակի քաղաքակրթության դասական կրող է⁶⁵:

Գ. Հայաստանի մշակութային շիտմաների ընդարկումը 5-րդ դարում

Համեմատենք նաև 5-րդ դարի Հայ, 16-րդ դարի անգլիացի և 18-րդ դարի ռուս հեղինակների ծանոթությունն այլ ժողովուրդների լեզուներին և նրանց՝ օտար մշակույթների հանդեպ ունեցած հետաքրքրվածությունը: Եղիշեն ամենաշատ այլ լեզուներ նշած ու զնահատած հեղինակն է՝ 9 լեզու (Հունարեն, լատիներեն, հոներեն, տտորերեն, պարսկերեն, ալաներեն, գոթերեն, եգիպտերեն, հնդկերեն): Քարյուն հիշատակել է ընդամենը 4 լեզու (իտալերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հոլանդերեն), իսկ Լոմոնոսովը՝ 6 լեզու (իսպաներեն,

гической, формуле содержится истина» - Г. А. Геворкян. Национальная культура с точки зрения философии истории (Ереван, Изд. АН Армении, 1992), с. 24, 25.

⁶⁵ Հ. Ա. Գևորգյանի մի դիտողությունը, թվում է միանգամայն համահունչ է վերը կատարվածեզրահանգմանը. «...վեուական ապացուցողական նշանակություն ունի Հայկական մշակույթի, որպես ազգակազմիչ գործոնի, պատմական զարգացման անընդմեջությունը, այսինքն՝ այն հանգամանքը, որ Հայկական մշակույթը դարձառարձակ ծավալել է իր ներքին հարստությունը քաղաքակրթությանտարբեր դորաշրջաններում՝ հավաստելով իր կրող ժողովրդիանընդմեջ պատմականդրությունը իր հայրենիքում» - Հ. Ա. Գևորգյան, Ազգ, ազգային պատկերացում, ազգային մշակույթ, էջ 23, ան՝ս նաև էջ 30-31, ուր խոսվում է Հայաստանում անտիկմշակույթիև քրիստոնեությունիսինթեզիմասին:

Բ. Հայ մտքի ժառանգորդությունը և հայկական քաղաքակրթությունը

Հայ մտքի բացառիկ շարունակականության ընդամենը մի առանձին, սակայն՝ ջցուն օրինակ է այն, որ 5-ից մինչև 18-րդ դար Հայ մատենադրությունը պահպանել, վերարժարծել ու զարգացրել է Հայոց և այլ լեզուներին եղիշեի տված զնահատականները:

Անգլիացի մեծանուն փիլիսոփա Ռոբին Քոլինզվուդի բնորոշմամբ՝ քաղաքակրթությունը ոչ այլ ինչ է. քան հասարակության մտքի տեական ինքնաշարունակ պարզացում. «Քաղաքակրթությունը մի գործընթաց է. որն անցյալի միտքը վերածում և կապակցում է ներկա իրականությանը: Ըստ էության, ողջ արդիական միտքը՝ անցյալի մտքի ինքնաբար շարունակությունն է ու դրա քննադատությունը»⁶³: Անկախաբար նույն եզրահանգման է եկել (ընդ որում՝ ավելի պարզ ձևակերպումով) Հայաստանցի նշանավոր փիլիսոփա, ահադ. Համլետ Գևորգյանը, միայն թե «քաղաքակրթություն» Հասկացությունն արտահայտելով «մշակույթ» եզրով, ահա. «Մշակույթի ժառանգման մեխանիզմը ժառանգորդության մեխանիզմ է՝ մշակութային ավանդույթի գործելու, մշակույթի՝ ինքն իրեն վերստեղծելու և վերանորոգելու մեխանիզմ: ...Մշակույթը կերտվում է մշակույթի կերտման միջոցով. այս անիմաստ կրկնություն թվացող բանաձևի մեջ է ճշմարտությունը»⁶⁴:

⁶³ "Civilization is the process of becoming, linking the thought of the past to the present. Thus all present thought implicitly continues and criticizes the thought of the past." - David Miller, ed., *The Blackwell Encyclopaedia of Political Thought* (Oxford-Cambridge: Blackwell Publishers, 1995), p. 85.

⁶⁴ «Механизм наследования культуры - это механизм преемственности: функционирования культурной традиции, воссоздания и обновления культурой самой себя. ...Культура создается через созидание культуры: в этой, с виду тавтоло-

Հայրենասիրական-ազգայնական ճիշտ նույն մտայնությունն ու գաղափարախոսությունն էին մղել Եղիշեին անելու նմանօրինակ (թեև այս անգամ հայոց լեզվին չվերաբերող) մի այլ հետաքրքրական համեմատություն.

Երկու գետով և [Նոյյան] տապանով շատ ավելի բարձր ենք, քան մյուս բոլոր [ազգերը]:
[Երկու գետով եւ տապանան գեր ի վերոյ ենք, քան գլորովս]⁶²:

Պատահական չէ նաև այն, որ Քարյուն՝ անգլիերեն լեզվի զերագանցություն մասին իր «Նամակը» երկնել է Եղիսարեթ թագուհու (1558-1603) գահակալման ամենափառավոր տարիներին, երբ 1588 թ. իսպանական «Անհաղթ արմաղալի» ջախջախումով Անգլիան արդեն հաստատել էր իր գերիշխանությունը ծովերի վրա: Նմանապես, Մ. Լոմոնոսովը գովարանել է ռուսերենը Ռուսաստանի աննախադեպ հզորացման շրջանում՝ 18-րդ դարի երկրորդ կեսին: Եղիշեի և վերջ նշված մյուս հայ հեղինակների պարագայում խնդիրը բավականին տարբեր էր. հզոր Հայաստան պետությունն անցյալ էր (թեև ոչ շատ հեռավոր անցյալ), սակայն հայ ազգը՝ որպես դարեր առաջ ձևավորված առանձին կենսունակ քաղաքակրթություն, ամենևին չէր հաշտվել լիբրալ անկախության կորստի հետ, այլ շարունակ մաքառում էր կատարյալ ազատության և անկախության հասնելու համար: Ռազմաքաղաքական տեսակետից անբարենպաստ ժամանակներում հայ ազգի ընտրանին իր ուշադրությունն ու աշխատանքն ուղղում էր հատկապես մշակութային ոլորտի վրա՝ ազգային ուրույն ինքնությունն ամրապնդելու և զարգացնելու կամ, նվազագույնը, այն գոնե առժամանակ անխաթար պահպանելու նպատակով:

⁶² Լևոն Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», էջ 245:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Հայ հեղինակների, Քարյուի և Լոմոնոսովի ձևակերպումների մուլցակառույթյան սոցիալ-պատմական հիմքերը

Մայրենի լեզվի զերագանցության մասին Եղիշեին և Հայ մյուս հեղինակներին, Քարյուն և Լոմոնոսովին մղել են խոսել ո՛չ այնքան այդ լեզուների բարեմասնությունները, որքան ազգային ինքնագիտակցության հաստատման կամ վերահաստատման պատմական ժամանակները: Հայ և օտարազգի այդ հեղինակները պարզապես կրել են սոցիալ-պատմական նույնանման իրավիճակների նույնական աղղեցությունը, և, անկախ իրենց միջև եղած ժամանակային-տարածական մեծ հեռավորությունից, զարմանալի նույնակնություններ էլ արտահայտել են այդ ազգեցությունը: Խնդիրն այն է, որ տրամաբանություն հայտնի օրենքների համաձայն, որևէ բանի զերագանցություն-առավելությունը կարելի է ցուցադրել այն նմանատիպ այլ բաների հետ (այս դեպքում՝ այլ լեզուների հետ) համեմատության մեջ զննելով միայն: Սա էլ հենց արել են Եղիշեն՝ 450-460-ական թթ., Վարդան Արևելցին՝ 1242-44 թթ., Մխիթար Այրիվանեցին՝ 1289 թ., Հովհաննես Երզնկացին՝ 1291 թ. Գրիգոր Տաթևացին՝ 1397 թ. Հայաստանում, Քարյուն՝ 1595-96 թթ. Անգլիայում և Լոմոնոսովը՝ 1755 թ. Ռուսաստանում:

Կերակրով՝ փրանցիզն Է ճազոք, Ալեմանն՝ իտոլ, Իտալիանն՝ զգաստ, Սպանիոլն՝ փորրակեր, Ինգլիզն՝ շուպլ: Խորհրդով եւ մալախաթով՝ Տրանցիզն Է հուպնեպ եւ վոսպ, Ալեմանն՝ ծակր, Իտալիանն՝ բարակ, Սպանիոլն՝ զգոլջ, Ինգլիզն՝ վստահ: Ալեմանն Է արք, Ֆրանցիզն՝ արծիւ, Իտալիանն՝ աղուես, Սպանիոլն՝ փիլ (=փիղ), Ինգլիզն՝ առիւծ» - Ղ. Վանանդեցի, Պալմն շափոյ, կշոոյ, թոոոյ եւ դրամից բոյոյ աշխարհի: Անստերդամ, 1699, էջ 50-51:

Անգլիացի հեղինակներ Հանս Ռոջերը և Լիա Գրինֆիլդը միահամուռ զարմանքով նկատել են, որ ուսուցիչներին հասցեագրված այս ձոնը բացահայտ նմանություն ունի Քարլոսի՝ անգլիերենին նվիրած գիֆերամբի հետ: Գրինֆիլդը նաև իրավամբ համոզմունք է հայտնել, որ Լոմոնոսովը չէր կարող կարգացած լինել 16-րդ դարի անգլիացի երկրորդական մի հեղինակի երկը և այնտեղից քաղած լինել իր միտքը⁶⁰:

Մեր կողմից էլ ավելացնենք, որ ո՛չ Քարլոսն, ո՛չ էլ Լոմոնոսովը բնավ չէին կարող ծանոթ լինել նրանցից շատ ավելի վաղ՝ 5-րդ դարում հայերենի մասին Եղիշիի արած նույնատիպ դատողություններին, և ո՛չ էլ այդ դատողությունների՝ Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու, Հովհաննես Երզնկացու կամ Գրիգոր Տաթևացու հետագա վերաշարադրություններին:

Ի դեպ, լեզուների մասին Կառլ V կայսրի ասույթը հայկական մի աղբյուր մեջբերում է Լոմոնոսովից կես դար անաջ: Դուկաս Վանանդեցին 1699 թ. հրատարակված Գանձ չափոյ, կշոյ, թուց եւ դրամից բոլոր աշխարհի երկում նշում է.

Կարլո Քուինթո, որ թուին Քրիստոսի 1519 վարնաց Կայսերական իշխանութիւն, կասէր մեծամեծացն. «Ես կամէի, որ գիտուն մարդն իւր բարեկամին հետ Յրանցիզի խօսի, իւր միուն հետ՝ Ալլեմանի, իւր խաթունին հետ՝ Իտալիանի, Աստուծոյ հետ՝ Սպանիոյի, դուշերի եւ թշննոց հետ՝ Ինգլիզի լեզուսս»⁶¹:

⁶⁰ Liah Greenfield, *Nationalism, op. cit.*, p. 533, note 105. cf. Hans Rogger, *National Consciousness in Eighteenth-Century Russia* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1960), p. 103:

⁶¹ Ապա Լ. Վանանդեցին բերում է արդեն սեփական համեմատական զիտարկումները եվրոպական ժողովուրդների մասին. «Ազգն Յրանցիզաց քաղաքավարութեամբ է թավազացի, Ալլեմանն՝ բարեկամ, Իտալիանն՝ ուշիդ, Սպանիոյն՝ փքսպի, Ինգլիզն՝ հպարտ: Զգեստոց՝ փրանցիզն է փոփոխական, Ալլեմանն՝ հետառող, Իտալիանն՝ խեղճ, Սպանիոյն՝ փառամոլ, Ինգլիզն՝ պապոյուն:

Ի վերջո, նույն 1700 թ. Պետրոսը ձեռնարկեց լեզվական կարևոր բարեփոխումներ և ուսուցիչներին հետագա զարգացումը դրեց պետական հիմքերի վրա: Թուրքաց լեզվի ջատագով մտավորականների թվում, նախ և առաջ, պետք է հիշատակել Մխիթարի Լոմոնոսովին, որը 1755 թ. սեպտեմբերի 20-ով թվագրված մի գրություն մեջ ահա այսպիսի դատողություններ է անում.

... ուսուցաց լեզուն եվրոպայում բոլորից (իմա՝ մյուս բոլոր լեզուներից, Ա. Ա.) մեծ է. և ո՛չ միայն այն վայրերի մեծությամբ, որտեղ նա իշխում է, այլև հե՛նց իր սեփական ընդգրկվածությունը և բավարար լինելով...

Հոմեոպատիկ կայսր Կարլ Հինգերտըն ասում էր, թե իսպաներենով վայել է խոսել Աստու, Ֆրանսերենով՝ բարեկամների, գերմաներենով՝ թշնամիների, իտալերենով՝ իրական սեռի հետ: Սակայն, եթե նա տիրապետեր ուսուցիչ լեզվին, ապա, իհարկե, ասվածին կավելացներ, որ ուսուցիչներով բոլորի հետ էլ խոսելը վայել է, քանի որ ուսուցիչներն ահա կրթներ իսպաներենի հոյակապությունը, Ֆրանսերենի կայտառությունը, գերմաներենի կարծրությունը, իտալերենի նրբությունը և, ավելին՝ Հունարենի և լատիներենի հարստությունն ու պատկերելու մեջ համառոտություն ունի:

[...язык российский, не токмо обширностию мест, где он господствует, но купно и собственным своим пространством и довольствием велик перед всеми в Европе.... Карл Пятый, римский император, говаривал, что испанским языком с богом, французским - с друзьями, немецким с неприятельми, итальянским - с женским полом говорить прилично. Но если бы он российскому языку был искусен, то, конечно, к тому присовокупил бы, что им со всеми оными говорить пристойно, ибо нашел бы в нем великолепие испанского, живость французского, крепость немецкого, нежность итальянского, сверх того, богатство и сильную в изображениях краткость греческого и латинского языка.]⁵⁹

⁵⁹ М. В. Ломоносов, *Избранные произведения*. Том 2. История, филология, поэзия (Москва: "Наука", 1986), с. 195:

ՌՌՒՍԵՐԵՆԸ

Բոլշայա սովետական հանրագիտարանը նշում է, որ 17-18-րդ դարերում «միասնական գրական ուսուց լեզու գոյություն չուներ»⁵⁴: Հայկական սովետական հանրագիտարանն, ամփոփելով Բոլշայա սովետական ուսուց լեզվին նվիրված հոդվածի շարադրանքը, եզրակացնում է, որ ուսուցիչներն «իր հնչյունական, բառային, քերականական, ոճական ամբողջական համակարգումն ու նորմավորումը ձևեր է բերել 19-րդ դարի 1-ին տասնամյակներին, հատկապես Ա. Ս. Պուշկինի ստեղծագործությունների շնորհիվ»⁵⁵:

Հարկ է ավելացնել, որ այս փայլուն արդյունքին նախորդել էին ուսուցչական մտավորականների և պետական գործիչների շուրջ մեկդարյա ջանքերը⁵⁶: Այսպես՝ 18-րդ դարի սկզբի դրությունը, կողք-կողքի գոյատևում էին եկեղեցական-սլավոնական լեզուն, որին քչերն էին քաջագիտակ, և խոսակցական ուսուցիչները: Ռուսերենի զարգացածության մակարդակն այնքան անբավարար էր ուղեկցած պետական մեքենայի խնդիրները լուծելու համար, որ 1700 թ. մի պահ, Պետրոս Ա-ը նույնիսկ Ռուսաստանի պաշտոնական լեզու էր ցանկանում հռչակել հոլանդերենը⁵⁷: Մի հետաքրքրական փաստ. բժշկագիտության առաջին ուսուցիչները Կ. Ի. Շչեպինը, նախածնունդով ուսուցիչներով դասավանդել իր առարկան, խոստովանում էր, որ «ավելի հեշտ է տասը դասախոսություն կարգալ լատիներեն, քան մեկ հատ ուսուցիչ»⁵⁸:

⁵⁴ Большая советская энциклопедия. Том 22, Москва, 1975, с. 410.

⁵⁵ Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 10. Երևան, 1984, էջ 90-91:

⁵⁶ Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, pp. 243-245, 247.

⁵⁷ Նույն տեղում, էջ 243:

⁵⁸ Նույն տեղում, էջ 245:

Միայն սկսած 14-րդ դարից ֆրանսերենն աստիճանաբար դառնում է գիտնականների և գրողների (այս, ինչպես տեղին նկատում է Գրինֆելդը, կոլեկտիվ ինքնության խորհրդանիշեր ստեղծողների) կրթոս սիրո առարկա և այդ ճանապարհով էլ՝ ֆրանսիացու ինքնության կենտրոնական խորհրդանիշը⁵²:

Դիտելի է, որ անգլիացիները ուրիշ լեզուներից կատարված փոխառություններն էին համարում անգլերենի առավելությունը, իսկ գերմանացի և ֆրանսիացի ազգայնականները բարձր էին ղնահատում օտար լեզվական ազդեցություններից իրենց լեզուների իբր գերծ մնալը (սակայն, միաժամանակ, ֆրանսիացիներն արհամարհանքով նկատում էին, թե որքան լի է փոխառություններով գերմաներենը)⁵³:

Հետաքրքիր է, որ վերը բերված օրինակներում, հայերենի, անգլերենի և ֆրանսերենի գերազանցությունն ընդգծելիս, տարբեր հեղինակներ բոլորովին տարբեր ժամանակներում և աշխարհաքաղաքական միջավայրներում, այդ լեզուներին ավել են զարմանալիորեն նույն բնութագրությունը՝ «համեղ», «համեղական», «համեմական», «քաղցրահամ»:

praise, that it can be compared to the language spoken by the angels in heaven.”

⁵² Նույն տեղում, էջ 98-99:

⁵³ Liah Greenfeld, *Nationalism, op. cit.*, pp. 98, 368.

ՖՐԱՆՍԵՐԵՆԸ

Ֆրանսիայում նույնատիպ վերաբերմունքը Ֆրանսերենի նկատմամբ ձեւավորվել էր է՛լ ավելի վաղ, թեև, ինչպես նկատում է Գրինֆելդը, Ֆրանսերենն ամբողջ Ֆրանսիայի լեզուն չէր, այլ միայն Փարիզինը. նրանով ոչ միայն չէին խոսում, այլև՝ ընդհուպ մինչև 15-րդ դար, չէին գրում Ֆրանսիական թագավորության մյուս նահանգներում: 11-րդ դարում Ֆրանսիայում խոսակցական լեզվով ստեղծված գրականութունն անվուրմորմանդերեն էր, իսկ 13-14-րդ դարերում, նայած թե ո՞ր նահանգից էր Հեղինակը՝ պիկարդերենը, շամպայներենը և բուրգունդերենը, որոնցից յուրաքանչյուրը բաժանված էր բարբառների: Սակայն, 12-րդ դարից ի վեր Ֆրանսերենը դարձել էր Եվրոպայի վերնախավերի լեզուն: 1148 թ. վերաբերող մի վկայության համաձայն, դեռ այդ ժամանակներում Ֆրանսերեն չիմացող որևէ մարդ բարբարոս էր համարվում⁵⁰: 13-րդ դարի Հեղինակներն արդեն բնութագրում են փարիզյան Ֆրանսերենը որպես «աշխարհի ամենագեղեցիկ լեզու», «ամենաքաղցրը», «ականջի և լսողության համար ամենազուրեկանը» (*la plus delitable a ouir et a entendre*):

Ահա այդպիսի մի գովաբանում.

Ֆրանսերեն քաղցր լեզուն աշխարհում ամենագեղեցիկն է, ամենանրբագեղն ու ազնվականը, ամենաբնորոշվածն ու սիրվածը, քանի որ Աստված այն, հանուն իր փառքի և գովքի, դարձրել է այնչափ քաղցրահամ և սիրելի, որ այն կարելի է համեմատել երկնքում հրեշտակների խոսած լեզվին⁵¹:

⁵⁰ Նույն տեղում, էջ 98:

⁵¹ Նույն տեղում: Գրինֆելդը տրամադրել է այս մեջբերման անգլիերեն թարգմանությունը միայն. "The sweet French tongue is the most beautiful, gracious and noble language in the world, the best accepted and loved. For God made it so sweet and lovable for his glory and

րենց ենք թողել: ...ինչպես կարող է մի լեզու, որ ունի այս բոլորը, չհնչե՞լ այլ կերպ, քան քաղցրահամությամբ լի:

[The Italian is pleasurable but without synewes, as to stillye fleeting water; the French delicate but ouer nice, as a woman scarce daring to open her lipps for feare of marring her countenance; the Spanish maiesticall, but fulesome, running too much on the O, and terrible like the deuill in a playe; the Dutch manlike, but withall very hoarse, as one ready at every worde to picke a quarell. Now wee in borrowing from them geue the strength of Consonantes to the Italyan, the full sounde of wordes to the French, the varietye of terminacions to the Spanish, and the mollifseinge of more vowellts to the Dutch; and soe (like bees) gather the honey of their good properties and leave the dreggs to themselves. ...howe canne the languadge which consisteth of all these sounde other then most full of sweetnes?]⁴⁹

⁴⁹ Liah Greenfeld, *Nationalism*, op. cit., pp. 69-70, 78.

ԱՆԳԼԵՐԵՆԸ

Այսպես՝ անգլիացիներն իրենց նվիրվածությունն ու սերը անգլիերենի հանդեպ արտահայտում են սկսած 16-րդ դարից: Անգլիացի մտավորականների մեծամասնությունը անգլիերենը համարում էր բոլոր մյուս լեզուներից շատ ավելի վերկանգնած: Այդ վերաբերմունքի լավագույն արտահայտությունը Ռիչարդ Քարլոֆի՝ 1595-1596 թթ. գրած ստեղծագործությունն է, որ կոչվում է «Նամակ անգլիերեն լեզվի գերազանցության մասին» (*Epistle on the Excellency of the English Tongue*): Քարլոֆն հակադրում է անգլիերենը եվրոպական մի քանի լեզուների՝ ընդգծելով իր մայրենիի առավելությունները և մյուսների թերությունները: Անչափ հետաքրքիր է դիտել Քարլոֆի մտքի տրամաբանական զուգահեռները Եղիշի վերջ մեջբերված գիտահատկանքների հետ, ահավասիկ.

Իտալիերենը հաճելի է, բայց անմիտ է, ինչպես խաղաղ հոտոջ ջուրը: Ֆրանսերենը՝ նրբագիզ է, սակայն չափից դուրս ձևական, ինչպես կինը, որ երկնչում է շուրթերը բացել, վախենալով վնասել իր դեմքը: Իսպաներենը ազնվական է, սակայն չափազանց կեղծ է, չափից շատ է «Օ» գործածում, ու նաև սարսափազդու է, ինչպես սատանան թատրոնի ներկայացման մեջ: Հոլանդերենը⁴⁶, տղամարդկային է, սակայն շատ խոպոտ, ինչպես մեկը, որ պատրաստ է ուզածը բռնից վահել: Իսկ մենք, փոխառելով սրանցից, իտալիերենից ստացել ենք բաղաձայնների ուժը, ֆրանսերենից՝ բառերի ամրոջլակուն հնչյունավորումը, իսպաներենից՝ վերջավորությունների զոնհազանությունը, հոլանդերենից՝ լրացուցիչ փոփոխացնող ձայնավորները: Այսպիսով (ինչպես մեզուները) հավաքել ենք մեզրը նրանց լավ ունեցածից, իսկ նրանց մրուրն՝ ի-

⁴⁶ Ձի բացառվում է թեև պակաս հավանական է, որ այստեղ Քարլոֆն նկատի ունի ոչ թե հոլանդերենը, այլ գերմաներենը, քանի որ Հին անգլիերենում the Dutch նշանակել է նաև գերմաներեն: Գրինֆելդն այս հարցին չի անդրադարձել:

վերջը շարադրվածն ինքնին բավարար է փաստելու համար հայոց լեզվի մեծ ներուճակություն և հայերի հայրենասիրական-ազգայնական գաղափարախոսությունը հուժկու, շարունակական փոխազդեցությունները:

* * *

Ե՞րբ է ազգային լեզվի նկատմամբ նույն կամ նմանատիպ վերաբերմունքը ձևավորվել Եվրոպայում: Այս մասին հետաքրքրական փաստեր կան սոցիոլոգ-պատմաբան Լիա Գրինֆելդի վերջերս լույս տեսած ուշագրավ աշխատության մեջ, որը նվիրված է անգլիացիների, ֆրանսիացիների, ռուսների, գերմանացիների և ամերիկացիների՝ որպես ազգ ձևավորվելու ընթացքի քննությանը: Գրինֆելդը մասնավորապես նկատել է, որ սեփական լեզուների նկատմամբ հատուկ այս վերաբերմունքը առաջացել է ազգերի ձևավորմանը և նրանց մեջ հայրենասիրական-ազգայնական տրամադրությունների առաջացմանը պուզընթաց⁴⁷:

⁴⁷ Հմմտ., օրինակ, Liah Greenfield, *Nationalism, op.cit.*, pp. 69-70, 78 (անգլիերենի վերաբերյալ), 97-99 (ֆրանսերենի վերաբերյալ), 243-245, 247 (ռուսերենի վերաբերյալ), 368-369 (գերմաներենի վերաբերյալ):

սուժ էին այն լեզվով, որը Հայաստանում էր, քանի որ Նոյր և Կրա որդիք, որոնց էր մնացել այդ ժամանակ Աղամի բնիկ լեզուն՝ Հայաստանում էին և այնտեղ բազմացան...

[...այն առաջին բարբառ, որով խօսելին մարդիկ լեզամայ անտի մինչև քաժամումն լեզուաց՝ հայոցն էր, որ եւ մնաց մինչև ցայժմ: Եւ այս կարէ հաստատիլ դիրքաւ, վասն զի յառաջ քան զայն բաժանումն մարդիկ խօսելին այնու լեզուաւ, որ էր ի Հայաստան, զի Նոյ եւ որդիք նորա, յորս ցայնժամ մնաց բնիկ լեզու աղամեան՝ ի Հայաստան էին և անդ բազմացան...]⁴⁵

Փորձելով Հաստատել Հայոց լեզվի՝ Աստծու և Աղամի լեզուն (այսինքն՝ ընտրազուն լեզուն) լինելու դրույթը, Չամչյանն ահա այսպես է զարգացնում Գրիգոր Տաթևացու՝ Եզրիչի խոսքի մեկնությունը.

...տեսնում ենք, որ ովքեր կատարելապես և տիրապես գիտեն Հայոց լեզուն՝ իր բոլոր հատկություններով, հնչյուններով և առաջանություններով, կարողանում են ճիշտ արտասանել այլ ազգերի այն բոլոր բառերը, որ սովորում են, կարծես՝ իրենց հարազատ լեզուն լինի: Իսկ այլ ազգերը չեն կարողանում ուրիշների բառերը ճիշտ հնչեցնել, ինչպես և Հայտնաբերում ու ցույց է տալիս փորձը: Այստեղից բացահայտվում է, որ սկզբնական ու հարազատ բարբառը Հայերի լեզուն է, և ո՛չ մյուսներիը, որոնց լեզուներն ածանցյալ են նրանից:

Իբր զի տեսանեմք, զի որք միանգամ կատարելապես եւ տիրապէս գիտեն զլեզու հայոց ըստ ամենայն յատկութեանց նորին եւ ըստ հնչման առոգանութեան, զամենայն բառ այլոց ազգաց՝ զոր ուսանին, կարեն ուղիղ արտասանել, որպէս թէ բնական բարբառ էր նոցա: Իսկ այլ ազգք ոչ կարեն զբառս այլոց ուղիղ հնչել, որպէս եւ յայտնի ցուցանէ փորձն, որով երեւի, թէ սկզբնական եւ հարազատ բարբառ է լեզու հայոց, իսկ այլոցն ո՛չ, այլ՝ ածանցեալ ի նմանէ]⁴⁶:

աղաչական ստորին,
պերճական պարսիկն,
գեղազանդ աղուանն,
ծաղրական մունդն,
խափարածայն եգիպտացին,
ճրճուղական հնդիկն,
համեղական հայրն, որ կարող է զամենայն լեզուս յինքն ամփոփել և բոլոր խօսիլ, և այլքն ո՛չ՝ որպես ասուցաւ ի վերոյ]⁴²:

Հայ հին, միջնադարյան և ուշմիջնադարյան ուրիշ հեղինակներ էլ են անդրադարձել Հայոց լեզվին նույն սիրով ու նմանափայ արժեքավորումներով: Կորյունի Վարք Մաշտոցին երկը, փաստորեն, ամբողջովին Հայոց գրի ու գրականության փառաբանումն է, որն առաջին իսկ նախադասությամբ հռչակում է Հայոց գրերը «Աստուածապարգեւ»՝ «ՁԱզքանազեան Ազգին եւ զՀայաստան աշխարհին զԱստուածապարգեւ գրոյն...»⁴³:

Հայոց լեզուն Աստծու լեզու հռչակող մի հետաքրքրաշարժ ուսումնասիրություն էլ պատկանում է մխիթարյան միաբան Միքայել Չամչյանին (1738-1823): «Ի վերայ լեզուին Հայոց, թէ իցէ առաջին» վերնագրով այս գործն, իբրև առանձին գլուխ, ներառվել է Չամչյանի «Հայոց պատմության» Ա հատորում (լույս է տեսել 1784 թ.)⁴⁴: Ահա այս բավական ծավալուն և մանրազնին վերլուծության հիմնական եզրակացությունը.

...այն առաջին լեզուն, որով խոսում էին մարդիկ Աղամից սկսած մինչև լեզուների բաժանումը՝ Հայոցն էր, որ և մնացել է մինչև այժմ: Եվ սա կարելի է դուրսբերյալ հաստատել, չէ՞ որ մինչև այդ բաժանումը մարդիկ խո-

⁴⁵ Նույն տեղում, էջ 153:

⁴⁶ Նույն տեղում, էջ 156:

⁴² Նույն տեղում, էջ 299:

⁴³ Կորյուն, Վարք Մաշտոցի. Աշխ. Մ. Արեղյանի. Երևան, 1941, էջ 22 (ՀՃՍՍ, էջ 42, 48):

⁴⁴ Մ. Չամչյանից. Պատմութիւն Հայոց: Հա. Ա. (Վենետիկ, 1784), էջ 153-164:

Արդ, այս հատվածում, թեև փոքր-ինչ վերաիմաստավորված վիճակում, պահպանվել է Եղիշեի մի միտքը, որը Վարդանի «Տրեղերական պատմութեան» միջին դուրս է մնացել, այն է՝ որ հայոց լեզուն ու հայր «կարող է բոլոր լեզուները իր մեջ ամփոփել» («կարէ զամենն յինքն ամփոփել», Տաթևացու վերաշարադրությամբ՝ «բոլորապես կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ»): Հետևաբար, Տաթևացին ձեռքի տակ է ունեցել Եղիշեի «Արարածոց մեկնության» բնագիրը և այս հատվածը անկասկած քաղել է ուղղակիորեն Եղիշեից, առանց միջնորդության:

Տաթևացին մեկնաբանել է նաև Եղիշեի խոսքի շարունակությունը.

Դարձեալ՝ խառնակի լեզուիմ այն է, որ ընդ պատուհասն գրարութիւն խառնեաց, զի թէպէտ բաժանումն լեզուաց պատուհաս նրեի, այլ պիտանի է: Նախ, ի գեղեցկութիւն լեզուիմ, զի որպէս գոյն առ գունով պայծառանայ, եւ արուեստ առ արուեստ, նոյնպէս՝ լեզու առ լեզու գեղեցկանայ ի խօսքն⁴¹:

Քիչ անց Տաթևացին դարձյալ կրկնում է Եղիշեին (սակայն «գութն» փոխարինում է «մունդն»ով, «գեղեցկագարը ալանն»ը՝ «գեղազանդ աղուանն»ով և կատարում է մի քանի այլ մանր փոփոխություններ).

Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց,
փափուկ հեյլենն,
սաստիկ հոռմալեցիմ,
սպառնական հոնիմ,

կաղրված է «կատարային» (կատարյալ է համարված հայոց լեզուն), օրինակ, համեմատելով Վարդան Արևելցու հետևյալ հատվածների հետ. «զի կատարեալ գիտութիւնն Աստուծոյ ի հայն է մարդկանս մասնավոր միայն է գիտութիւն» կամ «զի Աստուծոյ գիտութիւնն միայն է ընդ հանուր, իսկ մարդկային գիտելս ամենայն մասնաւոր է» (Վարդան Արևելցի. Մեկնութիւն քերականի, էջ 73-74, 76):

⁴¹ Նույնտեղում:

Գրիգոր Տաթևացի (1346-1409)

Եղիշեի գնահատականը՝ շուրջ մեկ հազարամյակ անց վերաշարադրելու մեկնաբանել է նաև Հայ եկեղեցու և նրա դավանանքի ջատագով, Հայ միջնադարյան ազգայնակենտրոն խոշոր տեսաբան Գրիգոր Տաթևացին: Լ. Խաչիկյանը ի ցույց է դրել մի շարք հատվածներ, որոնք Տաթևացին վերցրել է Եղիշեի «Արարածոց մեկնութիւն»ից (ըստ Խաչիկյանի՝ հիմնականում Վարդան Արևելցու միջնորդությամբ): Խաչիկյանը միաժամանակ նշել է, որ իր համեմատած «օրինակների թիվը կարելի է անչափ շատացնել»³⁸: Լրացնենք Խաչիկյանի բերած համեմատումների շարքը մի ակնհայտ օրինակով ևս:

1397 թ. ավարտած «Գիրք Հարցմանց» իր աշխատության մեջ, Գրիգոր Տաթևացին լեզվի Հարցերին նվիրել է երեք գլուխ³⁹, որտեղ նա, իմիջիայլոց, վերաշարադրում ու մեկնաբանում է Եղիշեին.

Հուշների լեզուն փափուկ է, հոռմալեցունը՝ սաստիկ, հոնիմը՝ սպառնական, հնդիկիմը՝ ճովազող, պարսկիմը՝ պերճ, իսկ հայինը համեղ է և [հայր] լիապես կարող է բոլոր լեզուները ճշգրիտ յուրացնել: Իսկ ուրիշները հայոց լեզուն ազճատված և սխալ են ուսանում, քանի որ մասնավոր է նրանց լեզուն:

[Ձի փափուկ է հեյլենացիմ և սաստիկ հոռմալեցիմ, սպառնական հոնիմ և ճըճուող հնդիկիմ, պերճական պարսիկ և համեղ հայոյն, որ բոլորապես կարող է զամենայն լեզու ուղղակի ուսանիլ: Եւ այլք գիայոյն՝ ծեքական և թիր ուսանիմ, զի մասնատր է լեզու նոցա:]⁴⁰

րը հին՝ միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.), Երևանի համալսարանի Հրատ., 1954, էջ 264:

³⁸ Հեան Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», էջ 211-213. Հմմտ. Փ. Անթապյան. Վարդան Արևելցի. Գիրք Ա, էջ 287:

³⁹ Գրիգոր Տաթևացի. Գիրք հարցմանց. Կոստանդնուպոլիս, 1729, էջ 297-299:

⁴⁰ Նույն տեղում, էջ 297: «Մասնավորն» այս դեպքում ակնհայտորեն հա-

Մխիթար Այրիվանեցի (ծն. թ. անհտ.-մոտ 1305) և Հովհաննես Երզնկացի (մոտ. 1250-1326)

Եզդեհի նույն հատվածը, հավանորեն, Վարդան Արեւելցու միջնորդութեամբ, օգտագործել են Մխիթար Այրիվանեցին՝ 1289 թ. ավարտած իր Պատմութիւն ժամանակագրական պայմանական անունով հայտնի երկի³⁵, և Վարդան Արեւելցուն աշակերտած Հովհաննես Երզնկացին՝ 1291 թ. ավարտած ու հետագայում լայնորեն գործածված իր Համարումն մեկնության քերականի մեջ.

Մխիթար Այրիվանեցի.

...հելլենն փափկական և հոռմմայեցին սաստկական, հոնն սպառնական և ասորին աղայական, պարսիկն պերճական և ալամն գեղեցկական, գոթն ծաղրական և եզիպտացին խարխափական, հնդկն ճճոտղական և հայն համեմական³⁶:

Հովհաննես Երզնկացի.

Ի մի խոշոր լեզուէն յոյոփս և զանազան զարտութիւնս որոշեալ. փափկախասս հելլենն, սաստիկ հոռմմայեցին, սպառնական հոնն, աղայական ասորին, պերճական պարսիկն, գեղազարդ ալամն, ծաղրական գոթն, խարխափայն եզիպտացին, ճճոտղական հնդկն, համեմական հայն, այլեւ համեմատիչ, զի կարէ զյոյոփիցն առ ինքն ամփոփել: Եւ որպէս գոյն առ գոյն պայծառանայ եւ դէմք ի դիմաց եւ հասակ առ հասակաւ եւ արուեստէ աճէ եւ գործ ի գործոյ զարանայ, նոյնպէս եւ լեզու լեզուաւ գեղեցկանայ³⁷:

³⁵ Է. Հ. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի (կյանքն ու ստեղծագործությունը). Երևան, ԳԱ հրատ., 1985, էջ 63:

³⁶ Մխիթարայ Այրիվանեցույ Պատմութիւն Հայոց: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին: Մոսկվա, 1860, էջ 29. Հմմտ. Хронографическая история составленная отцом Мехитаром, вардапетом Айриванским. Перевод с армянского с предисловием и примечаниями К. Патканова. С. Петербург, 1869, с. 268, 371-372.

³⁷ Գ. Զահուկյան, Քերականական՝ ողղագրական աշխատություններ

Արդարև, Վարդան Արեւելցու լեզվաբանությունը կարելի է իրավամբ բնորոշել իբրև էթնակենտրոն (ethnocentric) կամ, ավելի սուույդ, «հայակենտրոն»: Բացում ընդօրինակություններ ունեցած այս աշխատության հայրենասիրական-ազգայնական դադափարախոսական ուղղվածությունը անշուշտ լուրջ սպեցիալություն գործած պետք է լիներ և՛ հայ վերնախավերի, և՛ առհասարակ հայ գրագիտ զանգվածների վրա. չէ՞ որ այս երկը, մերօրյա եզրով ասած, պետպատվեր էր՝ նախատեսված էր հայոց արքունիքում իբրև դասագիրք օգտագործվելու համար, բացի այդ էլ՝ այն լայնորեն կիրառվել է Կիլիկյան և բուն Հայաստանի դպրոցներում ու համալսարաններում³⁸:

Իրականում, Վարդան Արեւելցին միայնակ և ինքնուրույնաբար չի հանգել հայակենտրոն լեզվաբանության մոտեցումներին, այլ ընդամենը հենվել և զարգացրել է հայկական ազգային դադափարախոսության դարավոր ավանդույթները: Այդ է վկայում խիստ ուշագրավ մի փաստ: 1267-1268 թթ. ավարտած իր «Տիեզերական պատմութեան» մեջ, Վարդանը կրկնել է փոքր-ինչ վերաշարադրել է Եզդեհի «Արարածոց մեկնություն»՝ հայոց լեզվին վերաբերող հատվածը, ահա.

Փափկագոյնն Ելլենացոց, եւ սաստկագինն Հոռմմայեցոց, Հոնն սպառնական, եւ Ասորին աղայական, Պարսիկն պերճական, եւ Ալամն գեղեցկաճեւ, Գոթն ծաղրական, Եզիպտացին խարխափայն, եւ Հնդկն ճճոտղ, Հայն՝ համեղ եւ ամեմազարդ եւ համեմական³⁹:

³⁸ Տե՛ս Վարդան Արեւելցի. Մեկնություն քերականի. էջ 6, 168, 170:

³⁹ Վարդան Արեւելցի. Համարումն պատմութեան Վարդանայ վարդապետի (Աշխատասիրություններ Դ. Ալիշանի), Վենետիկ-Ս. Ղազար, 1862, էջ 12. Հմմտ. Մեծին Վարդանայ Բարձրբերդեցու Պատմութեան տիեզերականի ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 19:

սական է, որովհետև որք երկու գիր է, մեկը ստորագրած է և կարող ենք իրականով դիմել՝ ո՛ր Մանի, ո՛ր Նունի, քանի որ ուսելն փաղաքշական է ու նաև մանկական-տղայական է: Նաև մենք հողն առավելապես վերջում ենք դնում, քան սկզբում, ինչպես, օրինակ՝ երկնային, երկրային, ծովային, ցամաքային: Սրանք հոյսփական հողեր են ու այս լեզվի առատությունից է, որ կարիք չունենք չարաշահել նախադասական հողը, այսինքն՝ սկզբում դնել հողը, այլ գրեթե միշտ՝ վերջում ենք դնում:

...Ասվեց արդեն՝ ի տարբերություն հույների և իսմայելացիների [իմա՝ արարների - Ա. Ա.], հայերը նախադասական հող հազվադեպ են գործածում. ու սա թերություն է, քանի որ նա ով ասում է տասներկու, ոչնչով պակաս չէ նրանից, ով ասում է երկուասան:

[Իսկ բազմություն հայկական գրոյս երկու պատճառ ունի. առաջինն՝ զագագան գկորնայան է, այսինքն՝ զբազմություն հայոց լեզուիս, զծոությունն եւ զթոթովախասությունն զնչատացն: Երկրորդ պատճառն՝ լեզուիս հարստությունն³⁰:

...Յունացն բացարձակ մէկ գիր է՝ օ, որ գարականն նշանակեն, իսկ մեք շատնենք փոյթ. եւ դիրին է մեզ ասել զնոյնն՝ ո՛վ Տրդատիոս, ո՛վ Մմբատ: Երբ միատր է՝ ունիսադասական է, երբ որ է՝ ստորագրական է. զի որ երկու գիր է, եւ մէկն ստորեւ է դասեալ եւ իգական կարենք ասել՝ ո՛ր Մանի, ո՛ր Նունի, զի ուսելն փաղաքշական է, եւ մանկական է՝ տղայական: Այլ մեք զյատն առաւել յաւարտն ունիմք քան ի սկիզբն, որպէս՝ երկնային, երկրային, ծովային, ցամաքային, -- այսպիսիքս հոյովական յատր են, եւ այս առատութենէ լեզուիս է. զի չկարատանամք բոնադատել ի նախադասականն եւ յառաջն դնել զյատն, այլ միշտ եւ յաճախ ի վճարն³¹:

...Ասացաւ, թէ հայք շունին զնախադասականն յաճախ յատր՝ որպէս յոյնք եւ իսմայելացիք. եւ չէ՛ պակասություն, զի որ չգիտէ ասել երկուասան՝ ի՞նչ պակաս է ի յասելն տասներկու³²:]

Բայց ազգս հայոց, լիզվիս և գրիս հարստության և փարթամության շնորհիվ, անհարկի համարեց այս, իսկ Հույները և այլ ազգերը հարկազրկեցին՝ իրենց լեզվի և գրի սակավության պատճառով և դրանով լցրին [իրենց լեզունները] պակասությունը:

[Բայց դու ազգ խոյզ արա եւ քննէ ի խասսն, որպէս յոյնք եւ ֆոսանգք, եւ հելլենացիք, որ են մակեդոնացիք, զի մեծասպէս աշխատին, մինչ որ հասանն իւրեանց ջանիցն եւ կարեն ընտրութեամբ խասսել եւ լսել զբառսն, թէ ո՛ր է՝ արո՞ւ է, էգ, եւ կամ թէ չեզո՞ք է, թէ երկուորական:

Բայց ազգս հայոց յաղագս հարստութեան եւ փարթամութեան լեզուիս եւ գրիս ոչ հարկեցան ի յայս, այլ յոյնք եւ այլ ազգք հարկատրեցան վասն լեզուացն եւ գրոյն սակասութեանն, եւ այնու լցին զպակասութիւնն:]²⁹

Ահա Վարդան Արեւելցու նույն միտքն արտահայտող երեք դիտողություն ևս.

Իսկ հայկական գրիս բազմությունը երկու պատճառ ունի. առաջին՝ Կորնայի ջեղիցից եկող հայոց լեզվի բազմազանությունը. զնշատների ծուծությունը և թոթովախսությունը: Երկրորդ պատճառը լեզվիս հարստությունն է:

...Հույները բացարձակ մեկ գիր ունեն՝ օ, որով արականն են նշում, իսկ մեզ համար կարևոր չէ, քանի որ դյուրին է մեզ ասել նույնը՝ ո՛վ Տրդատիոս, ո՛վ Մմբատ: Երբ միավոր է՝ ու նախադասական է, երբ որ է՝ ստորագրական է:

³⁰ Վարդան Արեւելցի. Մեկնություն քերականի, էջ 84:
³¹ Նույն տեղում, էջ 132:
³² Նույն տեղում, էջ 133:

²⁹ Վարդան Արեւելցի. Մեկնություն քերականի: Աշխատասիրության մը՝ Լ. Գ. Պաշերյանի: Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ 93: Անդրադառնալով այս հատվածին՝ Փ. Անթապյանը ուշագրավ դիտողություններ է արել. «Վարդան Արեւելցին հայերենի «հարստությանը եւ փարթամությանն» է վերագրում Հայերեն բառերի սեռային հատկանիշներից կամ վերջավորություններից ազատ լինելը. դա միշտ և գիտականորեն արժեքավոր բան է. նման տեսակետ լեզվաբանության տեսության մեջ հիմնավորվել է 19-րդ դարից ոչ շուտ... Այստեղ ի հայտ է գալիս հիշյալ լեզունների նրա իմացությունը: Ընդգծելով հայերենի «փարթամությունը», նա շոյում է նաև իր ու իր ընթերցող ազգակիցների մայրենի լեզվի նկատմամբ ունեցած զգացումները» - Փ. Փ. Անթապյան. Վարդան Արեւելցի. կյանքն ու գործունեությունը: Գիրք Բ (Երևան, ԳԱ հրատ., 1989), էջ 125:

դաքակրթութիւնն ու մշակույթը բաժանանաչափ հզոր են՝ օտար ազդեցութիւններին դիմադրապէս կամ դրանց օգտակար տարրերը յուրացնելու համար: Այլ կերպ ասած՝ Եղիշեի ժամանակներում հայերը իրենց մշակութային բաժանանաչափ և անմտանդ են զգացել:

Այլ լեզուների նկատմամբ հայոց լեզվի ունեցած համեմատական դերազանցութիւնն ընդգծել են հետագա հայ հեղինակները ևս:

Վարդան Արևելցի (մոտ. 1200-1271)

1244-1246 թթ. հայ մեծ մատենագիր Վարդան Արևելցին գրել է իր «Մեկնութիւն քերականի» երկը Կիլիկյան Հայաստանի թագավոր Հեթում Ա-ի համար և նրա խնդրանքով (այս հանգամանքը ընդգծված է երկի վերնագրում՝ «Ի խնդրոյ թագաւորին Հայոց Հեթմոյ»)՝²⁷ Արևելցին ևս, Եղիշեի նման, համեմատութեան մեջ դնելով հայերենը այլ լեզուների հետ, եկել է այն համոզման, որ իր մայրենին լավագոյնն է, ահա՛ վասիկ.

Բայց զու, [ով հայ] ազգ, հետազօտիր և քննիր լեզուները, օրինակ՝ հայնորը, ֆռանկները (իմա՛ լատիններնով գրող եվրոպացիները, Ա. Ա.) և հելլենացիները, որ մակեդոնացիներն են²⁸, շատ են չարչարվում մինչև որ հասնում են իրենց ուզածին և կարողանում են ընտրութեամբ խոսել և լսել բառերը, թե ո՞րն է արականը, իզականը և կամ չեզոքը, ո՞րը՝ երկսեռը:

²⁷ Վարդան Արևելցի. Մեկնութիւն քերականի: Աշխատատեքութեամբ՝ Լ. Գ. Խաչերյանի: Երևան, ԳԱ հրատ., 1972, էջ 6, 73. Հմմտ. Փ. Փ. Անթուայան. Վարդան Արևելցի. կյանքն ու գործունէութիւնը: Գիւրջ Ա (Երևան, ԳԱ հրատ., 1987), էջ 149:

²⁸ Թե ու՞մ նկատի ունի՝ Վ. Արևելցին՝ «հելլենացիները, որ մակեդոնացիներն են» ասելով՝ մտած է անպարզ, քանի որ 13-րդ դարում գոյութիւն չուներ ոչ մակեդոնացի ազգ, ոչ էլ մակեդոնական լեզու: Կարելի է ընդամենը ենթադրել, որ խոսքը վերաբերում է Մակեդոնիա (Թրակիա) թափանցած սլավոններին և նրանց լեզվին:

Ուստի մի խոշոր լեզվի [տրոհումից] դեղեցկաբանութիւն առաջացավ. հույնի լեզուն փափուկ է, հռոմեացունը՝ սաստիկ, հոնինը՝ սպառնական, ասորուհը՝ ուղաչական, պարսկինը՝ պերճ, ալանինը՝ գեղեցկազարդ, գոթինը՝ ծաղրական, եգիպտացունը՝ կարծես մի ծածուկ և խավար տեղից լսվի, հնդկինը՝ ճովաացող, իսկ հայինը համեղ է և կարող է բոլոր լեզուներն իր մեջ ամփոփել:

Եւ ինչպես գույնը գույնով է պայծառանում, և դեմքը դեմքով, և հասակը հասակով, և արմատը արմատով, և գործը գործով, նույնպես և լեզուն լեզվով է գեղեցկանում...

[Ուստի գեղեցկաբանութիւն եղաւ ի մի խոշոր լեզուին. փափուկ՝ հելլենն, սաստիկ՝ հռոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսկին, գեղեցկազարդ՝ ալանն, ծաղրական՝ գոթն, տափախոս խավարածայն՝ եգիպտացին, ճճուողական՝ հնդկն, համեղական՝ հայն, որ կարէ զամենն յինքն ամփոփել:

Եւ որպէս գոյն առ գունով պայծառանայ, եւ դէմք ի դիմաց, եւ հասակ առ հասակ, եւ արուեստ առ արուեստ, եւ գործ առ գործով, նույնպէս եւ լեզու լեզուաւ գեղեցկանայ...]

Այս սողերը ցուցադրում են, մի կողմից, այն անթաքույց հայարտութիւնը, որով Եղիշեն խոսում է հայոց լեզվի մասին, համարելով այն լավագույնը՝ բոլոր մյուս լեզուների բարեմասնութիւններն իր մեջ ամփոփողը, մյուս կողմից՝ հեղինակի հարգալից և նույնիսկ սիրալիր վերաբերմունքը այլազգի լեզվական մշակույթների հանդեպ, թեև արտաքուստ նկատվում է նրա թեթև հումորը, որ կոչված է իր հերթին ընդգծելու հայերենի դերազանցութիւնը: Օտար մշակութիւնների հանդեպ այսպիսի հանդիստ կեցվածքը գալիս է ցուցադրելու Հինգերորդ դարի հայ ազգայնականութեան լուսավորչալութիւնը, հայերի համոզվածութիւնը, որ սեփական քա-

²⁶ Տե՛ս Լեւոն Խաչիկյան, Նդիշեի «Արարածոց մեկնութիւնը» (Երևան, «Զվարթնոց», 1992), էջ 249. Հմմտ. Լեւոն Խաչիկյան, Աշխատութիւններ. Հտ. Ա. (Երևան, «Գանձասար», 1995), էջ 15:

Հեղինակային կարևոր ենթախմաստներն ու նրբերանգները: ՄիԱշդեո Փափատուրը «Հայոց լեզուն» գիտակցաբար անձնավորել է՝ հաղորդելով շնչավոր, կենդանի առարկագործոնի նշանակություն, նույնացնելով Հայաստան-հայեր-հայոց լեզու հասկացությունները: Դա Հատկապես պարզ է արտահայտված Փափատուրի վերջին փաստարկում՝ «սգում էր հայ լեզուն առհասարակ»²⁴:

Առաջ ընկնելով՝ նկատենք, որ Հայաստանին Փափատուր Բուզանդի տված հստակ բնորոշումը՝ «Հայոց լեզվի [տիրապետության ներքո գտնվող] աշխարհ», Եվրոպայում նմանօրինակներ է ունեցել ավելի ուշ շրջանում: 19-րդ դարի սկզբին, օրինակ, գերմանացի Հեղինակ Էռնստ Մորից Առնոլդը գրեթե նույն կերպ է սահմանել Գերմանիան՝ որպես «գերմաներենի [տիրապետության ներքո գտնվող] աշխարհ»՝ *Das ist des Deutschen Vaterland* (բառացիորեն՝ «սա գերմաներենի հայրենիքն է»)՝²⁵:

Եղիշեն ևս Հայոց լեզվին նվիրած ուշագրավ մի անգրադարձ ունի: «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկի Հեղինակը, իր մեկ այլ՝ «Արարածոց մեկնություն» աշխատության մեջ, ընդգծում է Հայոց լեզվի բացառիկ կարողությունները՝ դրանք համեմատելով իր ապրած ժամանակի ինը նշանավոր այլ լեզուների հետ.

նություններն Ստ. Մալխասյանցի (Երևան, «Հայաստան», 1968), էջ 43, 158, 267:

²⁴ Մալխասյանցի ընթերցմամբ այն դարձել է «Եվ Հայաստանի բոլոր սահմաններում ծայրեծայրագուժ էին նրան ազնվականներն ու շինականները, Թորգոմի տան բոլոր բնակիչները, առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ» (նախադասությունը մեջ ենք բերում ավտոլեզույթյամբ). - նույն տեղում, էջ 267:

²⁵ St. u. Liah Greenfield, *Nationalism. Five Roads to Modernity*, pp. 368, 549 (n. 179). մեջբերումն արված է հետևյալ գրքից՝ *Deutsche Vaterlandslieder* (Leipzig: Insel-Verlag, 193[?]), Insel-Bucherei 154, p. 28:

պետությունների ներքո գտնվող] ամբողջ աշխարհ» և «Հայոց լեզվի [տիրապետության ներքո գտնվող] Թորգոմական աշխարհ»:

Այսպիսի ընթերցման ստուգությունը հաստատվում է Փափատուրի Հայոց պատմության մեկ այլ դրվագով. պատմելով Ներսես Մեծ կաթողիկոսի մահվան առիթով Հայաստանը պատած համազգային սուգի մասին՝ Փափատուր գրում է.

Եվ Հայոց երկրի սահմանների ներսում՝ մի ծայրից մյուս ծայրը, սգում էին նրան բոլոր ազնվականներն ու շինականները՝ Թորգոմի տան բնակիչ բոլոր ազնվականներն ու շինականներն անխտիր, հայ լեզուն առհասարակ: [Եւ սգային ամենայն ազատք՝ շինականը ծագել ի ծագ ամենայն սահմանաց նրկրին Հայոց, ազատք՝ շինականը ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ:]²²

Այս հատվածում Փափատուր դարձյալ հայ է համարում Հայերենով խոսողներին միայն (ընդ որում՝ անկախ դասակարգային կամ որևէ այլ տարբերակումների), Հայաստանը սահմանում է որպես Հայոց լեզվով խոսող երկիր, իսկ Հայաստանի սահմանները որոշում է Հայոց լեզվի տիրապետության տարածքի համեմատ:

Պետք է ասել, որ Ստ. Մալխասյանցը, Փափատուրի Հայոց պատմությունն արդի Հայերենի փոխադրելով, Հեղինակի՝ Հայաստանին տված վերորերյալ սահմանումներն անհարկի վերածել է արձակային ձևերի. ահավասիկ՝ «երկիրն լեզուին թորգոմական աշխարհին»ը վերածեվել է «Հայ լեզվով խոսող Թորգոմական աշխարհ»ի, «աշխարհ ամենայն Հայոց լեզուին»ը՝ «Հայերեն խոսող ամբողջ աշխարհ»ի, «Հայ լեզուն առհասարակ»ը՝ «առհասարակ հայ լեզվով խոսող մարդիկ» խիստ անհարագատ ընթերցմանը²³: Արդյունքում՝ կորել են

²² Փափատուր Բուզանդ. Պատմություն Հայոց, Ե, Գլ. I, էջ 231:

²³ Փափատուր Բուզանդ. Պատմություն Հայոց: Թարգմ., ներած. և թարգմա-

յաստանի պետությունը մշակել ու խստորեն իրականացնում էր հայոց լեզվի զարգացումը երաշխավորող հատուկ «լեզվական քաղաքականություն», ընդ որում՝ աննահանջ քաղաքականություն:

Մովսես Խորենացին հայոց լեզվի նշանակությունը շեշտած մեր միակ ոսկեդարյան հեղինակը չէ: Հայկական դրերի ստեղծումից անմիջապես հետո՝ նույն 5-րդ դարում, հայ նշանավոր մյուս մտածողները ևս անվրադարձել են հայոց լեզվին:

Այսպես՝ Փավստոս Բուզանդը սահմանում էր Հայաստանը որպես «Հայոց լեզվի ամբողջ աշխարհ» (աշխարհ ամենայն Հայոց լեզուին)²⁰ և «Հայոց լեզվի թորգոմական աշխարհ» (երկիրն լեզուին թորգոմական աշխարհին)²¹: Փավստոսի այս սահմանումներն ճշգրիտ ընկալումը, սակայն, պահանջում է որոշակի պարզաբանում: Առաջարկում ենք իմաստային լրացումով այսպիսի ընթերցում՝ «Հայոց լեզվի [տիրա-

²⁰ «Իսկ աշխարհն ամենայն հայոց լեզուին, դաւառաց դաւառաց, կողմանց կողմանց, տեղեաց տեղեաց մեծամեծք աշխարհակալք դաւառատեարքնահոպետմեծագեացքեամենայնեխտքաՀանայուրթեան, ժողովք միարանտկան ժողովրդոցն, ի սուչ տիրութեան ընկղմեալ էին վասն իւրեանց հօտապետ զխաւորին, զի հեռացաւ ի նոցանէ»: Փաւստոս Բուզանդացի. Պատմութիւն Հայոց ի չորս դարութիւնս (չորրորդ տպագրութիւն). Վենետիկ, 1933. Գպրութիւն Գ, Գլ. ԺԲ, էջ 115:

²¹ Փաւստոս Բուզանդացի. Պատմութիւն Հայոց ի չորս դարութիւնս. Գպրութիւն Գ, Գլ. ԺԳ, էջ 43: Ինչպես մեկ այլ առիթով նշել ենք, «Երկիրն լեզուին թորգոմական աշխարհի» արտահայտությունը ներկիր և աշխարհն արտերը զորածոված են նույն իմաստով՝ իբրև հոմանիշներ կամ այսպես կոչված պետություններ: տե՛ս Արմեն Այվազյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. քննական տեսություն (Երևան, «Արտագրք», 1998), էջ 200-201: Փավստոսի այս «անառաջնորդ եղեալ իբրև, գկոյրմուրեցաներկիրն լեզուին թորգոմական աշխարհին» դրվագը Մալխասյանցն ընթերցել է այսպես՝ «անառաջնորդ մնալով՝ կույրերինման սողորվեց հայ լեզվով խոսող թորգոմական աշխարհը»: Ստորև առաջարկում ենք այլ ընթերցում, որը, մեր համոզմամբ, բնագրին ավելի հարադրու է. «անառաջնորդ մնալով՝ հայոց լեզվի [տիրապետության տակ գտնվող] թորգոմական աշխարհի բնակիչները կույրերինման սողորվեցին»:

Ոսկեդար

Հնում հայերենի, իբրև մայրենի լեզվի, դործածությունը է պայմանավորվել անհատի պատկանելությունը հայկական էթնիկ տարրին:

Պատահական չէ, որ Մովսես Խորենացին Հայաստանի տարածքը նույնացնում էր հայոց լեզվով խոսող տարածքի հետ, նշելով՝ «Եւ յարեւելից կողմանէ, գեցերբ հայկական իօպիցս...»:

Պատմահոր մի ուրիշ հաղորդում հնարավորություն է ընձեռում պատկերացնելու, թե որքան վաղ էին հայոց պետության առաջնորդները գիտակցել լեզվացեղային (ethnolinguistic) միատարրության ռազմավարական կարևորությունը: Հենվելով Մար Արասի մատյանի վրա՝ Խորենացին հայտնում է, որ Արամ թագավորը (որն այս դրվագում մարմնավորում է մ.թ.ա. 9-րդ դարում ապրած Արամն կամ մ.թ.ա. 7-րդ դարում ապրած Հրիմենա-Արամանի հայոց արքաներից մեկին)¹⁸ կարգադրել է Հայաստանի կազմի մեջ նոր մտցված ծայրամասային զավառների բնակչությանը՝ «ուսարենել զխոսս և զլեզուս հայկական»¹⁹: Փաստորեն, այս դրվագը խոսում է այն մասին, որ արդեն մ.թ.ա. 9-7-րդ դարերում Հա-

¹⁷ Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց. Գիրք Բ, Գլ. Ը:

¹⁸ Արամ թագավորի հավաքական կերպարի մանրամասն քննությունը տես Արմեն Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում՝ հայոց ազգածագման խնդիրը (Երևան, «Վան արյան», 1997): Այն, որ Խորենացու այս հաղորդման մեջ Արամ թագավորին մարմնավորողը 7-րդ դարի հայոց արքա Հրիմենա-Արամանին է, մանրամասն քննված է հետևյալ ուսումնասիրության մեջ՝ Բարկեն Հարությունյան, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների՝ Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ.թ.ա. VII-VI դդ.): Երևան, «Հայագիտակ», 1998, էջ 59-90:

¹⁹ Մովսէս Խորենացի. Պատմութիւն Հայոց: Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարուբեյանների: Լրացումները Ա. Բ. Սարգսեանի (Երևան, ԳԱ, 1991. Տիգրիսի 1913 թ. հրատարակության համահանություն), էջ 46:

ՀԱՅԵՐԵՆԸ

Լեզվի և ազգային ինքնագիտակցության սերտ կապն արժանացել է արտասահմանյան և նախկին խորհրդային ազգաբանների (էթնոլոգների), սոցիոլոգների և հոգեբանների բազմակողմանի ուշադրությունը¹³: Մեզանում նույնատիպ ուսումնասիրությունները, ցավոք, դեռևս բացակայում են: Այնինչ՝ Հայոց լեզուն Հայերի ազգային ինքնագիտակցության ձևավորման վրա ազդեցություն ունեցած պատմական որոշիչ գործոններից է, եթե ոչ՝ ամենաորոշիչը: Հայոց լեզուն, ըստ ամենայնի, եղել է Հայերի ազգային ինքնագիտակցության տալիս և սկզբնական խթանը: Լեզվական ուրույն և համախմբված համայնքի գոյությունը, իր հերթին, պարտադիր նախադրյալ էր Հայերենի՝ Հնդեվրոպական նախալեզվից վաղ զատվելու համար:

Հայոց լեզվի՝ Հայկական լեռնաշխարհի բնիկ լեզուն լինելն այլևս վերջնականապես ապացուցված է նոր և նորագույն բազմաթիվ ուսումնասիրություններով¹⁴: Հայկական

լեռնաշխարհում Հայոց լեզվի, ըստ այդմ էլ, հայկական էթնիկ տարրի զերիշխանությունը հաստատվել է մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներում կամ գուցե ավելի վաղ¹⁵: Հայոց լեզվի տիրապետության տակ գտնվող տարածքի վերաբերյալ գրավոր ուղղակի մի հայտնի վկայություն էլ տրամադրել է հույն աշխարհագրագետ Ստրաբոնը (մ.թ.ա. 64 - մ.թ. 23), որի համաձայն՝ մ.թ.ա. 2 դարում Արտաշես Ա-ի ջանքերով վերամիավորված Հայաստանի ամբողջ բնակչությունը հայախոս էր՝ «ուստի և բոլորը միայեզու են»¹⁶:

Համեմատական քննությանը ստորև ներկայացնում ենք հայկական, անգլիական, ֆրանսիական և ռուսական ազդյունների տվյալները՝ պարզելու համար այն հանգամանքներն ու ժամանակը, թե ե՞րբ և սոցիալ-պատմական ի՞նչ պայմաններում է մայրենի լեզուն դառնում համազգային սիրո և հպարտության առարկա:

կան բուն ձևերի հնարավոր հայկական բնույթի մասին" - Պատմա-քաղաքագիտական հանդես, 2000, No. 1: Thomas Samuelian, *Armenian Origins: An Overview of Ancient and Modern Sources and Theories* (Yerevan: Iravunk Publishing House), 2000.

¹⁵ Thomas Samuelian, *Armenian Origins*, *op. cit.*, pp. 7-11; История Армении с древнейших времен до наших дней. Под редакцией Э. Л. Даниеляна. (Ереван: Анконакар, 1999), с. 7-8. Բրիտանական հանրագիտարանի տշմ արդեն հնացած տեսակետով Հայկական լեռնաշխարհի լեզվական հայացումը ավարտված է եղել մ.թ.ա. 7-6-րդ դարերում (տե՛ս The New Encyclopedia Britannica, Fifteenth ed., 1984, Macropedia, Vol. 2, p. 23):

¹⁶ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա: Հտ. 1. Կազմողներ՝ Գ. Լ. Լավրենտյան, Ա. Գ. Արրահամյան: Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 1981, էջ 196: Strabo, *Geography*. Compiled and transl. by F. Lasserre (Paris, 1975), book XI, Chapters 14, 5 (Coll. G. Bude, vol. VIII, p. 123). Այս տեղեկության մանրամասն քննությունը տե՛ս Գազիկ Սարգսյան, Ինքնորոշում և կոլոնիալիզմ: Մեծ Հայքի վերջի շրջան. - Ինքնություն [Identitas]. Ա. Երևան. «Կամար», 1995, էջ 91-93:

¹³ Տե՛ս, որինակ, Adrian Hastings. *The Construction of Nationhood: Ethnicity, Religion and Nationalism* (Cambridge: Cambridge University Press, 1997), pp. 19-22, 31, 77, 108, 148, 151-152; Cheine Anwar. *The Arabic Language: Its Role in History* (Minneapolis: University of Minnesota Press, 1969); Ю. В. Бромлей. Очерки теории этноса (Москва: "Наука", 1983), с. 110-117, 241-243, 327-332; С. А. Арутюнян. "Этнические процессы и язык", -- Расы и народы (Ежегодник) No. 15 (1985), Москва: "Наука", 1986, с. 30-56.

¹⁴ Տե՛ս, որինակ, Г. А. Капанцян. Хайаса -- колыбель армян. Этногенез армян и их начальная история (Ереван, Изд. АН Арм. ССР), 1947. Գ. Բ. Զահուկյան. Հայոց լեզվի պատմություն. Առաջադրյալները (Երևան, 1987). Երևանի "Հայկական շերտը ուրարտական զիջարանում", "О соотношении хайасского и армянского языков", "Լեզվական նոր տվյալներ Հայոց նախաքրեատմական կրոնի և հաճախայինների մասին" - Պատմա-քաղաքագիտական հանդես, 1986, No. 1, 2, 1992, No. 1. "Ռուրտական արձանագրություններին և արձանագրությանը":

երևույթները մինչև այժմ պատմագիտական հետազոտութ-
 թյունների առարկա չեն դարձել, ինչը կարող նվազեցնում է
 Հայոց պատմութունը ճիշտ ընկալելու և վերլուծելու հնա-
 ռավորությունները¹¹: Հայկական հին և միջնադարյան ազ-
 գայնականությունը, իր ժամանակին և պայմաններին հա-
 տուկ ուրույն առանձնահատկություններով հանդերձ, ի
 հայտ է եկել եվրոպական իր նմանօրինակներից դարեր առաջ:
 Այն, մասնավորապես, եղել է պետության և ազգի շահերի
 համար գանգվածներին մոբիլիզացնող նույնպիսի գործոն,
 ինչպիսին է նոր ու նորագույն շրջանի եվրոպական ազգայ-
 նականությունը¹²:

¹¹ Ներկա ուսումնասիրությունը հեղինակի՝ «Հայկական ինքնության՝
 ազգայնականության կազմավորումը» անտիպ մենագրության
 գլուխներից մեկն է: Առանձին գրքու յկովյույն տեսել նույն մենագրու-
 թյան մեկ այլ հատված՝ Արմեն Այվազյան, Հայ գինվորականության
 պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր): Երևան, «Արտագերս»
 Հրատ., 2000:

¹² Ազգայնականության արևմտյան տեսությունները քննադատված են
 նաև հետևյալ ուշագրավ աշխատության մեջ՝ Հ. Ա. Գեորգյան, Ազգ, ազ-
 գային պետություն, ազգային մշակույթ (հայկական հարցը ժամա-
 նականից քաղաքագիտական տեսությունների լույսի մերթ),
 Երևան, «Նոյան Տապան», 1997:

րը առաջացել է 16-րդ դարի Անգլիայում, որն էլ աշխարհում
 ամենաառաջին ազգն էր»⁶:

Ազգայնականության արևմտյան հետազոտողների այս
 տեսակետները փոքրիչատե հասկանալի կլինեն, եթե նկատի
 ունենանք, որ եվրոպական ազգերի ձևավորումն ու ազգային
 ինքնագիտակցության ձևաբերումն իրոք տեղի են ունեցել
 16-19-րդ դարերում: Օրինակ, համաձայն հենց արևմտյան
 ուսումնասիրությունների՝ 1789 թ. «Ֆրանսիական հեղափո-
 խությունից շատ տարիներ հետո էլ Ֆրանսիայում ապրող
 մարդկանց բացարձակ մեծամասնությունը դեռևս գիտակից
 չէր իր ֆրանսիացի լինելու մասին»⁷: Նմանապես՝ «19-րդ
 դարի կեսերին Իտալիայում... իտալացիների ընդամենը 3 տո-
 կոսը կարող էր խոսել նույն ընդհանուր լեզվով. մեծ մասը
 խոսում էր մեծապես տարբեր տարածաշրջանային բարբառ-
 ներով և մեծ մասն իրեն համարում էր սիկիլիացիներ, հոմա-
 յեցիներ և այլն: Առաջին համաշխարհային պատերազմի ա-
 վարտից հետո, սակայն, Իտալիայից հյուսիսային Ամերիկա
 ներգաղթած մարդկանց մեծամասնությունը իրեն համարում
 էր իտալացի: Այսպիսով իտալական ազգը անց կամ առաջա-
 ցավ 75 տարուց էլ պակաս ժամանակահատվածում»⁸:

Հին, միջնադարյան և ուշմիջնադարյան սկզբնադրույ-
 ները բացահայտում են հայերի ընդգծված ինքնությունը,
 դրան ուղեկցած ազգայնական-հայրենասիրական մտայնու-
 թյունն ու սրանց ծնած գաղափարաբանությունները: Հայերի
 մեջ այս անսովոր վաղ առաջացած սոցիալ-հոգեբանական

⁶ Liah Greenfeld, *Nationalism*, p. 14, cf. p. 6. Այլու հանդերձ, Գրինֆել-
 դը մի ծանոթագրության մեջ ընդունում է, որ «որոշ նախա-ազգեր, այ-
 սինքն՝ Հասարակություններ, որոնք միավորված էին ազգային ին-
 քնական նման համարաշխարհայիններով, հայտնի էին Հին աշխարհում, հատ-
 կապես հռոմեացիները և հույների միջավայրում, թեև «ազգեր» չէին անվան-
 վում», p. 495, note 9.

⁹ Walker Connor, *Ethnonationalism*, op. cit., p. 95, note.

¹⁰ See K. J. Holsti, *International Politics: A Framework for Analysis*
 (New Jersey: Prentice-Hall, 1995), p. 58.

Բ. Ազգայնականության սկզբնավորման ժամանակը
Հայաստանում և Եվրոպայում

Նորերս լույս տեսած մի քանի ուսումնասիրություններն չհաշված⁶, արևմուտքում ազգայնականության սկզբնավորումը հետազոտվել է բացառապես Եվրոպայի՝ 16-ից մինչև 20-րդ դարերի միջև ընկած պատմահասարակական փոփոխության վրա: Բնականաբար, այսպիսի եվրոպալատիստները (eurocentrism) անբավարար արդյունքներ ու չհիմնավորված եզրակացություններ տեղիք է տվել: Այսպես, ազգայնականություն-հայրենասիրություն երևույթը ուսումնասիրող արևմտյան գիտնականների մեծամասնությունը կարծում է, որ աշխարհում ամենաառաջին ազգերը առաջացել են Եվրոպայում՝ 16-19-րդ դարերում: Օրինակ, Ուոլթեր Բոննորը, որը համարվում է «էթնիկ ազգայնականության ծագման ու զարգացման, թերևս, ամենաառաջատար հետազոտողը», համարում է իրենից ավելի վաղ ապրած՝ նույնպես Հայտնի Հեղինակ էսնրատ Բարբերի բուրգոնցի անհիմն այն մտքին, թե իբր «ազգերի ինքնագիտակցությունը 19-րդ դարի արդյունք է»⁷:

Եվրոպապաշտ մտքի այս դպրոցին համահունչ ու տիպիկ է նաև 1992 թ. լույս տեսած Լիա Գրինֆելդի ուսումնասիրության՝ համաշխարհային պատմության բացարձակ իմացությունը հավակնող հետևյալ ինքնավստահ եզրակացությունը. «Ազգի ամենաառաջին ժամանակակից դադափա-

նականությունը, և՛ հայրենասիրությունը՝ անձի կամ խմբի նվիրվածությունն են սեփական ազգին: Տարբերությունն այն է, որ ազգայնականությունը լրացվում է ազգային ինքնագիտակցության տարրերի վերլուծության ու վերհամման վրա հիմնված գաղափարաբանություններով, որոնք ընդգծում և առաջնային են համարում սեփական ազգի արժեքներն ու շահերը, քաղաքական ու մշակութային բոլոր իրողությունները դիտում են, նախ և առաջ, այդ արժեքների ու շահերի տեսանկյունից, ըստ այդմ էլ՝ ծրագրում են համազգային գործունեությունը կամ հակազդեցությունը:

Եթե ազգը ճնշված է և անիրավի, գտնվում է ինքնապաշտպանական դիրքերում, ապա ազգայնականությունը և հայրենասիրությունը ձուլվում են՝ ծնունդ տալով հայրենիքի ազատության և բարօրության համար պայքարին, ընդհուպ մինչև անձնազոհության դիմելը: Ռազմական, քաղաքական, գաղափարական ու մշակութային ասպարեզներում հայ ազգի մղած հազարամյա ինքնապաշտպանական մաքառումները պատմականորեն ծնել են ազգայնականության հենց այդ տեսակը. հայկական ազգայնականությունը անհնար է տարանջատել պարզ, բնածին հայրենասիրությունից: Աշխարհաքաղաքական այլ միջավայրներում և իրավիճակներում, երբ սեփական ազգի ընտրվածություն կամ առավելությունների մասին հավատալիքները կամ հատուկ մշակված տեսությունները փորձում են պարտադրել ենթակա ազգերին, սեփական ազգի բարօրությունը նվաճել այլազգիների դաժան շահագործման, ճնշումների և նույնիսկ ոչնչացման միջոցով՝ պետք է խոսել այլևս ո՛չ թե ազգայնականության, այլ ընդամենը՝ ազգայնամոլության և ֆաշիզմի մասին:

⁶ Այդ ուսումնասիրություններից են, օրինակ, Adrian Hastings. *The Construction of Nationhood: Ethnicity, Religion and Nationalism* (Cambr.: Cambridge University Press, 1997); Michael Lind, "In defense of liberal nationalism," *Foreign Affairs* (May/June 1994), pp. 87-99.

⁷ See Walker Connor, *Ethnonationalism: The Quest for Understanding* (New Jersey: Princeton University Press, 1996), p. 4, paperback page; cf. Ernest Barker, *National Character and the Factors in Its formation* (London, 1927), p. 173.

նացիոնալիզմի ցանկալի կողմերը և թուլացնել նրա բացասական կողմերը⁵:

Այս դիտողություններն ու մտահոգությունները լիովին արդարացի են, թեև կուզ և ուշացած: Կատարելիք հետևություններին մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր ազգայնականախոսություն պետք է ուսումնասիրել ու գնահատել առանձին վերջրած՝ իրեն վերաբերող պատմական հզակի նյութի հիման վրա: Ու դրանից հետո միայն կարելի է դիմել Համեմատական վերլուծությունների և ընդհանրացումների:

Առ այն ուսումնասիրության մեջ ազգայնականությունը եզրն օգտագործված է ամենալայն իմաստով, ընդ որում՝ առանց գրական կամ բացասական նրբերանգների: Ե՛վ ազգայ-

⁵ "1. It feels good to belong to a larger entity; being part of an ongoing group provides a kind of immortality... To belong to one which does not have pride in itself is hurtful to an individual's self-esteem. 2. Ethno-cultural diversity is fun. The world's largest industry is the tourist business; people like to travel and see how others live; we spend a lot of money to get a taste of exotic others. 3. Ethnic diversity has survival value for the human species. Ethno-cultures provide solutions to problems... 4. Often, ethno/nationalism has a progressive quality in so far as it provides a basis for popular participation in governance. The flourishing of nationalism in the last century was part of the process of fundamental democratization of modern times. It proclaimed the right of the masses to claim autonomy in many cultural and social as well as political areas of life. Ethnic solidarity is also one source for the maintenance of a civil society... 5. Ethnicity is one possible coordination point, a basis for organizing and mobilizing. Having some identity as a base for organization is inevitable. Ethnicity, even nationalism, has advantages over some other bases of organizing. For example, compare them to universalist ones: political ideologies and religions are often messianic and proselytizing, while nationalism has self-limits. One implication of these observations is that we should not work for the elimination of ethnic identity or even nationalism... we are to understand how to foster the desired aspects of ethno/nationalism and reduce the negative aspects". - Louis Kriesberg, "Ethnicity, Nationalism and Violent Conflict in the 1990s," *The Peace Studies Bulletin*, Vol. 2, Numbers 1-2, Winter 1992-1993, pp. 25-26.

2. էթնիկական-մշակութային բաղադրանությունը զվարճություն է: Աշխարհի մեծագույն ինդուստրիան զբոսաշրջիկության բիզնեսն է. մարդիկ սիրում են ճանապարհորդել ու տեսնել, թե ինչպես են ապրում ուրիշները. մենք շատ փող ենք ծախսում էկզոտիկ ուրիշների կենցաղը տեսնել-զգալու համար:

3. էթնիկական բազմազանությունը մարդկային էակի համար վերապրելու արժեք ունի: էթնիկական մշակությունը ապահովում են տարբեր խնդիրների լուծում...:

4. Հաճախ էլ՝ էթնիկ ազգայնականությունն առաջադիմական որակ է ձեռք բերում, քանի որ դա այն հիմքն է, որ ապահովում է ժողովրդի մասնակցությունը կառավարմանը: Ազգայնականության ծաղկումը անցած (իմա՝ 19-րդ -- Ա. Ա.) դարում մաս էր կազմում նորագույն շրջանում տեղի ունեցած արմատական ժողովրդավարացման: Այն հուշակեց զանգվածների իրավունքը՝ ինքնավարություն պահանջելու կյանքի բազում մշակութային և սոցիալական, ինչպես նաև քաղաքական ոլորտներում: Այնպես էլ էթնիկական համերաշխությունը քաղաքացիական հասարակության հաստատման ու պահպանման աղբյուրներից մեկն է...

5. էթնիկ պատկանելությունը կորոշինացման հնարավոր կետերից մեկն է, կազմակերպվելու եւ մոբիլիզացվելու հիմք է: Ինքնակազմակերպման համար որեւէ ինքնություն որպես բազա ունենալն անխուսափելի է: էթնիկ պատկանելությունը, նույնիսկ ազգայնականությունը, որոշ առավելություններ ունի ինքնակազմակերպման այլ բաղադրիչ համեմատ: Օրինակ՝ Համեմատեք դրանք ընդհանրականների հետ. քաղաքական գաղափարաբանությունները և կրոնները հաճախ մեսիական են ու հոգեորսական, մինչդեռ ազգայնականությունն իր սահմաններն ունի:

Այս դիտարկումներից բխող մի հետևությունն էլ այն է, որ մենք չպետք է ձգտենք ոչնչացնել էթնիկ ինքնությունը կամ նույնիսկ ազգայնականությունը... [փոխարենը] մենք պետք է հասկանանք, թե ինչպես կարելի է ուժեղացնել էթնո-

յակներ տեւած մտավոր դրոշից հետո, անհանգստութիւնն է հայտնում առ այն, որ.

իրեն կոնցեպցիաներ, ե՛ր գաղափարախոսութիւններ, ե՛ւ հայրենասիրութիւնը տուժում են ինչպես բանավեճի գերծանրաբեռնվածութիւնից, այնպես էլ հստակ նշանակութեան բարդութիւնից... Մայրահեղ ազգայնականութեան վրա ձեռնարկված գրոհը նշանակալից զգուշացրութիւն է առաջացրել հայրենասիրութեան նկատմամբ³:

ԱՄՆ վերաբնակված նախկին խորհրդային ճանաչված ազգաբարձեւ Անատոլի Խազանովը ևս կոչ է անում զանազանն ազգայնականութեան տարատեսակները, զգուշացնելով, որ «գոյութիւն ունեն բազմաթիվ ազգայնականութիւններ ու ոչ թե ազգայնականութեան միակ տեսակը»⁴:

Ամերիկացի ամենաճանաչված սոցիոլոգներից մեկը՝ պրոֆ. Լուիզ Քրիզբերգը, ավելի հեռուն գնալով, առանձնացնում է էթնիկ ազգայնականութեան հետեյալ հինգ դրական կողմերը.

1. Ավելի մեծ հանրութեանը պատկանելը հաճելի զգացողութիւն է պարգևում. ինքնաշարունակ խմբի մաս կազմելն անմահութեան նման ինչ-որ բան է ապահովում... Մինչդեռ պատկանելութիւնն այնպիսի մի խմբի, որ զուրկ է ներքին հպարտութեանից, վնասակար է անհատի ինքնազնահատականի համար:

Թեյան հստակութիւնը (որը, սակայն, նրանցից շատ ավելի վաղ ծամանակներում էր ձեռք բերվել), այլև՝ այդ դարաշրջանում հայ քաղաքական մտքի գաղափարականացումը (իդէոլոգիզացիա), այսինքն՝ տեսարանական բարձր մակարդակի հասնելը:

Ե. Վերջնախազում

Ի մի բերենք: Ազգային լիզուս դառնում է համազգային դիտակցված սիրո և պաշտամունքի առարկա այն ժամանակաշրջաններում, երբ մշակութային զարգացածութեան որոշակիորեն բարձր աստիճանի հասած էթնիկ խումբը ձեռք է բերում ազգի կայուն հատկանիշներ, այնուհետև, ի դեմս իր մտավորական բնտրանու՝ քաղաքական ընտրանու աջակցութեամբ և հովանավորութեամբ, ազգային ինքնադիտակցութեան հետագա հղիումն ու կանոնակարգումը նպատակ ունենալով՝ սկսում է մանրազնին վերլուծել իր ինքնութեան տարրերը (այդ թվում՝ ազգային լիզուսը), ընդամին տալով դրանց անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը հիմնավորող տեսարանական-գաղափարախոսական ըացատրութիւններ:

³ "both ideology and patriotism as concepts suffer from an overload of polemics and the difficulty of precise meaning... The attack on ultranationalism has produced considerable uneasiness about patriotism..." - Morris Janowitz, *The Reconstruction of Patriotism: Education of Civic Consciousness* (Chicago - London: The University of Chicago Press, 1985), pp. 8-9.

⁴ "there is not one nationalism but many," Anatoly M. Khazanov, *After the USSR: Ethnicity, Nationalism, and Politics in the Commonwealth of Independent States* (Madison: The University of Wisconsin Press, 1995), p. XV.

Mother Tongue and the Origins of Nationalism

A Comparative Analysis of the Armenian and European Primary Sources*

Abridgement

Armen Aivazian

In its systematic analysis and conceptualization of the multifaceted phenomenon of nationalism, Western social science has made many insightful, theoretical generalizations. However, this analysis, particularly of the origins of nationalism, has been based almost entirely on the European social-historical experience from the 16th to the 20th centuries. This focus has somewhat skewed the results and led to insufficiently inclusive conclusions.

The majority of Western scholars of nationalism are of the opinion, for example, that the first nations appeared in Europe during the 16-19th centuries.¹ In this regard, Walker Connor, a “leading student of the origins and dynamics of ethnonationalism,” drawing upon the scholarship of Sir Ernest Barker, another well-known figure in the field, makes the sweeping claim that “the self-consciousness of nations is a product of the nineteenth century,”² which may be true of Europe, but not sufficiently inclusive of the experiences of non-European peoples with longer histories of national self-consciousness. Another expression of this school of thought is Liah Greenfeld’s insightful study (*Nationalism: Five Roads to Modernity*. Harvard University Press, 1992), which also over-extrapolates the European experience, stating:

The original modern idea of the nation emerged in sixteenth-century England, which was the first nation in the world...³

* *Armenian Folia Anglistika* (International Journal of English Studies), No. 1 (2), 2006, pp. 123-131. This is an abridged version of the study with the same title that was originally published by the author in Armenian as *Mayreni lezun yev azgaynakanutian skzbnavorume. haykakan yev yevropakan skzbnaghbyurneri hamematakan knnutiun* (Yerevan, *Matenadaran: Artagers*, 2001, the updated 2nd ed. was published in 2004)

These views can be interpreted to be a reflection of the fact that the populations of European countries did indeed undergo a transformation of national consciousness in the 16-19th centuries. Thus, according to Western studies, “the vast majority of people living within France were not conscious of being French until long after the French Revolution [of 1789].”⁴ Likewise, “in mid-nineteenth century Italy... only 3% of Italians could speak the common language; most spoke highly distinct regional dialects, and most identified themselves as Sicilians, Romans, and the like. By the end of World War I, however, most Italian immigrants to North America identified themselves as Italians. The Italian nation had grown or developed within less than seventy-five years.”⁵

Against this background, the Armenian experience is striking. Ancient, medieval, and early modern primary sources evidence a strong Armenian identity and nationalism well before the earliest manifestations of European nationalism cited by these scholars of European history. Even taking into account the acknowledged unique features of Armenian national identity, Armenian national consciousness exhibits many of the key characteristics of early modern and modern European nationalisms.

The intimate relationship between language and national consciousness has been established by various schools of historians, ethnologists, sociologists and social psychologists. In particular, it has been noted that a nation’s explicit pride in its national language coincides with the origin of nationhood itself. Mother tongues became the object of national pride for European nationalists only in the 16-19th centuries. This national pride was expressed in each case in like manner: the nation judged its language as far superior to all other languages. Armenian attitudes toward the Armenian language have not been thoroughly researched as a separate topic of history. Nevertheless, by all accounts, the Armenian language was perhaps chronologically the earliest and most crucial determinant in the formation of Armenian identity and ethnic consciousness. A distinct and coherent language community was a necessary prerequisite for the early branching of Armenian from the other Indo-European speakers. The use of Armenian as mother tongue determined who is Armenian.

This study sets forth comparative historical evidence about the time and circumstances when a national language becomes an object of national affection and pride. It analyzes the Armenian sources of the 5-18th centuries and compares them with the English, French and Russian sources of the 15-18th centuries.

The Armenian Case

The Golden Age of Armenian Culture (5th century AD)

Movses Khorenatzi, the Father of Armenian history who lived in the 5th century AD, was among the first to equate the territory of Armenia with the Armenian-speaking territory: “And on the eastern side [of Armenia], along the perimeter of Armenian language...”⁶

According to Khorenatzi, King Aram (who personifies either King Arame of 9th century BC or Aramani-Erimena of the 7th century BC) ordered the population of the newly incorporated westernmost region (later to be known as First Armenia) “to study the Armenian vocabulary and tongue.”⁷ This can be taken as evidence that early on the Armenian state realized the strategic importance of “linguistic policies” and their implementation.

The 5th century Armenian author, Pavstos Buzand, defines Armenia as “the entire world of the Armenian language” and “the Torgomian country-world of the Armenian language”⁸ (Torgom is the legendary ancestor of the Armenians). However, an adequate understanding of these definitions demands a more precise explication of the content of these terms: “the entire ‘world’ where the Armenian language was predominant” and “the Torgomian country-world where the Armenian language was predominant.”

The correctness of such a reading is supported by yet another passage from the *History of Armenia* by Pavstos Buzand, relating the national mourning which struck Armenia after the death of the revered 4th century Armenian Catholicos Nerses the Great:

Within the confines of Armenian country, from one end to the other, all nobles and common people, without exception, all nobles and common people of Torgomian country, and the Armenian language at large, were lamenting him.⁹

As clearly seen in this passage, Pavstos equated Armenians with those who spoke the Armenian language (it is noteworthy that there is no distinction on the basis of social classes). Further, he defined Armenia as an Armenian-speaking country, and again, like Movses Khorenatzi, determined the boundaries of Armenia by the territory dominated by the Armenian language. Pavstos Buzand deliberately used the Armenian language to connote an animate object, thus creating a semantical equation among the notions of country, people and language: Armenia=the Armenians=the Armenian language. In fact, in this context Pavstos used “the Armenian language” as a synonym for “the Armenian nation”¹⁰.

Centuries later the same equation can be found in a European analogue. At the beginning of the 19th century the German author Ernest Moritz Arndt gave a strikingly similar definition to Germany - *Das ist des Deutschen Vaterland*, literally - “this is the country [under the domination] of German language.”¹¹

Among these fifth-century attempts to fix the place of the Armenian language in the sociopolitical development of Armenian society, perhaps the most articulate was that of Yeghishe, the author of the *History of Vardan and the Armenian War*. In his theological work, entitled “An Interpretation of the Book of Genesis,” Yeghishe describes the linguistic dispersion after the destruction of the Tower of Babel in which he includes the following comparison of the Armenian language to nine other languages:

Hence, a gracefulness came forth from the split of one large language: The Greek is soft, the Latin is vigorous, the Hunnish is threatening, the Assyrian is sychophantic, the Persian is eloquent, the Alani (i. e., the old Ossetic) is ornate, the Gothic is mocking, the Egyptian sounds as if spoken from the dark and hidden place, the Hindu is chirping, [and] the Armenian is sweet and capable of embracing all these languages in itself.

And as one color is brightened by another, one face by another, one age by another and one art by another, in the same way one language is made more beautiful by another.¹²

This passage shows, on the one hand, Yeghishe’s undisguised pride for his mother tongue, which he considers to be the best, and, on the other hand, a healthy respect for other languages or “linguistic cultures,” though Yeghishe’s almost bantering characterization of them serves further to emphasize his sense of the supremacy of the Armenian language. This calm and friendly posture toward alien cultures illustrates the confidence of 5th-century Armenians that their civilization and culture were sufficiently powerful to withstand the alien influences or absorb their useful elements. Such an outward-looking nationalism could be perhaps termed as an “internationalist” nationalism.

13-18th centuries

It is noteworthy that this passage from Yeghishe became a staple of Armenian literature, was frequently cited and developed by influential Armenian authors, such as Vardan Areveltzi (ca. 1200-1271) in 1267, Mkhitar Ayrivanetzi (?-1305) in 1289, Hovhannes Yerznkatzi (ca.1250-

1326) in 1291, Grigor Tatevatzi (1346-1409) in 1397 and Michael Chamchian (1738-1823) in 1784¹³.

Furthermore, in his *Interpretation of Grammar* written at the request of the Cilician Armenian King Hetum I in 1244-1246, Vardan Areveltzi added his own comparative observations of Greek, Latin, and Armenian, finding Armenian to surpass the others:

But you, oh [Armenian] nation, examine and study the languages: Thus, the Greeks, the Franks (i.e. Europeans writing in Latin - A. A.) and the Hellens, who are the Macedonians (sic), must take great pains to say what they want and hear the distinctions of whether the words are masculine, feminine, neuter or dual.

But our Armenian nation, thanks to the richness and abundance of our language, was not constrained to this [usage of gender], while the Greeks and other nations were compelled [to such usage] because of the shortcomings of their languages and scripts, and by this way they filled in those insufficiencies¹⁴.

Vardan Areveltzi has three other comparative observations that also convey this pro-Armenian attitude. A widely copied and distributed book, his *Grammar*, originally contracted to be taught in the King's court as well as in schools, could not but have had an effect on the Armenians' patriotic-nationalistic worldview.

Grigor Tatevatzi (1346-1409), the great apologist of the Armenian Church and its doctrine, in his famous "Book of Questions and Answers" (completed in 1397) also repeats Yeghishe's linguistic observation, with slight modifications:

The Greek is soft, the Latin is vigorous, the Hunnish is threatening, the Hindu is chirping, the Persian is eloquent, the Armenian is sweet; and an Armenian is able to learn all languages completely and correctly, but others learn the Armenian in a faulty and distorted version, because their languages are imperfect¹⁵.

Other medieval and early modern Armenian authors expressed their own pride in Armenian language. Perhaps the most illustrative is the case of Michael Chamchian (1738-1823), the Catholic Armenian monk and historian, whose *History of Armenia* (published in 1784 in Venice) includes an extensive chapter with the revealing title – "About the Armenian Language, Which Is the First One," where it is argued that Armenian was and continued to be the language of God and Adam, because it was not subject to the confusion of languages during the destruction of Tower of Babel¹⁶.

The English Case

According to recent research, the English began to express their affection and pride in their language in the 16th century. The majority of English intellectuals regarded English to be the finest language in the world. The best illustration is provided by Richard Carew, who in 1595-1596 wrote the *Epistle on the Excellency of the English Tongue*. Here is one excerpt from it:

The Italyan is pleasante but without synewes, as to stillye fleeting water; the French delicate but ouer nice, as a woman scarce daring to open her lipps for feare of marring her countenaunce; the Spanish maiesticall, but fulesome, running too much on the O, and terrible like the deuill in a playe; the Dutch manlike, but withall very hoarse, as one ready at every worde to picke a quarell. Now wee in borrowing from them geue the strength of Consonantes to the Italyan, the full sounde of wordes to the French, the varietye of terminacions to the Spanish, and the mollifieinge of more vowells to the Dutch; and soe (like bees) gather the honey of their good properties and leave the dreggs to themselves. ...howe canne the language which consisteth of all these sounde other then most full of sweetnes?¹⁷

The French Case

Scholarship has also found a similar attitude toward the French language during 13-14th centuries; however, in this case, the pride was not for the language of all France, but for the language of Paris alone. In the 11th century France, the vernacular literature was written in Anglo-Norman, while in the 13th and 14th centuries, depending from which region was the author - Picardese, Champagnese, Burgundese. Each of these languages had its own dialects. Nevertheless, starting from the 12th century, French became the language of European elites and according to one source dating to 1148, anyone who did not know French was considered a barbarian¹⁸. The French of Paris was referred to in 13th century as “the most beautiful language in the world” (la plus delitable a ouir et a entendre). Here is one example:

The sweet French tongue is the most beautiful, gracious and noble language in the world, the best accepted and loved. For God made it so sweet and lovable for his glory and praise, that it can be compared to the language spoken by the angels in heaven.¹⁹

The Russian Case

The teachers of the Russian language, especially in the former Soviet Union, have frequently cited as a didactic material the statement of Mikhail Lomonosov (1711-1765), Russian writer, scientist and innovator, often called the founder of Russian science, who wrote:

...the Russian language is the greatest among all languages in Europe, not only because of the wideness of territory under its domination, but also because of its own abundance and sufficiency... Charles V, the Roman Emperor, was wont to say that one ought to speak Spanish to one's God, French to one's friends, German to one's enemies, Italian to the feminine sex. But, had he been well-versed in the Russian tongue, he would certainly have added that it is appropriate for converse with all of these. For he would have found in it the magnificence of Spanish, the vivacity of French, the firmness of German, the delicacy of Italian, and, moreover, the richness and powerful concise imagery of the Greek and Latin.²⁰

This passage was written by Lomonosov in 1755. Paradoxically, the Russian language was only standardized phonetically, grammatically and stylistically in the first decades of the 19th century, thanks, in particular, to the writings by Alexander Pushkin. This coalescence of a standardized language was made possible by the efforts of the nationalistic intellectuals like Lomonosov as well as Russian state itself during the preceding century.

It is interesting to note that Hans Rogger and Liah Greenfeld, two British authors familiar with both Lomonosov's and Richard Carew's observations about Russian and English languages remarked upon their similarity, stating that Lomonosov was unaware of Carew's observations on the English language, written two centuries earlier. In a similar vein, it is fair to conclude that neither Carew, nor Lomonosov could have been familiar with similar thoughts expressed by the Armenian authors in the 5th, 13th, 14th and 18th centuries.

Furthermore, the saying by Charles V was quoted in a popular Armenian manual published as early as 1699:

Carlo Quinto, who ruled as Emperor since 1519, used to say to his vassals: "I would have wished that a knowledgeable person speaks French to his friends, German to his horse, Italian to his wife, Spanish to the God, English to the birds."²¹

Conclusions

Why and how did it happen that Yeghishe, Carew and Lomonosov independently created resembling maxims about their mother tongues, notwithstanding the great differences in time, space, and perhaps more importantly, their respective political-cultural environments?

One explanation is that these three authors were influenced by the similar historical-social circumstances and expressed this influence in strikingly similar terms and logic. Yeghishe, Carew and Lomonosov were prompted to speak on the excellence of their own languages, first and foremost, as part of the transformation of their national consciousness and the historical imperatives of their times, rather than by the inherent linguistic merits of mother tongues. In the Armenian case, Yeghishe was prompted to write by re-assertion of Armenian national consciousness, after the adoption of Christianity, creation of the national alphabet and the patriotic war against Persia of 450-451. In each case the same formula of comparison with other similar objects, that is, other languages, is the means to expression this national pride. This is precisely what was done by Yeghishe in 450-460s, Vardan Areveltzi, Mkhitar Ayrivanetzi, Hovhannes Yerznkatzi in the 13th century and Grigor Tatevatzi in 1397 in Armenia, by Richard Carew in 1595-1596 in England, and by Mikhail Lomonosov in 1755 in Russia.

As might be expected, these attitudes and this formula were not limited to language. Yeghishe, for example, makes the following observation in the domain of geography:

With the two rivers [i.e. Euphrates and Tigris] and the [Noah's] Ark, we stand higher than all other[nation]s!²²

It is not coincidental that Carew wrote his “Epistle on the Excellency of English Tongue” during the most glorious years of reign of Queen Elisabeth the First (1588-1603), just in a few years after England had destroyed Spain's Invincible Armada in 1588 and established its rule over seas. Likewise, Mikhail Lomonosov's glorification of the Russian language coincided with the unprecedented rise of Russia's political might in the second half of the 18th century.

In this regard, however, the Armenian case differs: Yeghishe and the other aforementioned Armenian writers cited above wrote when the Armenian state's mightiest period was a memory from the past, but the Armenians, as a nation, refused to reconcile themselves to the loss of full-fledged independence and continued to seek ways for the reestablishment of Armenian rule over all of historic Armenia. During exceptionally unfavorable historical

periods, the Armenian intellectual elite turned its efforts to work in the cultural field, as well as on the refinement of ideological underpinnings for the preservation and reinforcement of national identity.

The analytical and patriotic arguments about the Armenian language, which are found in primary sources from the 5th century AD onwards, support the conclusion that the Armenians had a definite national consciousness as well as a well-developed national-political ideology as early as the 5th century.

In conclusion, the mother tongue becomes an object of national pride and affection, when an ethnic group with a high level of cultural development attains the stable characteristics of a nation. After this, the nation's intellectual elite, supported and sponsored by the political elite, with the aim of further refining and institutionalizing national consciousness, embarks on an in-depth analysis of the elements of national identity (including national language), elaborating, inter alia, a theoretical framework for the further development of that national consciousness.

Notes and References:

1. There are, however, some exceptions to this belief, notably the following studies by Adrian Hastings. *The Construction of Nationhood: Ethnicity, Religion and Nationalism*. Cambridge, Cambridge University Press, 1997; Michael Lind, In Defense of Liberal Nationalism. // Foreign Affairs. May/June 1994, pp. 87-99.
2. See Walker Connor, *Ethnonationalism: The Quest for Understanding*. New Jersey, Princeton University Press, 1996, p. 4, paperback page; cf. Ernest Barker, *National Character and the Factors in Its Formation*. London, 1927, p. 173.
3. Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity*. Cambridge, Mass., Harvard University Press, 1992, p. 14, cf. p. 6.
At the same time, Greenfeld, in her words, "parenthetically" accepts that "individual proto-nations - namely societies held together by solidarities remarkably similar to national, although not called "nations" - were known in the ancient world, notably among the Jews and the Greeks," p. 495, endnote 9.
4. Walker Connor, *Ethnonationalism*, op. cit., p. 95.
5. K. J. Holsti, *International Politics: A Framework for Analysis*. New Jersey, Prentice-Hall, 1995, p. 58.
6. Movses Khorenatzi, *Patmutiun Hayotz [History of Armenia]*. Yerevan: Academy of Sciences Printing House, 1991. Book 3, Chapter 8.
7. Ibid., p.46.
8. Pavstos Buzand(atzi), *Patmutiun Hayotz [History of Armenia]*. Venice, 1933, Book 4, Chapter 12, p. 115.
9. Ibid., Book 3, Chapter 13, p. 43.

10. For an in-depth analysis, see Armen Aivazian, “Hin Hayastane vorpes ‘azgayin petutian’,” [Ancient Armenia as a ‘Nation State’]. *Etchmiadzin* (Official Monthly of the Holy See of Etchmiadzin), No. 5 (May) 2005, pp. 123-138.
11. Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity*, pp. 368, 549 (n. 179); quoted from *Deutsche Vaterlandslieder*. Leipzig: Insel-Verlag, 193[?], Insel-Bucherei 154, p. 28.
12. Levon Khachikian, *Yeghishei “Araratsotz meknutiune” [An Interpretation of the Book of Genesis]*. Yerevan, “Zvartnotz”, 1992, p. 249; cf. Levon Khachikian, *Ashkhatutiunner [Works]*. Yerevan: “Gandzasar”, 1995, p. 15. This passage, for the first time, was identically translated into English in 2001, see in A. Ayvazyan, *Mayreni lezun yev azgaynakanutian skzbnavorume*, op.cit., p. 52. A later translation, apparently unaware of the first one, appeared in 2004 in *Commentary on Genesis by Eghishe*. Scholarly work by Levon Khachikyan. Introduction and editing by Hakob Kyoseyan. Translated by Michael Papazian Yerevan, Magaghat, 2004, p. 111: “From the eloquence in one great and delicate language there came Greek, impetuous, Latin, threatening, Hunnish, suppliant, Assyrian, haughty, Persian, well-adorned, Alan, ridiculous, Gothic, flat and obscure, Egyptian, chirpy, Indian, sweet, and Armenian, which can contain all these within itself.” As is evident from the comparison with the original Armenian text, this later translation confuses the sequence of evaluations given by Eghishe to all the ten languages, mistakenly attributing the word “delicate” or “soft” [in Armenian – **պօք**] to the “great” original language rather than to the Greek. The correct sequence is represented in the earlier translation, offered above. The mistake is additionally evident from the comparison with five later citations of Yeghishe’s same passage by the medieval Armenian authors, all of which accurately attribute the word “**պօք**” to the Greek. A. Ayvazyan, *Mayreni lezun yev azgaynakanutian skzbnavorume*, op.cit., pp. 27-28, 30-31.
13. *Ibid.*, pp. 23-33.
14. Vardan Areveltzi, *Meknutiun kerakani [An Interpretation of Grammar]*. With an introduction and commentary by L. G. Khacherian. Yerevan, Academy of Sciences Printing House, 1972, p. 93.
15. Grigor Tatevatzi, *Girk hartzmantz [A Book of Questions]*. Constantinople, 1729, p. 297.
16. M. Chamchiantz, *Patmutiun Hayotz [History of Armenia]*. Venice, 1784, pp. 153-154, 164.
17. Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity*, pp. 69-70, 78.
18. *Ibid.*, p. 98.
19. *Ibid.*.
20. М. В. Ломоносов, *Избранные произведения. Том 2. История, филология, поэзия*. Москва, Наука, 1986, с. 195; cf. Liah Greenfeld, *Nationalism. Five Roads to Modernity*, p. 244-245.
21. Ghukas Vanandetzi, *Gandz chapo, kshro, tvotz yev dramitz bolor ashkharhi [A manual of the measures, weights, numbers and coins of the whole world]*. Amsterdam, 1699, pp. 50-51.
22. Levon Khachikian, *Yeghishei Araratsotz meknutiune*, p. 245.

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՈՐՊԵՍ

«ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Արևմտյան հասարակագիտության մեջ հաճախակիորեն կիրառվող «ազգ-պետություն» կամ «ազգային պետություն» (*nation-state*) հասկացության ընդունված բացատրությունն այսպիսին է. «Ազգային պետությունն այն ազգն է, որ կառավարվում է այնպիսի պետության կողմից, որի իշխանությունը համընկնում է այդ ազգի սահմանների հետ»¹: Ընդ որում՝ ազգն էլ հասկացվում է «իբրև մի հասարակություն, որը զբաղեցնում է որոշակի տարածք և ունի ընդհանուր ինքնության, պատմության ու ճակատագրի զգացում-ըմբռնում»²:

Սակայն արևմտյան հասարակագետների մեծամասնությունն այն կարծիքին է, թե ազգային պետություններն, ինչպես և ազգայնականությունը, առաջացել են եվրոպայում 16-18-րդ դարերում (սկզբում Անգլիայում, Հոլանդիայում և Ֆրանսիայում) ու 19-20-րդ դարերում, նոր միայն սփռվել աշխարհով մեկ³:

Մեր երկու նախորդ ուսումնասիրություններում նոր բացահայտումներով հիմնավորել էինք, որ Հին Հայաստանում առկա էին եվրոպական ազգայնականությանը բնորոշ կարևոր տարրերից շատերը, այդ թվում՝ ազգային հստակ ինքնագիտակցությունը, մայրենի լեզվի պաշտամունքը, հայրենիքի և ազգի գաղափարները⁴: Մասնավորապես, 4-5-րդ դարերում գրավոր արձանագրված հայ զինվորականության արժեհամակարգը, իր գրույթներով և առաջ-

¹ "Nation-state is a nation governed by a state whose authority coincides with the boundaries of the nation"; **Allan G. Johnson**, *The Blackwell Dictionary of Sociology* (Cambridge, Mass.: Blackwell Publ., 1995), p. 188.

² "A nation is a society that occupies a particular territory and includes a sense of common identity, history, and destiny;" *Ibid.*.

³ *Ibid.*; **Stuart Woolf**, *Nationalism in Europe, 1815 to the Present: A Reader* (London: Routledge, 1996), p. 2; "Typologies of Government. National Political Systems," *Encyclopædia Britannica*, CD version, 1999; *Քաղաքագիտության և քաղաքականության Օքսֆորդի բացատրական բառարան*: Խմբագիր՝ Այն Մակլին (Երևան, «Գիտանք» հրատ., 2003), էջ 356-357. լրացուցիչ գրականության համար տե՛ս նաև մեր *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը (հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն)*, Երևան, «Արտագերս», 2001, էջ 12-15:

⁴ **Արմեն Այվազյան**, *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը*, նշվ. աշխ. և *Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)* (Երևան, «Արտագերս» հրատ.), 2000:

նահերթությամբ հանդերձ, խիստ արտասովոր երևույթ են հին ու միջին դարերի համար: Հիշեցնենք, որ հայ գինվորականն իր ստանձնած 1-ին հանձնառությամբ երգվում էր անձնուրաց ծառայել Հայաստան երկրին և թագավորությանը (պետությանը), իսկ 4-րդով Հայաստանի ամբողջ ժողովրդին, բոլոր բնակիչներին անխտիր՝ անկախ նրանց սոցիալական ծագումից ու դիրքից⁵: Այս դրույթների հետագա մանրաստույգ հետազոտությունն ու պարզաբանումը հնարավորություն է ընձեռում հանգելու նոր, կարևոր եզրակացությունների:

Այդ կապակցությամբ, նախ, քննենք Փավստոս Բուզանդի երկու հաղորդումը: Առաջինը Հայաստանում Մանուել սպարապետի մահվանը (384 թ.) հետևած համաժողովրդական սուգի մասին է.

«Հայոց երկրի բոլոր մարդիկ, ազնվականները թե շինականները, մեծ դառնությամբ լացում ու կոծում էին նրան... ողբում էին բարենշան և աշխարհաշեն Մանուելին: Բոլորը բերանաբաց հառաչում էին, կարոտագին մղկտում էին իրենց քաջ զորավարի համար...»

[...ամենայն մարդ երկրին Հայոց կոծ եղեալ, մեծաւ աշխարանօք լացին զնա առ հասարակ ազատք եւ շինականք... ի կարի առնէին... բարէնշան զաշխարհաշէն անձն Մանուէլի: Ամենեքեան բերանաբաց հառաչէին զկնի նորա, կղկղաթ կաթոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն...]⁶

Մեկ այլ նմանատիպ հաղորդում էլ կա ներսես Մեծ կաթողիկոսի մահվան առիթով.

⁵ Ա. Այվազյան, Հայ գինվորականության պատվո վարքականոնը, նշվ. հրատ., էջ 7-20:

⁶ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե, գլ. ԽԴ, էջ 394 (ԵՊՀ հրատ., Երևան, 1987): Սույն հոդվածում Փավստոս Բուզանդի երկի գրաբար բնագրից կատարված փոխադրումներն արդի հայերենի մերն են՝ Ա.Ա., բացառությամբ նշված դեպքերի:

«Եվ Հայոց երկրի սահմանների ներսում մի ծայրից մյուս ծայրը, սգում էին նրան բոլոր ազնվականներն ու շինականները՝ Թորգոմի տան բնակիչ բոլոր ազնվականներն ու շինականներն անխտիր, հայ լեզուն առհասարակ»:

[Եւ սգային ամենայն ազատք եւ շինականք ծագէ ի ծագ ամենայն սահմանաց երկրին Հայոց, ազատք եւ շինականք ամենայն բնակիչք տանն Թորգոմայ, հայ լեզուն առհասարակ:]⁷

Բաղդատելով այս հաղորդումները հայ զինվորականության արժեհամակարգի վերը հիշատակված 1-ին և 4-րդ դրույթների հետ (անձնուրաց ծառայություն հայրենիքին և ժողովրդին) պետք է ընդունենք, որ Ք. հ. առաջին դարերում, գուցե և ավելի վաղ, գոյություն է ունեցել հայկական ինքնություն և ազգայնականություն գրեթե մերօրյա եվրոպական հասկացողությամբ, այսինքն՝ երբ «[ըստ դասերի] շերտավորված ազգային բնակչությունն ընկալվում է իբրև հիմնականում միատարր, իսկ [սոցիալական] կարգավիճակների և դասակարգերի միջև եղած սահմանագծերը՝ իբրև ոչ խորը, այս օրենքն ընկած է բոլոր տեսակի ազգայնականությունների հիմքում»⁸: Ի դեպ, պարզաբանելով վերջին հաղորդման մեջ «հայ լեզուն առհասարակ» արտահայտությունը, նկատել էինք, որ «Փավստոսը «հայոց լեզուն» գիտակցաբար անձնավորել է՝ հաղորդելով շնչավոր, կենդանի առարկա-գործոնի նշանակություն, նույնացնելով Հայաստան-հայեր-հայոց «լեզու» հասկացությունները»⁹: Սակայն, սրան պետք է ավելացնել, որ հնում «լեզու» բառն ունեցել է նաև «ազգ», «ժողովուրդ» հասկացությունների նշանա-

⁷ Փավստոս Բուզանդ, *Պատմություն Հայոց*, Ե, գլ. Լ: Այս հաղորդման մանրամասն քննությունը տե՛ս **Ա. Այվազյան**, *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը*, էջ 20-22:

⁸ "...a stratified national population is perceived as essentially homogeneous, and the lines of status and class as superficial. This principle lies at the basis of all nationalisms"; **Liah Greenfeld**, *Nationalism. Five Roads to Modernity* (Cambridge, Mass.: Harvard University Press, 1992), p. 7.

⁹ **Ա. Այվազյան**, *Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը*, էջ 21:

կուլթյուն¹⁰: Այսինքն՝ Փավստոսի այս հաղորդման «հայ լեզուն առհասարակ» արտահայտությունը պետք է ուղղակի թարգմանել որպես «հայոց ազգն առհասարակ»:

Պատկերացնելու համար, թե հին հայկական հասարակության մեջ ինչպիսի՜ կարևոր դեր էր վերապահված սոցիալական ցածր դիրք զբաղեցնող դասերին, կարևոր է հիշել պարբերաբար կամ հատուկ իրադարձությունների պահանջով գումարվող համահայկական աշխարհաժողովները, որոնց մասնակցում էին բոլոր խավերի ներկայացուցիչները, ներառյալ շինականները: Առնվազն մինչև 6-7-րդ դարերը հայկական պետության ու հասարակության համար վճռորոշ որոշումների ընդունման ժամանակ շինականների ձայնն ու համաձայնությունը բավական կարևոր նշանակություն են ունեցել¹¹: Ահա թե ինչպիսի հետաքրքրական մանրամասնություններ է հաղորդում Փավստոս Բուզանդը 350 թ. Հայաստանում գումարված աշխարհաժողովի մասին, որը պետք է ելք գտներ այն ծանր կացությունից, որն առաջացել էր պարսիկներին՝ հայոց Տիրան թագավորին նենգաբար գերելուց հետո.

«Այնուհետև Հայաստան աշխարհի մարդիկ առավել միաբանվեցին և հավաքվեցին ժողովի. - մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, աշխարհակալները, ազատները, զորագույնները, դատավորները, պետերը, իշխանները, իսկ հրամանատարներից՝ նաև շինականներն ու ռամիկ մարդիկ անգամ: Ապա սկսեցին քննարկել միմյանց հետ և ասում էին. «Այս ի՞նչ ենք նստել սուգ անում. թշնամիներն սրանից կօգտվեն և շուտով դարձյալ մեր դեմ կարշավեն: Փոխարենը՝ եկեք ինքներս մեզ մխիթարենք, մարդկանց

¹⁰ Օրինակ, Վ. Դալը «լեզու» բառի հին իմաստների մեջ ներառում է նաև այսպիսի բացատրություն. «ժողովուրդ, երկիր, իր միացել բնակչությամբ ու միասնական լեզվով» (Народ, земля, с одноплеменным населением своим, с одинаковою речью), В. Даль, Толковый словарь живого великорусского языка (Том IV, Москва, 1955), с. 164.

¹¹ Տե՛ս **Հակոբ Մանանդյան**, *Երկեր: Ֆեոդալիզմը Հին Հայաստանում*. հտ. Դ. Երևան, ԳՄ հրատ., 1981, էջ 249-252. հմմտ. *Հայ ժողովրդի պատմություն*. հտ. Բ, Երևան, ԳՄ հրատ., 1984, էջ 142:

ու տերությունը պահպանենք և մեր բնիկ տիրոջ համար վրեժխնդիր լինենք»։ Այնուհետև [Հայաստան] աշխարհի բոլոր մարդիկ անխտիր միաբանվեցին-համաձայնվեցին միևնույն որոշման շուրջ, այն է՝ գտնելու իրենց օգնություն և թրկունք»։

[Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զօրավարացն, այլեւ ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն։ Ապա խօսել սկսան այր ընդ ընգերի, եւ ասեն. «Զինչ է այս, որ ի սուգ մտեալ եմք. թշնամիք այսու գամագիւտ լինին, այլ քան սակաւ ժամանակք են, այսրէն արշաւեսցեն թշնամինք։ Այլ եկայք, զանձինս անձամբք միսիթարեսցուք, անձանց եւ աշխարհի պահ կալցուք, եւ զտեառն բնակի վրէժ խնդրեսցուք»։ Ապա առհասարակ ամենայն մարդիկ աշխարհին ի մի միաբանութիւն եւ ի մի խորհուրդս ժողովեցան վասն օգնականութեան եւ ի թրկունս իւրեանց գտանելոյ։]¹²

¹² **Փաստոս Բուզանդ.** *Պատմութիւն Հայոց*, Գ, գլ. ԻԱ։ Փոխադրումը արդի հայերենի մերն է, քանզի վերոբերյալ հատվածի Մալխասյանցի ընթերցումը, ընդհանուր առմամբ, թերի է.

Այնուհետև ավելի մեծ միաբանությամբ ժողովվեցին Հայոց աշխարհի մարդիկ. - մեծամեծ նախարարները, ավագները, կուսակալները, աշխարհակալները, ազնվականները, զորագլուխները, դատավորները, պետերը, իշխանները, - բացի զորավարներից, նույնիսկ ռամիկ շինական մարդիկ։ Սկսեցին իրար հետ խոսել և ասում էին. «Այս ի՛նչ է մեր արածը, նստել սուգ ենք անում, թշնամիները սրանից կօգտվին, շատ չանցած՝ էլի մեր երկիրը կարշավեն։ Եկե՛ք, մենք մեզ մխիթարենք, մեր գլուխներն ու աշխարհը պահպանենք և մեր բնիկ տիրոջ համար վրեժխնդիր լինինք»։ Այսպես աշխարհի բոլոր մարդիկ ժողովվելով խորհուրդ արին, միաբանեցան, որ իրենց համար օգնություն ու թրկունք գտնեն։

Այս հատվածի՝ մեր և Մալխասյանցի ընթերցումների միջև եղած տարբերությունները շատ են, ուստի համեմատելու հնարավորությունը թողնում ենք ընթերցողին։ Ուշադրություն հրավիրենք, սակայն, ա) առաջին և վերջին նախադասությունների տարբեր ընթերցմանը, բ) Մալխասյանցի հետևյալ ոչ ճիշտ ընթերցման վրա՝ «բացի զորավարներից, նույնիսկ ռամիկ շինական մարդիկ»

Փավստոսի այս հաղորդումից հետևում է, որ աշխարհաժողովներում շինականներին ու ռամիկներին սովորաբար ներկայացրել են Հայոց բանակում ծառայողները, այն էլ՝ հրամանատարները (գորավարները): Ընդ որում, շինականներն ու ռամիկները համարում էին ոչ միայն հետևակը, այլև հեծելազորը. աղբյուրներում հիշվում են «ռամիկ այրուձին» և «ռամիկ հեծեալ»-ները¹³: Ամեն դեպքում հայ շինականների և ռամիկների մասնակցությունը աշխարհաժողովներին և, այդ ճանապարհով, երկրի կառավարման քաղաքական գործընթացներին անժխտելի է: Հետևաբար, շինականների և ռամիկների վերաբերյալ սկզբնաղբյուրներում մի քանի այլ կարգի տեղեկություններ քննելիս, Հ. Մանանդյանը միանգամայն ճիշտ էր նկատում, որ ««շինական»-ներն ուշագրություն են առնվել երբեմն ֆեոդալական Հայաստանի քաղաքական կենցաղում»¹⁴:

Հռոմեացի հռչակավոր հեղինակ, պատմագիտության հայր համարվող Փայոս Կոռնելիոս Տակիտոսի (56-125 թթ.) ստորև մեջբերվող հաղորդումները լրացուցիչ լույս են սփռում հայկական աշ-

փոխանակ «իսկ հրամանատարներից՝ նաև շինականներն ու ռամիկ մարդիկ անգամ», և գ) Փավստոսի գրչին գուսանական-վիպասանական խորթ ոճ հաղորդելու վրա՝ «կոզտվին» փոխանակ «կոզտվեն», «մեր գլուխները» փոխանակ «մարդկանց», «վրեժխնդիր լինինք» փոխանակ «վրեժխնդիր լինենք» և այլն: Փավստոսագիտության ավանդաբար սխալ մոտեցումների մասին մանրամասն տե՛ս Արմեն Այվազյան, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն)*. Երևան, «Արտագերս», 1998, էջ 169-185:

¹³ **Հակոբ Մանանդյան**, *Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարզպանության շրջանում*: Երկեր: Կ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 35-36: *Հայ ժողովրդի պատմություն*, հտ. Բ, 1984, էջ 128:

¹⁴ **Հակոբ Մանանդյան**, *Ֆեոդալիզմը Հին Հայաստանում*: Երկեր: Կ. Դ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ 333: Ա. Ա. Ստեփանյանը, անդրադառնալով հայ հին իրավունքի, մասնավորապես՝ աշխարհաժողովների որոշ հարցերին, նույնիսկ պնդում է, որ հե՛նց Հայաստանի ցածր խավերի հետ համաձայնությունը խախտելու և արդյունքում վերջիններիս տրամադրած զինուժից զրկվելու պատճառով է Ք.ա. 55 թ. կործանվել Արտավազդ Բ հայոց թագավորը. – **А. А. Степанян**, “О государственной политике Артавазда II”. – *Պատմա-բանասիրական հանդես*, 1989, No. 2 (125), էջ 40-54:

խառնաժողովի վրա ու նաև վկայում են, որ արդեն 1-ին դարում հռոմեացիները հրաշալի գիտակցում էին հայերի ազգային յուրօրինակ կենսաձևն ու աշխարհընկալումը.

«Վոնոնին հեռացնելուց հետո հայերը մի պահ թագավոր չունեին, սակայն ժողովրդի տրամադրությունը հակվում էր դեպի Պոնտոսի թագավոր Պոլեմոսի որդին՝ Զենոնը, որովհետև, վաղ մանկությունից ի վեր յուրացնելով հայերի սովորույթներն ու կենսաձևը, որսագնացությանը, խնջույքներին և բարբարոսների մոտ ընդունված այլ զբաղմունքներին իր մասնակցությամբ՝ նա շահել էր և՛ ազնվականների, և՛ հասարակ ժողովրդի համակրանքը»¹⁵ :

¹⁵ Լատիներեն բնագրից հայերեն թարգմանությունը կատարել ենք պատմ. գիտ. թեկնածու Գոհար Մուրադյանի պատրաստակամ օժանդակությամբ, որի համար շնորհակալ ենք (հմմտ. *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի*ա. հտ. 1. Հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը (Երևան, ԵՊՀ հրատ., 1981), էջ 317-318: Համեմատել ենք նաև ստորև բերված անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն թարգմանությունների հետ.

լատիներեն բնագիր. "Regem illa tempestate non habebant, amoto Vonone: sed favor nationis inclinabat in Zenonem, Polemonis regis Pontici filium, quod is prima ab infantia instituta et cultum Armeniorum aemulatus, venatu, epilus quae alia barbari celebrant, proceres plebemque iuxta devinxerat";

անգլերեն թարգմանություն. "At the moment they lacked a king, but the national sentiment leaned to Zeno, a son of the Pontic sovereign Polemo: for the prince, an imitator from earliest infancy of Armenian institutions and dress, had endeared himself equally to the higher and the lower orders by his affection for the chase, the banquet, and the other favourite pastimes of barbarians." տե՛ս **Tacitus**, *Annales*. With an English translation by Clifford H. Moore (Cambridge, Mass.-London: Harvard University Press, 1969), II, 56, pp. 472-475;

ֆրանսերեն թարգմանություն. "Depuis l'enlèvement de Vonon, ils n'avaient point de roi; mais le vœu de la nation se déclarait en faveur de Zenon. Ce prince, fils de Polémon, roi de Pont, en imitant dès son enfance les usages et la manière de vivre des Arméniens, leurs chasses, leurs festins, et tous les goûts des barbares, s'était également concilié les grands et le peuple..." - տե՛ս **Tacite**, *Œuvres Complètes*. Traduites en Français avec une introduction et des notes par J. L. Bunouf (Paris: Librairie Hachette, 1878), p. 79-80;

ռուսերեն թարգմանություն. "Царя в то время, по устранении Вонона, они не имели; впрочем благоволение народа склонялось к сыну понтийского царя Полемона Зенону, так как, усвоив с раннего детства обычаи и образ жизни армян, он своими охотами, пиршествами и всем, что в особой чести у варваров, пленил в равной мере и придворных, и простолудинов" (**Корнелий Тацит**.

Տակիտոսի հաղորդումը վկայում է, որ Հայաստանում իշխելու համար կարևոր են եղել ոչ միայն երկրի իշխող դասի, այլև հասարակ ժողովրդի կարծիքն ու համապատասխան հակվածությունը: Ըստ այդմ էլ՝ 18 թ. Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքում գումարվում է հատուկ աշխարհաժողով, որտեղ Հռոմեական կայսրության ներկայացուցիչ Գերմանիկոս զորավարը՝ «մեծամեծների հավանությունը և հասարակ ժողովրդի մեծ բազմության ներկայությունը»¹⁶ Ջենոնի գլխին է դնում արքայական թագը: Հետաքրքիր է հատկապես այն, որ թագադրման պահին հայերն անմիջապես անվանափոխում և ողջունում են Ջենոնին իրենց սիրված Արտաշեսյան հարըստության թագավորների անունով Արտաշես¹⁷: Այսինքն՝ աշխարհաժողովը պարտադրել է վարք ու բարքով, անշուշտ նաև լեզվով արդեն իսկ հայացած Ջենոնին՝ թագադրման պահին հայոց սիրված թագավորի անուն ընդունել: Պարզ է, որ Ջենոնը, համաձայնություն տալով այդ պահանջին, վերջնականապես հաստատում էր իր լիակատար հայացումը՝ պարտավորվելով ամեն ինչում պաշտպանել հայկական օրենքներն ու շահերը: Այսբանից հետո հասկանալի է դառնում, թե ինչու Ջենոն-Արտաշեսը այն միակ ոչ-հայ թագավորը եղավ (18-35 թթ.), որին հայերը հոժարակամ ընդունեցին և հանդուրժեցին Ք. հ. 11 թ. մինչև 54 թ., այսինքն՝ Արտաշեսյան հարըստության վերջնական կործանումից մինչև պարթև Արշակունիների՝ Հայաստանում թագավորելն ու նմանապես արագ հայացվելը:

Նույն Տակիտոսը անում է առավել հստակ մի հաղորդում՝ իր և, ինչպես ինքը հատուկ շեշտում է, իրենից շատ ավելի վաղ ընկած ժամանակներում հայերի ազգային ինքնագիտակցության, համախմբման ու բնավորության մասին, ահավասիկ.

Сочинения в двух томах. *Анналы*. Книга вторая (Ленинград: «Наука», 1969), 56 с. 69).

¹⁶ Այս նախադասության անգլերեն թարգմանությունն առավել ճշգրիտ է՝ «the consenting nobles and a great concourse of the people»:

¹⁷ Նույն տեղում: Պատմաբանները նկատել են, որ Տակիտոսը սխալմամբ կարծում է, թե հայերը Ջենոնին անվանափոխել են Արտաշատ քաղաքի անունով (տե՛ս *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*. հտ. 1, էջ 319, ծնթ. 28-ում. Tacitus, *Annales*, op. cit., p. 474, note 4).

«Այս ժողովուրդը հնուց ի վեր վստահելի չէ թե՛ իր բնավորության և թե՛ իր երկրի աշխարհագրական դիրքի պատճառով, որովհետև մեր պրովինցիաներին լայնորեն սահմանակից լինելով, տարածվում է ընդհուպ մինչև Մարաստան: Եվ նրանք, ընկած լինելով մեծագույն կայսրությանների միջև, հաճախ գժտվում են նրանց հետ, ատելով հռոմեացիներին, և նախանձախնդրություն ցուցաբերելով պարթևների հանդեպ»:

([Armenia] Ambigua gens ea antiquitus hominum ingeniis et situ terrarum, quoniam nostris provinciis late praetenta penitus ad Medos porrigitur; maximisque imperiis interiecti et saepius discordes sunt, adversus Romanus odio et in Parthum invidia.¹⁸)

Տակիտոսի այս տարողունակ տեսակետը մեկնաբանելուց առաջ, ավելորդ չենք համարում մեջբերել նաև դրա թարգմանությունները հայերենի (Պ. Ստանիկյան, 1941 թ.), անգլերենի, ֆրանսերենի և ռուսերենի.

Ստանիկյանի թարգմ.

«Այս ժողովուրդը հնուց ի վեր տատանվող է թե՛ մարդկանց բնավորության և թե՛ երկրների տեղադրության պատճառով: Այդ երկիրը լայնորեն սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու մինչև Մեդերի աշխարհը: Մեծագույն պետությունների միջև է տեղավորված Հայաստանը և շատ հաճախ հայերը երկպառակ են, որովհետև նրանք թե՛ ատում են հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին»¹⁹:

Անգլերեն թարգմ.

¹⁸ Լատիներեն բնագրից հայերեն թարգմանությունը կատարել ենք պատմ. գիտ. թեկնածու Գոհար Մուրադյանի պատրաստական օժանդակությամբ, որի համար շնորհակալ ենք. տե՛ս Tacitus, *Annales, op. cit.*, pp. 472, 474.

¹⁹ Տե՛ս Կ. Տակիտոս, *Օտար աղբյուրները հայերի մասին* 3 (Լատինական աղբյուրներ), Երևան, 1941, էջ 15:

«Armenia... from the earliest period, has owned a national character and a geographical situation of equal ambiguity, since with a wide extent of frontier conterminous with our own provinces, it stretches inland right up to Media; so that the Armenians lie interposed between two vast empires, with which, as they detest Rome and envy the Parthian, they are too frequently at variance».²⁰

Ֆրանսերեն թարգմ.

«...en Arménie. De tout temps la foi de ce royaume fut douteuse, á cause du caractere des habitants et de la situation du pays, qui borde une grande étendue de nos provinces, et de l'autre côté s'enfonce jusqu'aux Medes. Placés entre deux grands empires, les Arméniens sont presque toujours en querelle, avec les Romains par haine, par jalousie avec les Parthes».²¹

Ռուսերեն թարգմ.

«Этот народ испокон века был ненадежен и вследствие своего душевного склада, и вследствие занимаемого им положения, так как земли его гранича на большом протяжении с нашими провинциями, глубоко вклиниваются во владения мидян; находясь между могущественнейшими державами, армяне по этой причине часто вступают с ними в раздоры, ненавидя римлян и завидуя парфянам».²²

Այս թարգմանությունների կապակցությամբ նշենք երկու կարևոր հանգամանք:

Թարգմանիչների մեծ մասը ընտրել է «նախանձում են պարթևներին» և ոչ թե «նախանձախնդիր են պարթևների նկատմամբ» ձևը: Սակայն «նախանձը» (invidia) հունա-հռոմեական, ինչպես նաև հայկական մատենագրության մեջ ունեցել է նաև «նախանձախնդրության» իմաստ, որն էլ հենց միակ տրամաբանականն է Տակիտոսի այս հաղորդման մեջ: Հետևաբար, ամենաճշգրիտը ֆրանսերեն թարգմանությունն է, քանի որ այն գործածում է «jalousie» բառը, որ ունի և՛ նախանձի, և՛ նախանձախնդրության

²⁰ Tacitus, *Annales*, op. cit., II, 56, pp. 472, 474.

²¹ Tacite, *Œuvres Complètes*, op.cit., p. 79.

²² Корнелий Тацит. *Сочинения в двух томах. Анналы*. Книга вторая, 56, с. 69.

իմաստները: Ուրեմն, հայերը ոչ թե նախանձում էին պարթևներին, այլ նախանձախնդիր էին, այսինքն՝ ձգտում էին հավասարազոր լինել ու որևէ հարցում չզիջել նրանց, մրցակցում էին նրանց հետ: «Նախանձախնդրության» իմաստով «նախանձն» օգտագործում է նաև Փավստոսը հետևյալ դրվագում. «Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ եւ բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց»²³: Հասկանալի է, որ Մուշեղ սպարապետին գովերգող այս հատվածում Փավստոսը նկատի ունի նախանձախնդրությունը, այլ ոչ նախանձը:

Ամենագարձանալին, սակայն, այն է, որ այս թանկարժեք հաղորդման իմաստը հիմնավորապես ազավաղվել է միայն Պ. Սոտնիկյանի կատարած հայերեն թարգմանության մեջ, որտեղ հայերի պատերազմներն ու ընդհարումները պարթևների և հռոմեացիների հետ ներկայացվում են որպես միջհայկական գժտություններ՝ «հաճախ հայերը երկպառակ են»: Այս կոպտորեն սխալ թարգմանությունը, ցավոք, անցել և վերարտագրվել է Հայաստանում լույս տեսած այլ ակադեմիական և համալսարանական հրատարակությունների մեջ²⁴: Ակներև է, որ Սոտնիկյանը զոհ է գնացել հայ հասարակական մտայնության մեջ տարածված, օտար ուժերի կողմից հաճախ խրախուսվող այն թյուր տեսակետին, ըստ որի՝ հայերն իբր միշտ անմիաբան են եղել և «իրար կոկորդ կրծել» (այսպիսի գնահատականներ հաճախ են տրվում թուրքական և արևմտյան պատմագրության մեջ)²⁵:

Այժմ անդրադառնանք մոտավորապես 500 տարի անց մեկ այլ դրսեցու՝ հայերի ազգային բնավորությանը տված նմանատիպ ու նմանապես կողմնակալ մի գնահատականին: Այս անգամ, սակայն, գնահատական տվողը ոչ թե Տակիտոսի պես կայսրապետության շահերի ազդեցիկ մի արտահայտիչ է սոսկ, այլ արդեն ինքը՝

²³ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Ե, գլ. Բ:

²⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հտ. Ա (1971), էջ 708: Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հտ. 1, էջ 317:

²⁵ Այս խնդրի մասին մի այլ առիթով արդեն խոսել ենք (տե՛ս Ա. Այվազյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, էջ 205-208):

Բյուզանդիայի կայսրը: 7-րդ դարի հայ հեղինակ Սեբեոսի համա-
ձայն, Բյուզանդիայի Մորիկ կայսրը (582-602 թթ.) Պարսից Խոսրով
Բ թագավորին է դիմում՝ «ամբողջ Հայաստանի իշխանների և նրանց
զորքերի մասին» հատուկ ուղերձով, որը հայ պատմիչը արդարացի-
որեն որակում է իբրև մեղադրական վարկաբեկիչ գրույթուն՝ «գիր
ամբաստանութեան»: Մորիկի հիմնական ասածն այս էր.

«Ազգ մի ինքնակամ և անհնազանդ կա մեր մեջտեղում
և անընդհատ ըմբոստանում է: Ուստի ե՛կ,- ասում է,- ես [Հա-
յաստանի] իմ մասում եղածներին (իմա՝ հայ զինվորակա-
նությունը - Ա.Ա.) ժողովեմ և Թրակիայում հավաքեմ, իսկ դու
քո մասում եղածներին ժողովիր և հրամայիր Արևելք տանել:
Որովհետև եթե զոհվեն, ապա մեր թշնամիները կմեռնեն, ու
եթե սպանեն, ապա մեր թշնամիներին կսպանեն, իսկ մենք՝
կապրենք խաղաղության մեջ: Որովհետև եթե դրանք իրենց
երկրում լինեն, մենք հանգիստ չենք ունենա»:

Եվ այս երկուսը համաձայնության եկան»:

[Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մարիկ հրա-
մայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստանութեան
վասն իշխանացն ամենայն Հայաստանեայց եւ զարաց իւրե-
անց. «Ազգ մի խոտոր եւ անհնազանդ են, ասե, կան ի միջի
մերում եւ պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, ես զիմս ժողովեմ եւ ի
Թրակէ գումարեմ. եւ դու զքոյդ ժողովէ եւ հրամայէ յԱրևելս
տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին, եւ եթէ սպանա-
նեն՝ զթշնամիս սպանանեն. եւ մեք կեցցուք խաղաղութեամբ:
Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի»:
Միաբանեցան երկոքին:]²⁶

²⁶ Պատմութիւն Սեբեոսի: Աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի: Երևան, ԳԱ
հրատ., 1979, էջ 86: Հմմտ. այս հատվածի ուսերեն և անգլերեն թարգմանու-
թյունների և արդի հայերենի փոխադրությունների հետ. – *История императора
Иракла*. Сочинение епископа Себеоса, писателя VII века. Перевод с армянского
К. Патканяна. СПб, 1862, с. 52. *История епископа Себеоса*. Перевел с
четвертого исправленного армянского издания Ст. Малхасянц. Издание
армфана, Ереван, 1939, с. 45. **Н. Адонц**, *Армения в эпоху Юстиниана:
Политическое состояние на основе нахарарского строя*. СПб, 1908, с. 206-207;

Այս գրույթյան կամ առնվազն նրանում նկարագրված մտադրույթունների իրական լինելը հաստատվում է նրանով, որ հենց այդ ժամանակ էր, որ Բյուզանդիան և Պարսկաստանը, նպատակ ունենալով Հայաստանը վերջնականապես ծնկի բերել և հպատակեցնել, սկսեցին հայկական զինված ուժերը Հայաստանից դուրս հանելու ծրագրված քաղաքականություն վարել²⁷: Եթե նույնիսկ ընդունենք, որ Մորիկի այս համառոտաբար վերարտադրված գրույթունը Սեբեոսը ձեռքի տակ չի ունեցել, ապա, միևնույն է, նա ճշգրիտ արձանագրել է այդ դարաշրջանի բյուզանդական քաղաքականության բուն էությունը, որ գաղտնիք չէր ժամանակակիցների համար:

Հայերի՝ նոր տերմինով ասած, «անկախական» արմատացած տրամադրվածությունն է փաստում նաև սպարապետ Վասակ Մամիկոնյանը (?-368 թթ.), որն ուխտագրծորեն գերվելով և հարցաքննության ենթարկվելով պարսից Շապուհ թագավորի կողմից, համարձակ ասում է, թե քանի դեռ ինքն ազատության մեջ էր՝

«Ես հսկա էի. մի ոտքս մի լեռան վրա էր, մյուս ոտքս՝ մի այլ լեռան վրա: Երբ աչ ոտքիս վրա էի հենվում, աչ լեռն էի գետին կոխում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետին կոխում... Այդ երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց թագավորը»:

Nicholas Adontz, *Armenia in the Period of Justinian: The Political Conditions based on the NAXARAR System*. Translated with partial revisions, a bibliographical note and appendices by Nina G. Garsoian. (Lisbon: Calouste Gulbenkian Foundation), p. 161. **Նիկողայոս Ադոնց**, *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի*: Երևան, «Հայաստան», 1987, էջ 235 (այստեղ մի վրիպակ կա, այն է՝ «ապրում են մեր մեջտեղում» թարգմանված է «ապրում են մեր մեջ»): *Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա*. հտ. 1, էջ 678:

Հետաքրքիր է, որ հայերի ըմբոստ ազգային խառնվածքի մասին խոսել են նաև արաբ հեղինակները, որոնք «սպիտակ ստրուկների մեջ վատագույնը» համարում էին հայ գերիներին. - տե՛ս **А. Мей**, *Мусульманский ренессанс*. Москва, «Наука», 1966, с. 138, 140-141.

²⁷ Տե՛ս *Պատմութիւն Սեբեոսի* (1979 թ. հրատ.), հատկ. գլ. ԺԵ, ԺԸ:

[*Էս սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, եւ միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր: Յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի, որժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի... Լերինքն երկուք, մի դու էիր, եւ մի՛ թագաւորն Յունաց:*]²⁸

Տակիտոսի ու Մորիկի՝ հայերի ազգային բնավորութեանը սոված գնահատականները գրանցվել են այն ժամանակներում, երբ Հռոմեական (ավելի ուշ՝ Բյուզանդական) և Իրանական կայսրութիւնները վարում էին Հայաստանը հպատակեցնելու կամ միմյանց միջև բաժանելու համատեղ քաղաքականութիւն: Ուստի և՛ միանգամայն հասկանալի են դառնում հայերի հակաբյուզանդական ու հակաիրանական զանգվածային տրամադրութիւնները: Ավելին՝ Տակիտոսի և Մորիկի այս գնահատականները, ցուցադրելով հանդերձ հին ժամանակներում հայերի ձեռքբերած ազգային-մշակութային կուռ համախմբվածութիւնը, միաժամանակ հրաշալիորեն ապացուցում են սոցիալական հոգեբանութեան մեջ հայտնի, այսպէս կոչված, ֆրոուտրացիա-ագրեսիա-տեղափոխում տեսութեան այն կարևոր միջմշակութային բանաձևը, ըստ որի՝ «որքան մեծ է խմբի ներքին կոորդինացիան ու կարգապահութիւնը, ճիշտ նույնքանով աճում է դրսեցիների թշնամութիւնը» [այդ խմբի և նրա

²⁸ **Փաւստոս Բուզանդ.** *Պատմութիւն Հայոց*, Դ, ԾԴ: Մալխասյանցի թարգմ. (1968 թ. հրատ.), էջ 215: Հայերի անկախական այսպիսի տրամադրութիւնների առթիվ կարելի է հիշել նաև Անանունի ասածը Գագիկ թագավորի մասին.

«Լա բաբելացի, մարաց, պարսից, բյուզանդացի ու բարբարոս բռնավորների սրտերում կրակ դարձած և հարաշարժ բևեռ էր...»

...և նրա հզոր զորության ահը շրջապատել էր ամբողջ Հայաստանը, և ինչպէս պղնձե պարիսպը, անմերձենալի էր պահում թշնամիների երկյուղից ու գաղտնաձիգ նետերից:

[...Լա ի սիրտս բռնաւորաց Բաբելացոց, Մարաց եւ Պարսից, Յունաց եւ բարբարոսաց՝ հրացեալ եւ յարաշարժ բեւեռ...]

...եւ առ հզօր գօրութեան նորա շրջապատեալ զբոլոր Հայաստանեօք՝ իբրեւ զպարիսպ պղնձի՝ անմերձենալի պահէր յերկիւղէ եւ ի գաղտաձիգ նետից թշնամեաց:]

Թովմա Արծրունի և Անանուն. *Պատմութիւն Արծրունյաց Տան* (Երևան, 1985), էջ 472-473:

անդամների նկատմամբ] ("the more ingroup coordination and discipline, the more outgroup hostility")²⁹ :

Եվ իսկապես, հայերի էթնիկական համախմբվածությունն ու առանձնահատկությունն առաջացնում էին օտար կայսրապաշտական ուժերի թշնամանքն ու ատելությունը: Բյուզանդագետ Ա. Կաթրանի կարծիքով, հենց հայերի էթնիկական, ներառյալ կենցաղային և դավանական առանձնահատկություններն էին պատճառը, որ բյուզանդական բնակչությունը հակակրանքով էր վերաբերվում նրանց: Այսպես, «12-րդ դարի ամենակուլտուրական բյուզանդացիներից մեկը՝ Սորունի միտրոպոլիտ Եվստաղը, խոսում էր նրանց (իմա՝ հայերի) մասին ատելությամբ, իսկ նրա ժամանակակիցը, տաղանդավոր գրող Նիկոլայ Մեսարիտը, բնորոշում էր նրանց «գաղտնապահ», «շողոքորթ», «նենգ» մակդիրներով»³⁰ :

* * *

«Սկսան... գումարել ի կողմանս ի գաւառս, ի տեղիս տեղիս Հայաստան ազգին, դասս դասս գաշակերտեալսն ճշմարտութեանն»³¹ (Կորյուն):

Հայոց հին գրականության մեջ արձանագրվել են ազգի, հայրենիքի և հայրենասիրության գաղափարներին վերաբերող լեզվաբանային եզրակի տվյալներ, որոնք օգնում են առավել հստակեցնել քննվող երևույթները:

Փավստոս Բուզանդը հայոց միացյալ բանակը կոչում է և՛ «Հայոց գունդ», և՛, երկիցս, «Հայաստան գունդ» անվամբ՝ «Ապա գառաջեօք անգանէր Վասակ իւրով Հայաստան գնդաւն» (Դ գլխաբացում, 39), «գարմացեալ եմ ես ընդ մտերմութիւն միամտութե-

²⁹ Տե՛ս Robert A. LeVine and Donald T. Campbell, *Ethnocentrism: Theories of Conflict, Ethnic Attitudes, and Group Behavior* (U.S.A.-Canada: John Wiley & Sons, Inc., 1972), pp. 124-125.

³⁰ Տե՛ս А. П. Каждан. *Армяне в составе господствующего класса Византийской империи в 11-12 вв.* (Ереван: Изд. АН АССР, 1975), с. 140-141.

³¹ Կորյուն, *Վարք Մաշտոցի*. Աշխ. Մ. Արեղյանի, Երևան, 1941, էջ 58:

անն Հայաստան գնդին ընդ տիրասիրութեանն» (Ե դպրութիւն, 5): Երկու դեպքում էլ «Հայոց գունդն» ու «Հայաստան գունդը» հստակ վերաբերում են հայոց միացյալ բանակի ամբողջութեանը³²:

Խորենացու մոտ ևս պահպանվել է հայոց միացյալ բանակի «Հայաստան» անվանումը, ահա՝ «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն Հայաստանօք իջեալ ի դաշտն Գարգարացոց՝ պատահէ հիւսիսականացն ճակատու պատերազմի» (Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. 26): «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»-նի հեղինակները փորձել են «Հայաստանօք»-ը բացատրել որպէս «հայաստանեօքն կամ Հայաստան ազգօք» (հտ. Բ, էջ 50): «Հայաստանօք»-ը նույնպէս է հասկացել նաև Ռ. Թոմսոնը և անգլերէն թարգմանել «բոլոր հայերի հետ» իմաստով՝ "King Trdat with all the Armenians descended into the plain of Gargar and met the northern [peoples] in battle" (*History of the Armenians*, p. 236): Սակայն, դիպաշարից պարզ է, որ Խորենացին խոսում է ոչ թէ Տրդատի հետ եղած բոլոր հայերի մասին (ամեն ինչից զատ, օտար բանակի դեմ կռվելու նպատակով ամբողջ հայ ժողովուրդը չպիտի և չէր էլ կարող իր թագավորի հետ միասին ռազմական արագ տեղաշարժեր կատարել), այլ ընդամենն ամբողջ հայկական զորքի մասին: Սա ճիշտ են ընկալել հայերենի և ռուսերենի թարգմանիչները, սակայն չեն նկատել հայոց միացյալ բանակի ունեցած «Հայաստան» հատուկ անվան գոյութիւնը. Ս. Մախասյանցը թարգմանել է՝ «Իսկ Տրդատ թագավորը Հայաստանի բոլոր (զորքերով) գարգարացոց դաշտն իջնելով հանդիպում է հյուսիսականներին և ճակատամարտ է տալիս», իսկ Գ. Սարգսյանը՝ «Царь Трдат, спустившись со всем армянским (воинством) на равнину гаргарейцев, встречается в сражении с северянами»³³:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Արշակունյաց ժամանակաշրջանում, գուցէ նաև ավելի վաղ և ուշ շրջաններում, հայոց միացյալ բանակն ունեցել է երկու հոմանիշային անվանում՝ «Հա-

³² Հմմտ. Փավստոս Բուզանդ, Գ դպրութիւն, 7, 8. Դ դպրութիւն, 3, 4. Ե դպրութիւն, 2, 4, 5: Տե՛ս նաև Ա. Այվազյան, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 202-203:

³³ Мовсес Хоренаци, *История Армении*. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван, Изд. «Айастан», 1990, с. 130.

յոց գունդ» և «Հայաստան գունդ» կամ, համառոտաբար, «Հայաստան»: Առաջին անունն ընդգծում էր բոլոր հայերի միասնականությունն ու ազգային համերաշխությունը, երկրորդը՝ շեշտում նրանց ամրագույն կապվածությունը Հայաստան աշխարհին, երկրին և թագավորությանը:

Եվս մեկ խոսույն փաստ. Կորյունը երկիրս օգտագործում է Հայաստան ազգ եզրը³⁴: Հայաստան ազգ հանդիպում է նաև Ճառնտիրներում, Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնության մեջ³⁵: Այս կապակցությամբ Ա. Մարտիրոսյանը մի սեղմ, բայց դիպուկ դիտողություն է արել. «Հայաստան ազգ: Երկիրը ազգ է»³⁶: Ավելացնենք՝ Հայաստանի վերաբերյալ Կորյունի գործածած Հայաստան ազգ բառեզրը ոչ այլ ինչ է, քան եվրոպայում վերջին հարյուրամյակում լայն գործածում ստացած «ազգային պետություն» (nation-state) տերմին-հասկացության հոմանիշ, որ գալիս է վերջնականապես հաստատելու Հին Հայաստանի՝ ազգային պետություն լինելը:

Ավելին՝ Հայաստան ազգ տերմինի արձանագրումը 5-րդ դարում (տերմինն ինքը կարող էր առաջացած լինել ավելի վաղ) մեկ անգամ ևս վկայում է, որ առնվազն այդ ժամանակներում հայերի ազգային ինքնագիտակցության և մշակութային զարգացածության բարձր մակարդակը առաջացրել էր ինքնաճանաչման սուր պահանջ ու նաև, բարեբախտաբար, այդ պահանջին պատշաճ ազգային հասարակական-քաղաքական մտքի խորագնա պրպտումներ:

Վենետիկյան պրոֆեսոր Լ. Զեքիյանը, քննելով Մովսես Խորենացու երկի գաղափարաբանական ծալքերը, հայոց Պատմահորն անվանում է՝ «հիմնադիրներեն մեկը "ազգ" գաղափարին աշխարհայնական (laïque) հղացումին, ըմբռնված՝ իբր պատմական..., լեզվական ու մշակութային հիմքային միություննե մը բխող հասարա-

³⁴ Կորյուն, Վարդ Մաշտոցի, Աշխ. Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941, էջ 42, 58:

³⁵ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ, էջ 30: Ա. Մարտիրոսյան, «Ազգ» և ազգային որոշիչ, Աշտանակ (հայագիտական պարբերագիրք), Բ, Երևան, 1998, էջ 11:

³⁶ Նույն տեղում:

կուլթյուն մը»³⁷: Արդարև՝ Մովսես Խորենացու «Մեծ Հայաստանի Պատմությունը»³⁸ գերհագեցած է հայրենասիրության և նույնիսկ ազգայնականության գրեթե մերօրյա իմաստով ու գաղափարներով: Սակայն, Լ. Զեքիյանի հարցադրման ուղղությունը, մեր կարծիքով, փոքր-ինչ այլ է, քանի որ այն պոկում, առանձնացնում է Խորենացուն ժամանակի հայկական միջավայրից: Խորենացին միայնակ, միջավայրից կտրված չի եղել, երբ «հղացել է» հայ ազգի՝ որպես պատմականորեն առաջացած եզակի քաղաքակրթության, գաղափարը: Ճիշտ հակառակը՝ այդ ժամանակների ընդհանուր միջավայրն էր ծնել հայ ազգի գաղափարը: Պատմահայրը պարզապես արձանագրել է Հայաստանի ժամանակակից էթնիկական-հասարակական իրականությունը՝ ըմբռնելով ու գործածելով ազգ հասկացությունը համաձայն 5-րդ դարի հայ սոցիալ-քաղաքական մտքում գերիշխող գաղափարների:

Մասնավորաբար, իր «Մեծ Հայաստանի Պատմությունը» ստեղծելիս, Մովսես Խորենացու գերագույն նպատակն է եղել հայկական ինքնության՝ հայրենասիրական-ազգայնական տարրերի

³⁷ Տե՛ս **Լևոն Զեքիյան**, Նորից Մովսես Խորենացու «Պատմության» մասին. - *Պատմա-բանասիրական հանդես*, 1993, 1-2 (137-138), էջ 27-34 (էջ 33-ում): Զեքիյանն անդրադարձել է այս հարցերին նաև իտալերենով և ֆրանսերենով լույս տեսած իր ուսումնասիրությունների մեջ. տե՛ս - **Levon Zekian**, "Ellenismo, ebraismo e christianesimo in Mose di Corene (Movsés Xorenac'i): Elementi per una teologia dell'etnia [Հելլենիզմը, հուդայականությունը և քրիստոնեությունը Մովսես Խորենացու մոտ. Տվյալներ ազգի աստվածաբանության համար]," *Augustinianum*, XXVIII (1988), XVI Incontra di Studiosi dell' Antichita Christiana, Cristianesimo e Giudaismo: Eredit'a e confronti, 7-9 maggio 1987, pp. 381-390; "Eredita classica e componenti ebraiche in Mose di Corene (Movses Xorenac'i): La sintesi armena in cerca di nuove frontiere della "Civlita" e dell'etnia [Կլասիկ ժառանգությունը և հրեական բաղադրիչները Մովսես Խորենացու մոտ. Քաղաքակրթության և ազգի նոր սահմանների վերաբերյալ հայկական սինթեզը]," in *Autori Classici in Lingue del Medio e Vicino Oriente* (Rome, 1993); "L' "ideologie" nationale de Movses Xorenac'i et sa conception de l'histoire," [Մովսես Խորենացու ազգային «գաղափարախոսությունը» և պատմության կոնցեպցիան]. - *Հանդես Ամսօրեայ* 1987, No. 101, էջ 470-485:

³⁸ Խորենացու երկի խորագիրը ճշտված է հետևյալ հոդվածում. - **Ա. Մ. Մաթևոսյան**. Մովսես Խորենացու պատմագրքի խորագիրը և ավարտման թվականը. - «*Էջմիածին*», 1991, Թ-Ժ, էջ 85-93:

հետագա զարգացումն ու հղկումը: Ինչպես ասված է Խորենացու հայտնի խոսքում՝

«Որովհետև թեպետև փոքր ածու ենք՝ և՛ թվով խիստ սահմանափակ, և՛ զորութեամբ տկար, և՛ շատ անգամ այլ թագավորությունների կողմից նվաճված, սակայն մեր աշխարհում ևս կատարվել են քաջութեան բազում գործեր, որոնք արժանի են գրավոր հիշատակի»:

[Ձի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, եւ ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի:]³⁹

Հայերի ազգային սուր ինքնագիտակցությունը բացահայտող բազմաթիվ այլ արտահայտությունների ու բնորոշումների մեջ ա-

³⁹ **Մովսէս Խորենացի.** *Պատմութիւն Հայոց:* Քննական բնագիր (1991 թ.) Գիրք Ա, գլուխ Գ, էջ 10: Այս խիստ իմաստալից պարբերության Խորեն վարդապետ Ստեփանէի ու նրան այս հատվածում հիմնականում կրկնած Մալխասյանցի աշխարհաբար ընթերցումը թերի է և՛ ոճապես, և՛ ճշգրտության առումով, ահավաքիկ՝ «Որովհետև թեպէտ մենք փոքր ածու ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհումն էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի» (տե՛ս **Մովսէս Խորենացի.** *Հայկական պատմութիւն:* Աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խորեն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ: ՍՊԲ, 1889, էջ 7-8, ՍՊԲ, 1897, էջ 5-6: **Մովսէս Խորենացի.** *Պատմություն հայոց:* Թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ դոկտ. Ստ. Մալխասյանցի: Երևան, «Հայպետհրատ», 1940, էջ 6): Խորենացու ընտիր գրաբարով ու փութաջան ոճավորմամբ հյուսված այս խոսքը անհարկիորեն հասարակացվել է, ձեռք բերել խոսակցական-գեղջկական երանգներ, կարծես Խորենացին ոչ թե մեծ գիտնական էր, այլ մի հասարակ գեղջուկ: Այսպես՝ Խորենացու «յոյժ»-ը, «յոլով անգամ»-ը և «բազում»-ը բոլորն էլ թարգմանվել են միևնույն «շատ» բառով, «ի մերում աշխարհիս»-ը վերածվել է «մեր աշխարհումն էլ» ոչ գրական, բարբառային ձևի: Ինչ վերաբերում է ճշգրտությանը, ապա վրիպմամբ բաց է թողնված «եւ զօրութեամբ տկար» արտահայտությունը: Մալխասյանցի թարգմանության ետմահու հրատարակություններից երկուսում այս վերջին վրիպումը շտկված է («Հայպետհրատ», 1961, էջ 82-83 և «Հաստատան» հրատ., 1968, էջ 70), սակայն նույն սխալը վերըստին կրկնված է ԵՊՀ 1981 հրատարակության մեջ (էջ 96) և հոբելյանական 1990 թ. հրատարակության մեջ (էջ 8):

ուանձնանում է Մովսես Խորենացու հետևյալ խոսքը հայոց թագավոր Տիգրան Երվանդյանի մասին.

«Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջութիւնն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ»⁴⁰ :

[Արանց կացեալ գլուխ եւ արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, եւ զընդ լծով կացեալս՝ լծադիրս եւ հարկապահանջս կացոյց բազմաց...]⁴¹

Ավելին՝ առաջնորդվելով հայրենասիրական-ազգայնական կուռ գաղափարաբանությամբ, Խորենացին անգամ չի վարանում իր ժամանակների համար չափազանց հանդուգն մի արարքից՝ Աստվածաշունչը քննադատելուց, քանի որ, ըստ նրա՝

«Սուրբ Գիրքը յուրայիններին (իմա՝ հրեաներին) գատելով իբրև իր սեփական ազգ՝ մյուսներինը [ժամանակագրության կազմումը] լքեց, իբրև արհամարհելի և իր կողմից նշանակվելու անարժան»⁴² :

[զի աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն եւ իւրոց անարժան կարգելոց բանից]⁴³

Սակայն, ինչպես վերն ասվեց, Խորենացին հայ հին ազգայնականության միակ արտահայտիչը չէր: Ամենևին՝ նրան նախորդած, նրան ժամանակակից և նրան հաջորդած խոշորագույն հայ հեղինակները մտածել և ստեղծագործել են՝ առաջնորդվելով ընդ-

⁴⁰ Տե՛ս Մովսես Խորենացի. *Պատմություն հայոց*. Թարգմ. Ստ. Մալխասյանցի, նշվ. աշխ., էջ 111:

⁴¹ Մովսես Խորենացի. *Պատմություն Հայոց*. Ա, ԻԳ: Այս դրվագի վերլուծությունը տե՛ս Գագիկ Սարգսյան, «Ինքնորոշում և կողմնորոշում. Մեծ Հայքի վերելքի շրջան». - *Ինքնություն*, Ա, Երևան, «Կամար», 1995, էջ 90-91. հմմտ. Ա. Այվազյան, *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 143-146:

⁴² Մովսես Խորենացի. *Պատմություն հայոց*. Թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 75:

⁴³ Մովսես Խորենացի. *Պատմություն Հայոց*, Ա, Գլ. Ե:

հանուր նույն հայրենասիրական գաղափարաբանությամբ: Ուշագրավ է, որ հայ մատենագրության մեջ ազգ տերմինը կիրառված է բոլոր հայերի նկատմամբ այնպես, ինչպես հասկանում էր Խորենացին՝ իբրև մարդկանց մի ինքնագոտ անփոփոխ խումբ: Ամենից հաճախ գործածվում էր, թերևս, «ազգս հայոց» բանաձևը, կամ հայկական ծագումնաբանական ավանդույթի համաձայն՝ «սեոս Հայկայ», «ազգս Հայկազյան» կամ «Քորգոմյան» կամ «Հաբեթյան» կամ նույնիսկ «Աբրահամյան»⁴⁴ և այլ նմանատիպ բանաձևեր:

Ահավաստիկ ընդամենը երկու քաղվածք Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից».

1) Պարսից Շապուհ արքայի դրդապատճառների մասին.
«...կամեցավ թշնամություն կատարել հայոց ազգի, աշխարհի և թագավորության դեմ...»

[կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց եւ թագաւորութեանն]⁴⁵

2) Այն ժամանակահատվածի մասին, երբ հայերը կաթողիկոս չունեին.

«...և այդ կամակոր ազգն առանց Աստծու [աննպատակ] թրև էր գալիս Հայոց իր տանն ու երկրում...»

[...եւ առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին:]⁴⁶

⁴⁴ Տե՛ս, օրինակ, **Ղազար վրդ. Զահկեցի**, *Չրախտ ցանկալի*. Կ. Պոլիս, 1733, էջ 670-678 (677-ին). **Ստեփաննոս Օրբելեան**, *Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց*. Կ. Պոլիս, 1756 (գրվել է 1302 թ.), էջ 4-5:

⁴⁵ **Փավստոս Բուզանդ**. *Պատմութիւն Հայոց*, Դ, ԾԵ: Մալխասյանցը և Գևորգյանը Փավստոսի «ազգին Հայոց»ը վերածել են «Արշակունյաց տոհմին», որ այս դեպքում հեղինակի ասածի բոլորովին անհիմն աղճատում է. հմմտ. Մալխասյանցի թարգմ. (1968), էջ 220. **Փավոստ Բուզանդ**, *История Армении*. Ереван, 1953, с. 134 (захотел надругаться над родом [Аршакуни], над армянской страной и царством): Գարսոյանի թարգմանությունն ավելի հաջող է, թեև ոչ ճշգրիտ. «կամեցավ անպատվել Հայոց աշխարհի և թագավորության ազգը» (...[King Shapuh] wished to insult the race of the realm and kingdom of Armenia);" *The Epic Histories*, op. cit., p. 176.

⁴⁶ **Փավստոս Բուզանդ**. *Պատմութիւն Հայոց*, Գ, գլ. ԺԳ: Փավստոսի «շրջէին յաշխարհի»-նը պետք է հասկանալ որպես «աննպատակ ապրել», «քարշ գալ»,

Այսպիսով, վերը կատարված քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ամենաուշը Ք.ա. վերջին և Ք.հ. առաջին դարերում արդեն իրականություն է եղել հայկական ազգային պետությունը, ընդ որում այն իմաստով, որը եվրոպայում առաջ եկավ միայն 16-20-րդ դարերում: Այլ կերպ ասած՝ Ք.ա. վերջին - Ք.հ. առաջին դարերում արդեն կար, հին ժամանակներին հատուկ որոշակի առանձնահատկություններով հանդերձ, կատարելապես ինքնագիտակից հայ ազգ, որը, 16-20-րդ դարերում գոյություն ունեցած եվրոպական միշարք ազգերի նման, «կառավարվում էր այնպիսի մի պետության կողմից, որի իշխանությունը համընկնում է ազգի սահմանների հետ»: Փոքր-ինչ բառափոխելով սոցիոլոգիական մեթոդյա մի այլ համապատասխան բանաձև, կարելի է ասել, որ հին հայկական պետության սահմանները ճշգրիտ համընկել են նրա «հոգեբանական սահմաններին», ասել է թե՛ պատմության ընթացքում էթնիկ խմբի կուտակած եզակի փորձին և կոլեկտիվ հիշողություններին⁴⁷:

Վերը բերված նյութը թույլ է տալիս կատարել ևս մեկ ընդհանրացնող եզրակացություն: Հայկական ինքնության առաջին և ամենակարծր շերտերը կանգնեցրել և հետագայում էլ շարունակաբար ամրացրել են հայոց լեզուն և հայկական պետությունը, հատկապես՝ վերջինիս զինված ուժերը: Հայկական հստակ ինքնությունն արդեն կայացած էր առնվազն Ք. ա. 1-ին հազարամյակում: Ավելի ուշ հայերի ձեռք բերած մշակութային երկու գերնվաճում, որոնք հաճախ են վկայակոչվում որպես հայոց ինքնության հիմնաքարեր, այն է՝ քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն 301 թվականին և հայկական այբուբենի ստեղծումը 405

«թրև գալ»: Առավել ճշգրիտ է թարգմանել Գևորգյանը. «и блуждали без бога по стране, - этот упрямый народ армянской страны (Фавстос Бузанд. История Армении, с. 28): Մալխայանցի թարգմանությունը հաջող չէ՝ «աշխարհում շրջում էին առանց Աստծու՝ Հայոց աշխարհի այդ կամակոր ազգը» (1968), էջ 91: Գարսոյանի թարգմանությունը ուղղակի շփոթեցնող է. «Հայոց երկրի տան կամակոր ազգը՝ առանց Աստծու շրջում էր թագավորության մեջ» (...the stubborn race of the house of the Armenian land wandered without God through the realm," - *The Epic Histories, op. cit.*, p. 84):

⁴⁷ Հնմտ. Lee E. Dutter, "Ethnic Political Behavior in the Soviet Union," *Journal of Conflict Resolution*, 1990, 34, no. 2 (June), pp. 311-334.

Թվականին⁴⁸ շափագանց արդյունավետ միջոց էին խթանելու համար արդեն իսկ հիմնավորապես ազգայնական հայկական քաղաքակրթության առաջխաղացումը:

⁴⁸ Այսպես, «Ամերիկյան հանրագիտարան»-ը գրում է, թե՛

«Քրիստոնեության ընդունումը օտարացրեց և մեկուսացրեց Հայաստանը գրադաշտական Իրանից, աղանդավորական (իմա՝ ոչ-քաղկեդոնական - Ա. Ա.) ուղու ընդունումը [451 թ.] միաժամանակ օտարացրեց և մեկուսացրեց Հայաստանը Հռոմից և Բյուզանդիայից, հայկական այբուբենի հայտնագործումը կտրեց Հայաստանի առանց այն էլ փխրուն մշակութային կապերը Արևմուտքի հետ (անհիմն տեսակետ է - Ա. Ա.), իսկ Վարդան Մամիկոնյանի նահատակությունը Հայաստանին տրամադրեց ազգային հերոս (կարծե՛ս, մինչ այդ հայերը ազգային հերոսներ չունեին - Ա.Ա.)՝ էլ ավելի ուժեղացնելով հայերի մեկուսացվածության, իրենց վրա հույսները դնելու և էթնոցենտրիզմի զգացումները: Այս բոլոր գործոնները միասին նպաստեցին ազգային ուժեղ ինքնագիտակցության զարգացմանը՝ Արևմտյան Եվրոպայում այդ երևույթի առաջացումից դարեր առաջ» (*The Encyclopedia Americana*. Intern-1 Ed., New York: Americana Corp., 1967, Vol. 2, p. 332):

«Բրիտանական նոր հանրագիտարան»-ը նույնպես խոսում է հին և միջին դարերում «ուժգնապես ինքնապաշտ հայ ժողովրդի... կատաղի անկախական ոգու» մասին՝ հանիրավի ավելացնելով, թե իբր «հայկական ազգայնականությունը միջազգային դիվանագիտության հոգին հանում էր նույնիսկ 19-րդ դարում» ["a fiercely independent spirit... [of] the strongly individualistic Armenian people;" "Armenian nationalism nettled international diplomacy even in the 19th century." - *The New Encyclopedia Britannica*. Macropedia (Fifteenth ed., Vol. 18, Chicago, 1984, pp. 1038, 1042): Այս վերջին գնահատականն իրականությունը զլխիվայր շուտ է տվել: Իրականում, 19-րդ դարում և հետագայում «միջազգային դիվանագիտությունն» էր անվերջ շահարկում հայերի ազգային-ազատագրական օրինական ձգտումները՝ բազմիցս խաբելով և դավաճանելով հայ ժողովրդին: Մեծ տերությունների այդպիսի քաղաքականությունը Հայոց Մեծ եղեռնի հիմնական պատճառներից էր:

ANCIENT ARMENIA AS A “NATION STATE”

Armen Aivazian

Summary

The study elaborates on the phenomenon of unusually early, actually the ancient emergence of Armenian identity and ethnonationalism.

In particular, the texts by ancient Roman and Armenian authors are examined regarding the concepts of Armenian nation and its “national character” (Tacitus). The symbolic functions and connotations of Armenian language and army are discussed. It is revealed that the united Armenian Army had a special designation of “Hayastan gund” (Army “Armenia”) as well as, concisely, “Hayastan” (Armenia).

It is demonstrated that the common perception of a stratified national population as essentially homogeneous, which forms “the basis of all nationalisms” (Liah Greenfeld), was functional in ancient and medieval Armenia centuries before its advent on the European scene.

The analysis concludes that the ancient Armenian nation-state was a historical reality as early as the first centuries BC/AD. In other words, there was the ancient – absolutely self-conscious – Armenian nation, which, similarly to many modern nations, was "governed by the state whose authority coincides with the boundaries of the nation." Physical boundaries of ancient Armenian state were in definite accord with its psychological boundaries, where the latter refers to uniquely shared historical experiences and collective memories of group.

The earliest and hardest "layers" of Armenian identity had been built by a durable continuous opposition to the outside forces conducted through the institutional channels – most notably by the armed forces – of ancient Armenian state. Furthermore, this process was effectively over centuries earlier than the adoption of Christianity in Armenia in 301 and the invention of Armenian alphabet in 405, two acts that are most usually cited as the prime fosterers of Armenian identity. These two cultural superevents occurred later just to be readily adapted to serve and promote further by then already basically nationalistic Armenian civilization.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ
ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ (4-5-ԻԿ ԴԱՐԵՐ) 8

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 47

Mother Tongue and the Origins of Nationalism 88

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՐՊԵՍ «ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» 99

Ստորագրված է տպագրության՝ 09.02.07:
Չափսը՝ 60X84 1/32: Թուղթ օֆսեթ '1:
Տառատեսակը՝ «AMM MairTcutcak»:
Տպագրությունը՝ օֆսեթ: 7.75 տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ 52.79.74, 52.79.47
Էլ. փոստ lusakn@rambler.ru